

ISSN 0321-0340

ԲԱՆԲԵՐ ՀԱՅՈՒՍՏԱՆԻ  
ԱՐԽԻՎԱՆԵՐԻ

№ 1 (101)  
2003

ԲԱՆԲԵՐ  
ՀԱՅՈՒՍՏԱՆԻ  
ԱՐԽԻՎԱՆԵՐԻ

*Գիտահանրամատչելի հանդես*

**Вестник архивов  
Армении**

*Научно-популярный журнал*

**Bulletin of Armenian  
Archives**

*Scientific practical journal*

1 (101)  
2003

---

ԵՐԵՎԱՆ

ЕРЕВАН

YEREVAN

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1960 ԹՎԱԿԱՆԻՑ

ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԻՆ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ

## ՄԵԾԱՐԳՈ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ

Ձեզ ենք ուղարկում Հանրապետության Հայագիտական-արխիվագիտական մտքի կարեւորագույն արվասիք Հանդիսացող «Բանբեր Հայաստանի արխիվների» Հանդեսը: Կարծում ենք, որ Ձեզ ոչ միայն կհետաքրքրեն Հանդեսում տեղ գտած նյութերը, այլև Դուք Հանդեսի խմբագրությանը կուղարկեք Ձեր՝ Համապատասխան արխիվային հիմքերով Հայագիտական աշխատությունները (հոդվածներ, փաստաթղթերի հավաքածուներ եւ այլն): Վսահ ենք, որ փոխադարձ համագործակցությամբ կնպաստենք Հայագիտական մտքի զարգացմանը թե՛ Հայրենիքում, եւ թե՛ Սփյուռքում:

Գլխավոր խմբագիր՝ Ամատունի Վիրաբյան

Խմբագրական խորհուրդ

Արմեն Բաղալյան (պատասխանատու քարտուղար),  
Ալբերտ Կիրիմյան, Ավագ Հարությունյան, Էմմա Հովսեփյան,  
Սոնյա Միրզոյան, Աշոտ Մելքոնյան, Արամ Սիմոնյան,  
Հարություն Ֆելեքյան

© Բանբեր Հայաստանի արխիվների, 2003թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
22 օգոստոսի 2002 թվականի N 1406-Ն

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ  
ՍՏԵՂՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ\*

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Զ-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարության ենթակայության կենտրոնական պետական արխիվները և պետական արխիվների սպասարկման ծառայությունը (այսուհետ՝ պետական հիմնարկներ)՝ համաձայն N 1 հավելվածի, միաձուլման ձևով վերակազմակերպել՝ Հայաստանի ազգային արխիվ՝ պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ պետական կազմակերպություն):

Պետական կազմակերպությունը պետական հիմնարկների իրավահաջորդն է՝ փոխանցման ակտին համապատասխան:

Դ. Երևան քաղաքի և Հայաստանի Հանրապետության մարզերի պետական արխիվներն ու պետական կազմակերպությունը վերակազմակերպել միացման ձևով՝ Երևան քաղաքի և Հայաստանի Հանրապետության մարզերի պետական արխիվները միացնելով պետական կազմակերպությանը՝ համաձայն N 2 հավելվածի:

Պետական կազմակերպությունը Երևան քաղաքի և Հայաստանի Հանրապետության մարզերի պետական արխիվների իրավահաջորդն է՝ փոխանցման ակտին համապատասխան:

Բ. Ստեղծել պետական կազմակերպության մասնաճյուղեր՝ համաձայն N 3 հավելվածի, և պետական կազմակերպության տարածքային ներկայացուցչություններ՝ համաձայն N 4 հավելվածի:

Ը. Հաստատել պետական կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն N 5 հավելվածի:

2. Պետական կազմակերպության գործունեության առարկան և նպատակներն են պատմաշակութային ժառանգության՝ Հայաստանի ազգային արխիվային ֆոնդի (հավաքածուի) փաստաթղթերի պահպանումը, հաշվառումը, համալրումը, օգտագործումը, հրատարակումը և հանրահաշակումը:

3. Պետական կազմակերպությունը, օրենքին կամ հիմնադիր որոշմանը համապատասխան, սահմանված կարգով իրականացնում է ձևափոխարկման գործունեության հետևյալ տեսակները՝ արխիվային վավերագրերի հրատարակություն, փաստաթղթերի պատճենների տրամադրում, ֆիզիկական և իրավաբանական անձանց արխիվադատական ծառայությունների մատուցում, փաստաթղթերի և գրականության վերականգնում ու կազմապատում, արխիվային տուփերի, արկղերի և արխիվային փաստաթղթերի ապահովագրական պատճենների պատրաստում:

4. Սահմանել, որ պետական հիմնարկների և Հայաստանի Հանրապետության կառավարության առնթվեր նախկին արխիվային գործի վարչության տնօրինության պետական սեփականություն հանդիսացող գույքը՝ բացառությամբ շենքերի, շինությունների, պատմաշակութային նշանակության և նվազագույն աշխատավարձի 10000-ապարիկից ավելի արժողություններ գույքի, 83359426 դրամ սկզբնական արժեքով սեփականության իրավունքով հանձնվում է պետական կազմակերպությանը:

րնական արժեքով սեփականության իրավունքով հանձնվում է պետական կազմակերպություններին:

Պետական կազմակերպության անձամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամացնել Հայաստանի Հանրապետության կառավարության առնթվեր նախկին արխիվային գործի վարչության հաշվեհաշվում հաշվառված՝ Երևանի Հ.Քոչարի 5 հասցեում գտնվող շենքերը և շինությունները՝ 8945 քառ. մետր մակերեսով, որոնց սկզբնական արժեքը 63365194 դրամ է, մաշվածությունը 15578097 դրամ, մնացորդային արժեքը՝ 47787097 դրամ, Մարշալ Բաղրամյան 59գ հասցեում գտնվող շենքը՝ 3700 քառ. մետր մակերեսով, որի սկզբնական արժեքը 21332850 դրամ է, մաշվածությունը՝ 7039840 դրամ, մնացորդային արժեքը՝ 14293010 դրամ, և Թրիկյան ինժեզու 25ա հասցեում գտնվող ստորգետնյա արխիվադարանը՝ 7200 քառ. մետր մակերեսով, որի սկզբնական արժեքը 182558530 դրամ է, մաշվածությունը՝ 76538432 դրամ, մնացորդային արժեքը՝ 106020098 դրամ, ինչպես նաև պատմաշակութային նշանակության և նվազագույն աշխատավարձի 10000-ապարիկից ավելի արժողություններ գույքը՝ դրանց նպատակային նշանակությանը համապատասխան օգտագործման պայմանով, Հայաստանի Հանրապետության պետական գույքի կառավարման նախարարության հետ կնքելով համապատասխան պայմանագրեր:

5. Պետական կազմակերպության կառավարման, ինչպես նաև «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «գ», «ե», «է» կետերով և 14-րդ հոդվածի նախատեղիքով լիազորությունները վերապահել Հայաստանի Հանրապետության մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարությանը:

6. Պետական կազմակերպության գործունեությունը ֆինանսավորել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. Պետական կազմակերպության ձևափոխարկման գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է նրա կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար՝ հետևյալ ուղղություններով՝

ա) պետական կազմակերպության աշխատանքային գործունեությունն ապահովող գույքի և նյութների ձեռքբերում:

բ) Հայաստանի ազգային արխիվային ֆոնդի (հավաքածուի) մասին տեղեկատվություն ներկայացնելը և հանրահաշակման միջոցառումների իրականացում (գովազդներ, հայտարարություններ, խորհրդակցություններ և այլն):

գ) արխիվային գործին վերաբերող գրականության ձեռքբերում, Հայաստանի ազգային արխիվային ֆոնդի (հավաքածուի) վերաբերող տեղեկությունները հասարակությանը մատչելի դարձնելու նպատակով գրքույկների և տեղեկագրերի հրատարակման կազմակերպում:

դ) պետական կազմակերպության աշխատողների կենսապահովման բարձրացում՝ պարգևատրումների, հավելվածարների և խրախուսման այլ ձևերով:

ե) պետական կազմակերպության տեխնիկական հագեցվածության բարելավում, այդ թվում՝ հիմնական միջոցների ձեռքբերում:

զ) պետական կազմակերպության աշխատողների մասնագիտական որակավորման բարձրացման նպատակով դասընթացների կազմակերպում և մասնակցություն կազմակերպված դասընթացներին:

է) լիազորված մարմնի կողմից և պետական կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ ուղղություններ:

8. Պետական կազմակերպության պետական գրանցման, կնիքների պատրաստան թույլտվության, ինչպես նաև կազմակերպությանը հանձնված գույքի գրանցման համար «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված վճարումներն իրականացնել Հայաստանի Հանրապետության 2003 թվականի պետական բյուջեից՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության 2003 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 12-րդ մասի:

9. Մինչև վերակազմակերպումը՝ պետական հիմնարկներին Հայաստանի Հանրապետության 2002 թվականի պետական բյուջեից տրամադրված հատկացումները ներառել վերակազմակերպումից հետո պետական կազմակերպության հետ

\* ՀՀ կառավարության 2003թ. մարտի 20-ի N 291-Ն և 2003թ. օգոստոսի 21-ի N 1063-Ն որոշումներով կառավարվող փոփոխություններով և լրացումներով:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը սահմանված կարգով կնքվելիք պայմանագրում:

10. Սահմանել, որ «Հայաստանի ազգային արխիվային ֆոնդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված պետական արխիվների համակարգն են կազմում սույն որոշմամբ վերակազմակերպված Հայաստանի ազգային արխիվը, նրա մասնաճյուղերը եւ ներկայացուցչությունները:

10. Սահմանել, որ պետական կազմակերպությունն ԱՊՀ անդամ պետությունների միջև 1992 թվականի հունիսի 6-ին եւ 1999 թվականի հունիսի 4-ին ստորագրած միջպետական համաձայնագրերի շրջանակներում համագործակցում է ԱՊՀ անդամ պետությունների արխիվային ծառայությունների հետ:

11. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարություն 1998 թվականի օգոստոսի 13-ի «Հայաստանի ազգային արխիվային ֆոնդի պետական սեփականությունն հանդիսացող փաստաթղթերի մշտական պահպանությունն իրականացնող պետական արխիվների համակարգը հաստատելու մասին» N 501 որոշման 1-ին կետը:

12. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՁԱՊԵՏ**

**ԱՄԱՐԳԱՐՑԱՆ**

Հավելված N 1  
ՀՀ կառավարության 2002 թվականի  
օգոստոսի 22-ի N 1406-Ն որոշման

**8 Ա Ն Կ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ,  
ԵՐԻՏԱՍԱՐԴՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ԵՆԹԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԽԻՎՆԵՐԻ ԵՎ  
ՍՊԱՍԱՐԿԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ**

NN ը/կ	ՊԵՏԱԿԱՆ ԱՐԽԻՎՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ
1.	Հայաստանի Հանրապետության պատմության կենտրոնական պետական արխիվ
2.	Հայաստանի Հանրապետության նորագույն պատմության կենտրոնական պետական արխիվ
3.	Հայաստանի Հանրապետության Հասարակական-քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի կենտրոնական պետական արխիվ
4.	Հայաստանի Հանրապետության արվեստի, գրականության եւ մամուլի փաստաթղթերի կենտրոնական պետական արխիվ
5.	Հայաստանի Հանրապետության գիտատեխնիկական փաստաթղթերի կենտրոնական պետական արխիվ
6.	Հայաստանի Հանրապետության պետարխիվների սպասարկման ծառայություն

Հավելված N 2  
ՀՀ կառավարության 2002 թվականի  
օգոստոսի 22-ի N 1406-Ն որոշման

**8 Ա Ն Կ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ» ՊԵՏԱԿԱՆ ՈՋ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՄԻԱՑՎՈՂ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԻ ԵՎ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԽԻՎՆԵՐԻ**

NN ը/կ	ՊԵՏԱԿԱՆ ԱՐԽԻՎԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ
1.	Երեւան քաղաքի պետական արխիվ
2.	Արագածոտնի մարզի պետական արխիվ
3.	Արարատի մարզի պետական արխիվ
4.	Արմավիրի մարզի պետական արխիվ
5.	Գեղարքունիքի մարզի պետական արխիվ
6.	Լոռու մարզի պետական արխիվ
7.	Կոտայքի մարզի պետական արխիվ
8.	Շիրակի մարզի պետական արխիվ
9.	Սյունիքի մարզի պետական արխիվ
10.	Վայոց ձորի մարզի պետական արխիվ
11.	Տավուշի մարզի պետական արխիվ

Հավելված N 3  
ՀՀ կառավարության 2002 թվականի  
օգոստոսի 22-ի N 1406-Ն որոշման

**8 Ա Ն Կ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ» ՊԵՏԱԿԱՆ ՈՋ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂՆԵՐԻ**

NN ը/կ	ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ
1	Երեւանի քաղաքային մասնաճյուղ
2	Արագածոտնի մարզային մասնաճյուղ
3	Արարատի մարզային մասնաճյուղ
4	Արմավիրի մարզային մասնաճյուղ
5	Գեղարքունիքի մարզային մասնաճյուղ
6	Լոռու մարզային մասնաճյուղ
7	Կոտայքի մարզային մասնաճյուղ
8	Շիրակի մարզային մասնաճյուղ
9	Սյունիքի մարզային մասնաճյուղ
10	Վայոց ձորի մարզային մասնաճյուղ
11	Տավուշի մարզային մասնաճյուղ

**8 Ա Ն Կ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ» ՊԵՏԱԿԱՆ ՈՋ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
 ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

№ ը/4	ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅՁՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ
1	Ապարանի տարածքային ներկայացուցչություն
2	ՄաղկաՇՈՒԽԻ տարածքային ներկայացուցչություն
3	Թայիների տարածքային ներկայացուցչություն
4	Արարատի տարածքային ներկայացուցչություն
5	Մասիսի տարածքային ներկայացուցչություն
6	Արմավիրի տարածքային ներկայացուցչություն
7	Բաղրամյանի տարածքային ներկայացուցչություն
8	Ճամբրակի տարածքային ներկայացուցչություն
9	Մարտունու տարածքային ներկայացուցչություն
10	Սեւանի տարածքային ներկայացուցչություն
11	Վարդենիսի տարածքային ներկայացուցչություն
12	Թումանյանի տարածքային ներկայացուցչություն
13	Սպիտակի տարածքային ներկայացուցչություն
14	Ստեփանավանի տարածքային ներկայացուցչություն
15	Տաշիրի տարածքային ներկայացուցչություն
16	Աբովյանի տարածքային ներկայացուցչություն
17	Եղվարդի տարածքային ներկայացուցչություն
18	Ջարենգավանի տարածքային ներկայացուցչություն
19	Ախուրյանի տարածքային ներկայացուցչություն
20	Ամասիայի տարածքային ներկայացուցչություն
21	Մարայիկի տարածքային ներկայացուցչություն
22	Աշոցքի տարածքային ներկայացուցչություն
23	Արթիկի տարածքային ներկայացուցչություն
24	Գորիսի տարածքային ներկայացուցչություն
25	Մեղրու տարածքային ներկայացուցչություն
26	Սիսիանի տարածքային ներկայացուցչություն
27	Վալթի տարածքային ներկայացուցչություն
28	Նոյեմբերյանի տարածքային ներկայացուցչություն
29	Բերդի տարածքային ներկայացուցչություն
30	Գիլիճանի տարածքային ներկայացուցչություն

**ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ  
 «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ» ՊԵՏԱԿԱՆ ՈՋ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
 ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ պետական կազմակերպություն) չափավոր ստանդարտ նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող գիտական և մշակութային գործունեություն իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպություն է, որն ստեղծվում է Հայաստանի ազգային արխիվային ֆոնդի (հալվաքածուի) փաստաթղթերի մշտական պահպանման, հաշվառման, համարման, օգտագործման և հրատարակման բնագավառներում գործունեություն իրականացնելու նպատակով:

Պետական կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարության ենթակայության կենտրոնական ու մարզային (երևան քաղաքի) պետական արխիվների իրավահաշնորհն է:

Պետական կազմակերպությունն ստեղծված է համարվում նրա՝ օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից:

2. Պետական կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» և «Հայաստանի ազգային արխիվային ֆոնդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներին, այլ օրենքներին ու իրավական ակտերին, Հայաստանի Հանրապետության մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարության կանոնադրություններ և սույն կանոնադրությամբ համապատասխան:

3. Պետական կազմակերպությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Պետական կազմակերպությունն իրավունք ունի իր անունից ձեռք բերելու և իրականացնելու գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կրելու պարտականություններ, գատարանում հանդես գալու որպես հայցյոր կամ պատասխանող:

4. Պետական կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության գինահանրի պատկերով և իր հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևավորված, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

5. Պետական կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, եկամուտների ու ծախսերի նախահաշիվ և բանկային հաշիվներ:

6. Պետական կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում հիմնադրի պարտավորությունների համար, իսկ հիմնադիրը՝ պետական կազմակերպության պարտավորությունների համար:

7. Պետական կազմակերպության անվանումն է՝ հայերեն լրիվ՝ «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպություն, հայերեն կրճատ՝ «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ, ռուսերեն լրիվ՝ Государственная некоммерческая организация «Национальный архив Армении», ռուսերեն կրճատ՝ «Национальный архив Армении» ГНО, անգլերեն լրիվ՝ State Non-Profit Organization «National Archives of Armenia», անգլերեն կրճատ՝ «National Archives of Armenia» SNPO:

8. Պետական կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղ. երևան, Հ.Քոչարի 5:

II. ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

9. Պետական կազմակերպություն գործունեություն անարկան և նպատակներն են պատմամշակութային ժառանգության՝ Հայաստանի ազգային արխիվային ֆոնդի (Հավաքածուի) փաստաթղթերի պահպանումը, հաշվառումը, համայրումը, օգտագործումը, հրատարակումը և հանրահաշակումը:

10. Պետական կազմակերպությունն իր գործունեություն անարկան և նպատակներին համապատասխան՝

ա) իրականացնում է Հայաստանի ազգային արխիվային ֆոնդի (Հավաքածուի) փաստաթղթերի համայրումը, հաշվառումը և պահպանումը:

բ) վարում է Հայաստանի ազգային արխիվային ֆոնդի (Հավաքածուի) փաստաթղթերի կենտրոնացված հաշվառումը:

գ) սահմանված կարգով օգտագործում է Հայաստանի ազգային արխիվային ֆոնդը (Հավաքածու):

դ) լրագրված պետական մարմին է ներկայացնում առաջարկություններ Հայաստանի ազգային արխիվային ֆոնդի (Հավաքածուի) փաստաթղթերը հատկապես արժեքավոր և հազվագյուտ ճանաչելու վերաբերյալ, ստեղծում և պահպանում է դրանց ապահովագրական պատճենները:

ե) արխիվային գործի և գործավարություն բնագավառում իրականացնում է պետական ծրագրերը:

զ) ներդրում է փաստաթղթերի պահպանության, կոնսերվացման, պատճենման, վերականգնման և օգտագործման առավել արդյունավետ համակարգեր ու մեթոդներ:

է) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան՝ համագործակցում է օտարերկրյա արխիվների ու արխիվային ծառայությունների հետ, արխիվային գործի և գործավարության բնագավառում մասնակցում միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների աշխատանքին:

ը) լրագրված պետական մարմին է ներկայացնում առաջարկություններ համայրման աղբյուրների ցանկի և արխիվում պահպանության ենթակա փաստաթղթերի կազմի, Հայաստանի ազգային արխիվային ֆոնդի (Հավաքածուի) ոչ պետական սեփականություն հանդիսացող փաստաթղթերն օտարերկրյա պետություն անունից առաջնային գնման վերաբերյալ:

թ) մասնակցում է արխիվային գործի ավտոմատ տեղեկատվական համակարգերի մշակման, ներդրման և օգտագործման, տեղեկատվական ցանցի և էլեկտրոնային տվյալների միասնական կենտրոնական շտեմարանի ստեղծման աշխատանքներին:

ժ) աջակցում է իրավաբանական և ֆիզիկական անձանց սեփականությունը հանդիսացող արխիվների պահպանմանը գործին:

ժա) լրագրված պետական մարմին է ներկայացնում արխիվային գործի և գործավարության բնագավառում վարչական վիճակագրությունը:

ժբ) պատրաստում և հրատարակում է գիտական աշխատություններ, մենագրություններ, Հայաստանի ազգային արխիվային ֆոնդի (Հավաքածուի) փաստաթղթերի, դրանց կազմի և բովանդակության վերաբերյալ գիտատեղեկատվական և գիտահանրամատչելի գրականություն, տեղեկագրեր, ուսումնական ու գործնական ձեռնարկներ, քարտզակային բնույթի և գովազդային նյութեր:

ժգ) կազմակերպում է արխիվագիտության, հնագրագիտության, փաստաթղթավարության, այլ օժանդակ պատմական գիտությունների հիմնախնդիրներին նվիրված գիտական նստաշրջաններ, համաժողովներ, գիտագործնական սեմինարներ և խորհրդակցություններ:

ժդ) ուսումնասիրում է հետազոտվող տեղեկատվության հասարակական պահանջները, փաստաթղթերի նպատակային և արդյունավետ օգտագործումը:

ժե) քննարկում է քաղաքացիների նամակները (գիտումները և բողոքները), լուծում բարձրացված հարցերը:

11. Պետական կազմակերպությունը, որպես ձեռնարկատիրական գործունեություն, իրականացնում է՝

ա) արխիվային վավերագրերի հրատարակություն:

բ) փաստաթղթերի պատճենների տրամադրում:

գ) ֆիզիկական և իրավաբանական անձանց արխիվագիտական ծառայությունների մատուցում:

դ) փաստաթղթերի և գրականության վերականգնում ու կազմապատում:

ե) արխիվային տուփերի, արկղերի և արխիվային փաստաթղթերի ապահովագրական պատճենների պատրաստում:

Պետական կազմակերպությունը լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով կարող է զբաղվել միայն լիցենզիայի հիման վրա:

III. ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

12. Պետական կազմակերպությունը ֆինանսավորվում է՝

ա) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից՝ սուբսիդիային ձևով:

բ) միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի միջոցներից:

գ) ձեռնարկատիրական գործունեությունից ստացված շահույթից:

դ) Հայաստանի Հանրապետության օրենսգրքով սահմանված այլ արբյուրներից:

Ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրների ներգրավումը չի կարող հանդեպնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացվող ֆինանսավորման չափերի նվազեցմանը:

13. Պետական կազմակերպության գործունեությունը բնագրում առաջացած շահույթն օգտագործվում է նրա կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար՝

ա) պետական կազմակերպության աշխատանքային գործունեությունն ապահովող գույքի և նյութերի ձեռքբերում:

բ) Հայաստանի ազգային արխիվային ֆոնդի (Հավաքածուի) մասին տեղեկատվության ներկայացնելը և հանրահաշակման միջոցառումների իրականացումը (գովազդներ, հայտարարություններ, խորհրդակցություններ և այլն):

գ) արխիվային գործին վերաբերող գրականության ձեռքբերում, Հայաստանի ազգային արխիվային ֆոնդի (Հավաքածուի) վերաբերող տեղեկությունները հասարակությանը մատչելի դարձնելու նպատակով գրքույկների և տեղեկագրերի հրատարակման կազմակերպում:

դ) պետական կազմակերպության աշխատողների կենսաապահովման բարձրացում՝ պարգևատրումների, հավելավճարների և խրախուսման այլ ձևերով:

ե) պետական կազմակերպության տեխնիկական հարցվածության բարելավում, այդ թվում՝ հիմնական միջոցների ձեռքբերում:

զ) պետական կազմակերպության աշխատողների մասնագիտական որակավորման բարձրացման նպատակով գասքնթացների կազմակերպում կամ մասնակցություն կազմակերպված գասքնթացներին:

է) լրագրված պետական մարմին կողմից և պետական կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ նպատակներ:

Պետական կազմակերպության շահույթի օգտագործման կարգը սահմանում է հիմնադրեր:

14. Պետական կազմակերպության ֆինանսական գործունեությունը ենթակա է վերստուգման (աուդիտի) լրագրված պետական մարմին կողմից ընտրված անկախ աուդիտորական կազմակերպության կամ Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ֆինանսական վերահսկողության ստորաբաժանում կողմից:

15. Պետական կազմակերպությունը հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները վճարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով:

IV. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

16. Պետական կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա կողմից լրագրված մարմինը, կազմակերպության գործադիր մարմինը՝ տնօրենը:

17. Պետական կազմակերպության հիմնադիրն ունի պետական կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

ա) պետական կազմակերպության հիմնադրումը:

բ) պետական կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը:

գ) պետական կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրամիջ փոփոխությունների կատարումը:

դ) պետական կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը:

ե) օրենքով և իր կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

18. Լիազորված պետական մարմին իրականացնում է պետական կազմակերպության բնօրինակ կառավարումը, սպառնում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն և կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ իրականացման համար:

Լիազորված պետական մարմինը՝

ա) հաստատում է պետական կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և ամրացվող պետությանը պատկանող գույքի կազմը:

բ) սահմանում է պետական կազմակերպության կառավարման համակարգը:

գ) նշանակում է պետական կազմակերպության լուծարման հանձնաժողովը և հաստատում լուծարման հաշվեկշիռը:

դ) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով ձևավորում է պետական կազմակերպության կառավարման մարմինը և վարձավճար դադարեցնում նրա լիազորությունները:

ե) իրականացնում է վերահսկողություն պետական կազմակերպության գործունեության նկատմամբ:

զ) կապեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում պետական կազմակերպության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրահանգները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները:

է) լուծում է պետական կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում դրանց գործունեության վերատուգման արդյունքները:

ը) իրականացնում է վերահսկողություն պետական կազմակերպության ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ:

թ) իրականացնում է վերահսկողություն պետական կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ, համաձայնություն է տալիս պետական կազմակերպությանը՝ նրան սեփականության իրավունքով հանձնված գույքի օտարման համար:

ժ) հաստատում է պետական կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշիվը:

ժա) հաստատում է պետական կազմակերպության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը:

ժբ) իրականացնում է օրենքով, հիմնադրի որոշումներով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

19. Պետական կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որին պաշտոնին նշանակում և պաշտոնից ազատում է (նրա լիազորությունները դադարում են) լիազորված պետական մարմինը:

Պետական կազմակերպության տնօրենն օրենքով, հիմնադրի և լիազորված պետական մարմնի որոշումներով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է պետական կազմակերպության գործունեությունը և կրում պատասխանատվություն՝ օրենքների, այլ իրավական ակտերի, հիմնադրի և լիազորված պետական մարմնի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

20. Պետական կազմակերպության տնօրենի գործառույթներն իրականացնող անձի հետ կնքվում է պայմանագիր, որը հիմնադրի անունից ստորագրում է

լիազորված պետական մարմնի ղեկավարը: Պայմանագրով սահմանվում են պետական կազմակերպության տնօրենի իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը և փոխհարարությունները լիազորված պետական մարմնի հետ, նրա աշխատանքի վարձատրության պայմանները, պայմանագրի դադարման՝ «Պետական ոչ առևտրային կազմակերպության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված բոլոր հիմքերը և այլ դրույթներ, որոնք պայմանագրով կողմերն անհրաժեշտ կգտնեն: Պայմանագրի դրույթները չեն կարող հակասել Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության պահանջներին՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

21. Պետական կազմակերպության տնօրենի պաշտոնում նշանակված անձը պարտավոր է չիատարել հիմնադրի լիազորված պետական մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության օրենքները, կարգադրությունները, հրահանգները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

22. Պետական կազմակերպության տնօրենի պաշտոնում նշանակված անձի բացակայության դեպքում, նրան նշանակված մարմնի գլխավոր որոշման համաձայն, այդ լիազորություններն իրականացնում է այլ անձ:

23. Պետական կազմակերպության տնօրենը՝

ա) առանց լիազորագրի հանդես է գալիս պետական կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում գործառքներ:

բ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի, լիազորված պետական մարմնի և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրենում է պետական կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները:

գ) տալիս է պետական կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր:

դ) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է պետական կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր:

ե) բանկիրում բացում է հաշվարկային հաշիվներ:

զ) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև:

է) սահմանում է պետական կազմակերպության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները, աշխատողների թիվը, աշխատանքի վարձատրության ձևերը, աշխատավարձի չափերն ու վճարման կարգը և հաստատում հաստիքացուցակը:

ը) հաստատում է պետական կազմակերպության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների կանոնադրությունները:

թ) նշանակում է պետական կազմակերպության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ղեկավարներին:

ժ) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորություններին սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը:

ժա) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության չհակասող և պետական կազմակերպության կառավարման այլ մարմինների չվերապահված այլ լիազորություններ:

24. Պետական կազմակերպության հիմնական կառուցվածքային ստորաբաժանումներն են նրա բաժինները, բաժանումները և լարորատորիաները, որոնք գործում են իրենց կանոնակարգերին համապատասխան:

Պետական կազմակերպության կառուցվածքի մեջ են մտնում նաև սպասարկող և օժանդակ բնույթի կառուցվածքային ստորաբաժանումները կամ առանձին հաստիքներ (հաշվապահություն, կարգային աշխատանք, գրասենյակ, տնտեսություն) վարում:

25. Պետական կազմակերպության գործունեության հիմնական հարցերի քննարկման, գիտամեթոդական և կազմակերպական աշխատանքների արդյունաշու իրականացման նպատակով տնօրենին առընթեր ստեղծվում են խորհրդակցական մարմիններ՝ գիտական խորհուրդ և մեթոդական փորձագիտական հանձնաժողով:

Պետական կազմակերպության խորհրդակցական մարմիններն իրենց գործառույթներն իրականացնում են իրենց կանոնակարգերի հիման վրա: Պետական

կազմակերպության խորհրդակցական մարմինների կազմում ընդգրկվում են պետական կազմակերպության ղեկավարները եւ մասնագետները, ինչպես նաեւ այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Պետական կազմակերպության խորհրդակցական մարմինների կազմը եւ կանոնակարգը Հաստատում է պետական կազմակերպության տնօրենը: Պետական կազմակերպության խորհրդակցական մարմինների որոշումներն իրականացվում են պետական կազմակերպության տնօրենի հրամաններով:

26. Պետական կազմակերպության աշխատողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը՝ սույն կանոնադրությամբ, աշխատանքային պայմանագրով, պետական կազմակերպության աշխատանքային ներքին ու կառուցվածքային ստորաբաժանումների կանոնակարգերով եւ այլ իրավական ակտերով:

27. Պետական կազմակերպության աշխատողների ատեստավորումը կազմակերպվում է յուրաքանչյուր տարվա առաջին եռամսյակում:

Պետական կազմակերպության յուրաքանչյուր աշխատող ենթակա է ատեստավորման՝ յուրաքանչյուր 3 տարին մեկ անգամ:

Ատեստավորման անցկացման կարգը Հաստատում է լիազորված պետական մարմինը:

Տվյալ տարում ատեստավորման ենթակա աշխատողների ցուցակը Հաստատում է պետական կազմակերպության տնօրենը:

**V. ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՅՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ, ՏՆՕՐԻՆՄԱՆ, ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ**

28. Պետական կազմակերպության սեփականությունը ձեւավորվում է պետական կազմակերպության հիմնադրման ժամանակ՝ հիմնադրման մասին հիմնադրի որոշմամբ լիազորված մարմնի սահմանված չափով հանձնված գույքից, հետագայում՝ հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաեւ պետական կազմակերպության գործունեության ընթացքում արտադրված եւ ձեռք բերված գույքից:

29. Պետական կազմակերպությունն իրավունք ունի, օրենքին, հիմնադրի որոշումներին եւ սույն կանոնադրությանը համապատասխան, իր հայեցողությամբ սիրապետելու, տնօրինելու եւ օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

30. Պետական կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ հիմնադիրը չունի իրավունքներ՝ քայքայելով կամ պետական կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի:

31. Պետական կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է կազմակերպությունը:

32. Պետական կազմակերպության սեփականության վրա կարող է տարածվել՝ բռնազանձում միայն դատական կարգով:

33. Հիմնադիրը կարող է պետական կազմակերպության անժամկետ եւ անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք:

Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել ու իր կողմից պետական կազմակերպության ամրացված գույքը:

34. Պետական կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու ու գրավ գնելու անհատույց օգտագործման հանձնելու:

Պետական կազմակերպությունն իրավունք չունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնելու վարձակալության:

35. Հիմնադրի կողմից գույքը պետական կազմակերպության ամրացվելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ հիմնադրի կամ նրրորդ անձանց իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար:

36. Հիմնադրի կողմից պետական կազմակերպության ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ պետական կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

**VI. ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՄԱՆԱՃՑՈՒՂՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

37. Պետական կազմակերպությունն ունի մասնաճյուղեր՝ Հայաստանի Հանրապետության մարզերում (Նրեւան քաղաքում), եւ ներկայացուցչություններ՝ տարածաշրջաններում, որոնք գործում են սույն կանոնադրությանն ու իրենց կանոնադրություններին համապատասխան եւ ենթակա են հաշվառման իրավաբանական անձանց գրանցում իրականացնող մարմնի կողմից:

38. Պետական կազմակերպության մասնաճյուղերը եւ ներկայացուցչություններն ունեն Հայաստանի Հանրապետության դիտանշանի պատկերով, պետական կազմակերպության եւ իրենց՝ հայրենի անվանմամբ կլոր կնիք ու ձեւաթուղթ:

**VII. ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ**

39. Պետական կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել հիմնադրի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Պետական կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել 100 տոկոս պետական մասնակցությամբ բնկերության կամ հիմնադրամի:

Պետական կազմակերպությունը կարող է գատական կարգով վերակազմակերպվել՝ օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով:

40. Պետական կազմակերպության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց նրա իրավունքներն ու պարտականություններն իրավա-հաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

Պետական կազմակերպությունը կարող է լուծարվել հիմնադրի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով:

Պետական կազմակերպությունը կարող է լուծարվել նաեւ սնանկության հետևանքով:

Պետական կազմակերպությունը կարող է գատական կարգով լուծարվել միայն օրենքով նախատեսված դեպքերում եւ կարգով:

41. Պետական կազմակերպության լուծարման դեպքում պետական կազմակերպության պարտատերերի պահանջներին բավարարումից հետո մնացած գույքն ուղղվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

**VIII. ԱՅՈՒՂԻՑԹՆԵՐ**

42. Սույն կանոնադրությամբ չպարզաբանված հարցերը լուծվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին եւ գործող այլ իրավական ակտերին համապատասխան:

**Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարար** **Մ. Թոփուզյան**



**ՆՈՐԱՀԱՅՏ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ ՀՅԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԻ (ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅՆԹԱՆ, ՍԻՄՈՆ ՋԱՎԱԲՅԱՆ, ԲՈՍՏՈՄ) 1890-ԱՎԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

ՀՅԴաշնակցության (այսուհետև՝ ՀՅԴ) Հիմնադիրներ՝ Քրիստափոր Միքայելյանը, Սիմոն Ջավաբյանը և Թոստոմը (Ստեփան Ջորյան) իրենց քաղաքական մեծ փորձի, գաղափարաբարոյական բարձր հատկանիշների և կազմակերպչական ամօթխելի ունակությունների շնորհիվ խոր հետք են թողել ոչ միայն Հարազատ կուսակցության, այլև ողջ Հայ ազատամարտի պատմագրության մեջ:

Այդ պատճառով, նրանց կյանքի ու գործունեության տարեգրությունը տասնամյակներ շարունակ գտնվել է ինչպես նախախորհրդային, այնպես էլ սփյուռքահայ պատմագրության ուշագրության կենտրոնում: Վերջին Հայրենասիրական ընթացքում ՀՅԴ Հիմնադիրների մասին գրվել են բազմաթիվ աշխատություններ, ինչպես նաև հրատարակվել ու վերահրատարակվել են նրանց նամակները՝ «Դիվան ՀՅԴաշնակցության» վերատուփյամբ զույգ հատորների՝ և այլ ժողովածուների տեսքով:

Սակայն, դժբախտաբար, մինչևե այժմ Քր.Միքայելյանի, Ա.Ջավաբյանի և Թոստոմի կյանքի ու գործունեության պատմությունը լուսարանելու համար անհրաժեշտ սկզբնաղբյուրները չեն ամբողջացվել, որովհետև նրանց մի մասը շարունակել է մնալ ցարական Ռուսաստանի տարբեր պետական հաստատությունների՝ Ոստիկանության Դեպարտամենտի և նրա տեղական բաժանմունքների, հատկապես՝ Թիֆլիսի ժանդարմական վարչության, ինչպես նաև Կովկասի կառավարչապետի, Թիֆլիսի օկրուգային գաղտարանի ու նահանգապետի և այլ Հիմնարկությունների փաստաթղթերը պահպանող արխիվներում: Նշված վավերագրերի արժեքը սենսացիոն է նախ և առաջ այն պատճառով, որ նրանք ստեղծվել են Հենց ՀՅԴ Հիմնադրման ու առաջին տարիների գործունեության օրերին և գերծ են հետագայի անճշտություններին:

Այս գործիչների մասին առկա սկզբնաղբյուրների սակավությունը պայմանավորված է նաև նրանց գաղտնիությամբ: Այն թելադրված է եղել կոնկրետ միջավայրի առանձնահատկություններով, որտեղ դա ձևավորվել և գործել է ՀՅԴ-ն: Թիֆլիսում՝ Կովկասի կառավարչապետի, նահանգային իշխանությունների և ժանդարմական վարչության քթի տակ, ամենօրյա հետապնդումների, ձերբակալությունների, հարցաքննությունների պայմաններում ՀՅԴ-ի նման մեծ ու խիստ ճյուղավորված կազմակերպության Հիմնադրումը պահանջել է անընկալելի ջանքեր ու եռանդ: Սակայն, անգամ նման պայմաններում, ցարական իշխանությունների աչքից չի վրիպել այն փաստը, որ արևմտահայերի ազատագրության համար սկզբը առած շարժման ու նրա այլերի վրա ձևավորված գանազան կառույցների դեկավրացիություն իրականացվում է Հենց Թիֆլիս քաղաքից: Ուստի, ոստիկանությունը մոտափոր ճշգրտությամբ իր համար ուրվագծել է ամենասկստիվ ու հետևողական գործիչների շրջանակը և հաճախ որոշակի Հիմքերով, հաճախ էլ՝ նման Հիմքեր գտնելու նպատակով, կազմակերպել է նրանց ձերբակալությունները, բնակարանների խուզարկություններն ու այլ գործողություններ: Այդ ամենի շնորհիվ, ցարական Ոստիկանության Դեպարտամենտը, որոշակի նյութեր է հավաքել ՀՅԴ Հիմնադիրների մասին, որոնք մի փոքր ավելի են ամբողջացել՝ արտասահմանից ստացվող տեղեկատվության և առանձին գործիչների նամակագրության ուսումնասիրման հիման վրա:

Սխտ հատկանշական է նաև այն փաստը, որ ՀՅԴ Հիմնադիրների վերաբերյալ Ոստիկանության Դեպարտամենտի հավաքած նյութերի նշանակալի մասը աւրելվում է ոչ թե նրանց անմիջական գործունեությանը, այլ ուսու նորոգիչիներին,

բուլդոզացի, իտալացի և այլ երկրների հեղափոխականների հետ ունեցած կապերին ու հարաբերություններին: Ցարական ոստիկանությունը ՀՅԴ Հիմնադիրների մասին որոշակի տեղեկություններ է հայթայթել նաև Թուրքիայից՝ Կոստանդուպոլիսի գեուպանատան, Տրապիզոնի հյուպատոսության, ինչպես նաև այլ երկրներում առկա դիվանագիտական ներկայացուցչությունների միջոցով: Այդ ամենի հիման վրա կալցավել են որոշումներ՝ նրանց ձերբակալելու կամ Կովկասից արտաքսելու մասին, սակայն ոչ որպես ՀՅԴ առաջնորդներ, այլ կասկածելի ու քաղաքական առումով անբարեհույս անձնավորություններ:

Նման որոշումներից ու դրանց հետևած գործողություններից ուշագրավ է Քր.Միքայելյանի 1891թ. ապրիլի 16-ի ձերբակալությունն ու մեկ տարով արտոնվելու պատմությունը: Հատկանշական է, որ չնայած ՀՅԴ-ն արդեն ձևավորվել և 7-8 ամիսների բավականին ակտիվ գործունեություն էր ծավալել, բայց Քր.Միքայելյանը շարունակում էր գրավել ցարական ոստիկանության ուշագրությունը ոչ որպես գաշնակցական, այլ՝ վերջինս ուսու հեղափոխական-նորոգիչիների հետ կապեր ունեցող անձ: Մինչդեռ Հայտնի է, որ առնվազն 1880-ականների վերջերից սկսած նրանց միասին հետ օրեւէ լուրջ գործունեություն էր ծավալել: Ուստի, 1891թ. ապրիլի 16-ի նրա ձերբակալությունը որոշ առումով «տուրք էր» իր նախորդ գործունեության դեմաց:

Այս ձերբակալություն և դրա արդյունքում տեղի ունեցած հետաքննության ընթացքում Կովկասի կառավարչապետի ու Թիֆլիսի ոստիկանության արխիվներում կուտակված նյութերը, որոնք հանդիսանում են մեր կողմից հրատարակվող վավերագրերի առաջին խումբը (NN 1-5), ինքնին վկայում են, որ արգեն խիլ ձևավորված ու ակտիվ գործունեություն ծավալած ՀՅԴ իր գաղտնիությանը ոչ միայն չէր զիջում, այլև ակնհայտորեն գերազանցում էր Ադրբեյդջանում գործող նորոգիչիական կազմակերպություններին: Դրանով կարելի է բացատրել նաև Մեծտիկի բանտից Թիֆլիսի նահանգապետին գրած իր խնդրագրում Քր.Միքայելյանի որդեգրում՝ ամեն ինչից անտեղյակ, զարմացած ու հանկարծակի ձերբակալությունից չփոթված մարդու կեցվածքը: Նման կեցվածք կարող էր որդեգրել միայն նա ուղիվ դիտար, որ իրեն կասկածող ոստիկանությունը օրեւէ կոնկրետ փաստ և ապացույց չուներ:

Ասպիտով, Քր.Միքայելյանի ձերբակալություն և 1891 թ. մայիսի 2-ին մեկ տարով Կովկասից արտոնվելու փաստի վերաբերյալ մեր կողմից հրատարակվող լուրջ 5 վավերագրերը լույս են սփռում ՀՅԴ Հիմնադրի ժողովներից մինչև առաջին ընդհանուր ժողովին ընկած ժամանակաշրջանում նրա գործունեության մինչև օրս անհայտ էջերի վրա:

Հրատարակվող փաստաթղթերի մյուս խումբը՝ (NN 6-8) Հարուստ տեղեկություններ է պարունակում Ա.Ջավաբյանի՝ 1890թ. նոյեմբերի 27-ին Տրապիզոնում տեղի ունեցած ձերբակալության և Կովկաս արտոնվելու, մինչ այժմ գրեթե չուսումնասիրված հարցի վերաբերյալ: Ա.Ջավաբյանի ու նրա հետ նաև՝ Հովսեփ Արզուսեանի (Իշխան) ձերբակալության և Կովկաս արտոնվելու ողջ գործընթացը գտնվել է Տրապիզոնում Թոստոստանի հյուպատոսի պաշտոնակատար Սերոկինի սեւեռուն ուշագրության կենտրոնում, որի գեկուցագրերը Հետաքրքրական տեղեկություններ են պարունակում նաև նորաստեղծ ՀՅԴ մեկ այլ գործիչ՝ Հովհաննես Յուսուֆյանի (Վահանյան) մասին: Որոշակի արժեք են ներկայացնում նաև 1890-ի վերջին ՀՅԴ-ի հետ միաձուլվելու համաձայնագիր ստորագրած հենակախ Ռուբեն Խանազադի Տրապիզոնում ունեցած կապերը, Տրապիզոնի վրայով «Հնչակ» պաշտոնաթերթը տարածելու փորձերի և այլ աշխատանքների մասին վկայությունները:

Մեր կողմից հրատարակվող փաստաթղթերի երրորդ խումբը՝ (NN 9-11) հարուստ տեղեկություններ ու փաստեր է պարունակում Թոստոմի 1890-ականների առաջին կեսի գործունեության մասին: Ոստիկանության Դեպարտամենտի մեծ ուշագրությունը Թոստոմի հանդեպ պայմանավորված էր 1890թ. փետրվարին Մոսկվայում տեղի ունեցած ուսանողական շարժմանը նրա ակտիվ մասնակցության փաստով: Այդ իրադարձությունից հետո արտաքսվելով Հայրենիք՝ Նախիջևանի գավառի Յղես գյուղը, Թոստոմը շարունակում էր մնալ ոստիկանության դաղտնի վերահսկողության տակ: Բայց չնայած դրան, ՀՅԴ Հիմնադրի ժողովների շրջանում, նա ժամանում է Թիֆլիս և բնակվում տարբեր հասցեներով: Այստեղ ոստի-

<sup>1</sup> Տե՛ս «Իրան ՀՅԴաշնակցության», խմբ. Սիմոն Վրացյանի, հատ 1,2, Պոսթրեն, 1934, 1938:

կանութիւնը կազմակերպում է նրա Հերթական բնակարանի խուզարկութիւնը (1891թ, մայիսի 18-ին), սակայն՝ անարդէութեամբ: Ռոստոմը, որը մինչ այդ Հանդես էր գալիս Ստեփան Արրահամյանցի կեղծ անձնագրով, անհետանալով ոստիկանութեան տեսազնայից, այս անգամ էլ պարսկահայաստակ Վրթանես Փափազյանի փաստաթղթերով հայտնվում է Ռուսիայում ու Եվեյցարիայում եւ կազմակերպում «Իրոշակի» հրատարակութիւնը: Բայց չնայած դրան, ցարական ոստիկանութիւնը շարունակում էր տեղեկութիւններ հափաքել Ռոստոմի մասին՝ դիմելով անգամ անպիսի միջոցի, ինչպիսին էին զանազան անձանց «գրուցները» վերջինիս եղբոր՝ Արիստակես Զորյանի (Կարո) Հետ: Գործի են դրվում նաև Ռուսաստանի արտաքին գործերի նախարարութեան՝ Ռուսիայում, Բուլղարիայում ու Եվեյցարիայում ունեցած կապերը եւ այդ ճանապարհով ձեռք է բերվում որոշակի տեղեկատվութիւն թուրքացի Հեղափոխական Պարսկեկ Ստոյանովի եւ այլ գործիչների Հետ Ռոստոմի Հաստատած կապերի մասին: Մինչ այդ, 1894 թվականին, Ստեփանուկեան Դեպարտամենտի Համապատասխան ստորաբաժանումը կազմում է մի ամբողջական տեղեկանք Ռոստոմի Հեղափոխական գործունեութեան վերաբերյալ, որը Հետագայում հարստացվում ու ամբողջացվում է, արտասահմանից ստացված նյութերի հիման վրա: Այդ տեղեկանքը, ինչպես նաև Կովկասի Կառավարչապետի գրասենյակից Թիֆլիսի նահանգապետին ուղարկված խորհրդագահական գրութիւնը, իրիտ արժեքավոր ու հարուստ տեղեկութիւններ են պարունակում Ռոստոմի գործունեութեան վերաբերյալ: Վերը նշված երկու փաստաթղթերում առկա տեղեկատվութիւնը, անկասկած, շատ ավելի հարուստ է, քան Քր.Միքայելյանի ու Ա.Ջափարյանի մասին ցարական ոստիկանութեան հափաքած նյութերը: Եվ զա ինչ որ առումով հասկանալի է, բնագամներ մի քանի տարվա ընթացքում Ռոստոմը հսկայածավալ կազմակերպչական գործունեութիւն իրականացրեց:

Այսպիսով, ՀՅԴ Հիմնադիրներ՝ Քր.Միքայելյանի, Ա.Ջափարյանի ու Ռոստոմի 1890-ականների առաջին կեսին ծավալած գործունեութեան մասին Ստեփանուկեան Դեպարտամենտի հափաքած տեղեկութիւնները լրացնում եւ ամբողջացնում են ցայսօր հրատարակված՝ ողջ տեղեկատվութիւնը՝ Հնարավորութիւնը տալով անաչառ կերպով ու ամբողջութամբ լուսարանել մեր պատմագրութեանն անծանոթ կամ թույլ ուսումնասիրված իրադարձութիւնները:

**Գեւորգ Խուզիչյան**  
պատմական գիտութիւնների  
թեկնածու

**Մ Ա Ս Ս**

N 1

ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ ԿՈՎԿԱՍԻՑ ԱՔՍՈՐԵԼՈՒ  
ՎԵՐԱՔԵՐՑԱԼ ԿՈՎԿԱՍԻ ԿԱՌԱՎԱՐՁԱՊԵՏԻ ԳՐԱՍԵՆՑԱԿԻ  
(ԱՅՍՈՒՆԷՏԵՆԻ ԳՐԱՍԵՆՑԱԿ) ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՍԱՐԻ  
ԳՐՈՒԹՅՈՒՆԵԼ ԹԻՖԼԻՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ

N 169

12 ապրիլի 1891թ.  
Թիֆլիս

Ввиду полученных от товарища Министра Внутренних Дел, Заведывающего полицией, сведений о вредной в политическом отношении агитаторской деятельности жителя сел. Акулис, Нахичеванского уезда, Эриванской губернии, Христофора Микалианца, приехавшего летом минувшаго года из сел. Акулис в Тифлис и находящегося в близких отношениях с состоящей в Тифлисе под негласным надзором женою дворянина Евгенией Лаврусевич, Главноначальствующий приказал выслать Микалианца с Кавказа.

Об изложенном Канцелярия Главноначальствующаго имеет честь сообщить Вашему Сиятельству длязавислих распоряжений, покорнейше просим о последующем по сему довести до сведения Его Высочкопревосхо-дительства.

И.д. Директора

Վրաստանի ԿՊՊԱ, ֆ.17, ց.2, գ.706, ք.298: Վավերացված պատճեն: Զեռագիր:

N 2

ՔՐ.ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ ԿՈՎԿԱՍԻՑ ԱՔՍՈՐԵԼՈՒՑ ՀԵՏՈ,  
ՄԵԿ ՏԱՐՈՎ ՎԵՐԱԿԱՐՁՆ ԱՐԳԵԼԵԼՈՒ ՄԱՍԻՆԳՐԱ-  
ՍԵՆՑԱԿԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԵԼ ԹԻՖԼԻՍԻ  
ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ

N 180

24 ապրիլի 1891թ.  
Թիֆլիս

Вследствие отзыва от 15 сего Апреля, за N 119, Канцелярия Главноначальствующаго имеет честь сообщить Вашему Сиятельству, что Христофора Микалианца належит выслать в местность, вне Кавказа, которую он сам изберет себе для жительства, с воспрещением ему возвращаться на Кавказ в течение одного года.

И.о. Директора

Նույն տեղում, ք.300: Վավերացված պատճեն: Զեռագիր:

N 3

ԹԻՖԼԻՍԻ ՄԵՏԵԽԻ ԲԱՆՏԻՑ ԹԻՖԼԻՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ  
ՈՒՂՂԱԾ ՔՐ.ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ ԽՆԴՐԱԳԻՐԸ

N 4097

27 ապրիլի 1891թ.  
Թիֆլիս

На основании 212 ст. Уст. о содер. под стр., имею честь препроводить при сем к Вашему Сиятельству прошение содержащегося в Тифлисском Метехском замке арестанта Христофора Мануэлянца.

Прокурор  
Секретарь

Прошение

16 апреля в 71/2 часов утра, неожиданно явились ко мне приставы 2 и 4 участков... и произвели у меня обыск, которым ничего предосудительного обнаружено не было. По составлении об этом протокола, я был притащен в участок, где мне представилась другая неожиданность-я должен был подписать постановление гг. приставов, в котором значилось: подвергнуть Микаелянца задержанию и вместе с протоколами представить Тифлисскому полицимейстеру. Пришли к г. полицимейстеру. Тут, после некоторого совещания с гг. приставами, г. полицимейстер явился ко мне и в комнате, где сидело четверо служащих и у дверей которой стояли просители, объявил: „Микаелянц, вам надо отсюда уезжать, а в ожидании распоряжения вас отправят в Метехский замок. Если бы в ту минуту разразилась над моей головой страшная гроза и развекала ее, мне было бы лучше!.. я был потрясен,

ошеломлен...подавлен...это было третьей неожиданностью в продолжение каких-нибудь 3-х часов!

Из постановления г.полицеймейстера я узнал, что же это творится со мною, как с лицом „подлежащим высылке из пределов Кавказского края“, по распоряжению Вашего Сиятельства. Затем я был привезен в Метехский замок и помещен в общем вместе с другими арестантами каземате. Так прошло 2 адски-тяжелых дня. 18-го же апреля, на третий день моего пребывания.... перевели в отделение одиночного заключения и стали запирают на замок,-это было четвертою неожиданностью, которая причиняет мне невыразимо-жестокую внутреннюю пытку. Я не знаю, до чего доведет меня это систематическое ограничение моей личности, это прогрессивное усиление ударов за ударами, но знаю, чувствую, вижу ясно две вещи: во 1-х, после почти двенадцатилетней педагогической деятельности на виду общества, в качестве учителяли инспектора, положение арестанта секретного отделения отравляет, точит, сверлит, выворачивает всю мою душу, а во 2-х, знаю, что если тяжело человеку вообще от всякого наказания, то сила последнего, несомненно, удешевляется, когда оно вдобавок не понятно для наказуемого. В билете, полученном мною в замке, под графой „в чем обвиняется“, значится: „подлежит высылке“. Ясно, что в сем двусловии нет ответа на вопрос и что этим двусловием предрешается вопрос о наказании прежде,чем формулирована моя виновность.

По сему, обращаясь к Вашему Сиятельству, я надеюсь, по естественному порядку вещей, найти у вас разрешение моих полных нестерпимой муки обмываний как касательно точного указаниямоей вины, так и объяснения, чем мотивируется именно арест и содержание меня подзамком, когда.... будь установлена законность высылки я бы мог безпозорно уехать и из собственной квартиры.

22 апреля1891года.  
Метехский замок

Христофор  
Микаелянц

Նույն տեղում, թթ. 302-306: Ինքնագիր:

N 4

ՔՐ.ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ ՆՈՎՈՋԵՐԿԱՍԿ ՄԵԿՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ  
ԹԻՖԼԻՍԻ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԹԻՖԼԻՍԻ  
ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ

N 484

2 մայիսի 1891թ.  
Թիֆլիս

Рапорт

Представляя при сем протокол, составленный 27 апреля с.г. об исполненных действиях по удалению из Кавказского края жителя с.Акулис, Нахичеванского уезда, Эриванской губернии, Христофора Микалианца, имею честь доложить Вашему Сиятельству, что Микалианц выехал сегодня из Тифлиса по проездному свидетельству в гор. Новочеркасск, избранный им для жительства.

Полицеймейстер  
И.д. Помощн. Правителя  
Канцелярии Л.Спегальский.

Протокол

1891 года Апреля 27 дня Тифлиссский Губернатор предписанием от 15 сего Апреля за N 120, давъ знать Тифлисскому Полицеймейстеру, что Главнoначальствующий Гражданскою частию на Кавказе приказал жителя с.Акyлиc Нахичеванскаго уезда, Эриванской губернии Христофора Микалянца,

находящегося в близких отношениях с состоящею в г.Тифлисе под негласным надзором женою дворянина Евгениею Лаврусевич, в виду вредной его в политическом отношении, деятельности выслать из пределов Кавказского края, в местность и на срок, какие будут указаны особым предписанием, предложил сделать распоряжение о задержании Микалянца. По получении означенного предложения 15 числа в 10 ч. ночи, Приставами 2 и 4 участков, по распоряжению Полицеймейстера 16 Апреля, во время задержания Микалянца, произведен был в квартире последнего и Евгении Лаврусевич тщательный обыск, по которому предосудительного ничего не найдено. Задержанный Микалянец отправлен того-же числа, 16 Апреля, про постановление Полицеймейстера в Тифлиссский Метехский Торемный замок, для содержания под стражею впредь до особого распоряжения, о чем доложено г.Губернатору и сообщено Прокурору Тифлисского Окружнаго Суда. 26 Апреля получено от г.Губернатора дополнительное предложение, от 25 Апреля за N 1469, из которого видно, что Микалянец должен быть выслан в местность, вне Кавказского Края, которую он сам избрет себе, для жительства, с воспреещением возврата на Кавказ в течение одного года. Вызванный сего числа Христофор Микалянец, по объявлении ему за подпискою означеннаго распоряжения и списка местностей Империи, объявленных в положении усиленной охраны, изъявил желание отправиться в г.Новочеркасск избранный им для жительства. Руководствуясь циркуляром Министерства Внутренних Дел, от 5 Сентября 1881г. N3588,Тифлиссский Полицеймейстер, Статский Советник Мاستицкий, постановил: обязать Христофора Микалянца выехать из Тифлиса не позже 2 сего Мая на следование его в Новочеркасск выдать проходное свидетельство назначив на проезд 4 дня, а документы его препроводить Новочеркасскому Полицеймейстеру. О вышеизложенном же составить настоящий Протокол, который представить Господину Тифлисскому Губернатору вместе с донесением о времени действительнаго выезда Микалянца в Новочеркасск.

Тифлиссский Полицеймейстер Л.Мастицкий  
И.д. Помощника ПравителяКанцелярии

Նույն տեղում, թթ.307-308: Բնագիր: Ձեռագիր:

N 5

ԱՔԱՈՐԻՑ ՅԵՏՈ ՔՐ.ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ ԿՈՎԿԱՍ ՎԵՐԱԳԱՆԱԼՈՒ  
ՄԱՍԻՆ ԹԻՖԼԻՍԻ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏԻ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ ՏԵՂԻ  
ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ

N 695

2 հուլիսի 1892թ.  
Թիֆլիս

Рапорт

Ссылаясь на рапорт мой, от 2 Мая 1891 г. за N 424, имею честь доложить Вашему Сиятельству, что высланный в прошлом году из гор.Тифлиса бывший армянский учитель Христофор Микалянци, за окончанием годичнаго срока административной ссылки возвратился в г.Тифлис и остановился на квартире по 2-ой Овражской улице в доме Тихоновой под N2 в районе 2-го участка вместе с дворянкою Евгениею Лаврусевич, состоящею под негласным надзором полиции.

Полицеймейстер  
И.д. Помощн.ПравителяКанцелярии Подпись  
Նույն տեղում, թ.310: Պատճեն: Ձեռագիր:

Մ Ա Ս Ս

N 6

В ночь на понедельник, 26 текущего Ноября были задержаны полицией, при выходе из своей квартиры, русские подданные Бедрос Заварьян и Ованес Юсуфиан, первый-директор, второй-учитель здешних армянско-григорианских школ мужской и женской; оба вновь выписаны из Тифлиса училищным советом. Их повели в полицейский участок,-вместе с другим, бывшими у них в гостях, учителями, допросили и отпустили. На другой день, по утру, в обе школы явилась полиция и пригласила упомянутых лиц в конак,-где их заперли, без нового допроса, на квартире же, занимаемой ими совместно, произвели обыск и забрали все печатное и писанное.

Узнавъ об этом лишь к вечеру того дня, потребовал выдать мне арестованных, что и было исполнено немедленно и безпрекословно. Переночевать их оставил в консульстве,-опасаясь новых произвольных действий турецкой власти,-на утро же отправил Генерал-Губернатору резкий протест на сказанные действия прибавив, что никаких впрочем, препятствий дознанию не чиню, лишь бы оно было обусловлено точным соблюдением капитуляций. Аали-бей, перед драгоманом консульства, передавшим ему мое отношение, словесно извинился за своих подчиненных, назвал их невеждами, и дал слово, что впредь все будет идти правильно. Заявление было устное, потому что от писания мне такриров, хотя бы только препроводительных, он уклоняется, выжидая: как отнесется Порта к известному Вашему Превосходительству факту возвращения мною его такрира, не снабженного французским переводом. Для дела это впрочем безразлично.

Действительно, дальнейшее следствие происходило в надлежащем порядке и в присутствии драгомана консульства. Следствие это ничего, однако, в вред заподозренным, пока, не обнаружило. Некоторое недоумение возбудило лишь письмо из Петербурга на имя Заварьяна, пришедшее по русской почте через два дня после вышеописанного и отобранное полицией, на улице, от взявшего его из Агентства сторожа армянской школы. По словам Заварьяна (воспитанника Петровской земледельческой академии), один из бывших его товарищей, тоже армянин, упоминает там очень туманно о заветных желаниях "гайкансага" народа.

Вместе с этим письмом, у того-же сторожа было захвачено другое, подавшее повод к новым преследованиям и арестам.

Писано оно неким Рунином Хан-Азадовым бывшим в прошлом году здесь учителем и ныне проживающим в Батуме; адресовано Джанику Вартикияну, письмо водителю церковного совета, но, по вскрытии конверта, в нем оказался другой, на адрес Хамяка Кушбульяна, учителя школы.

В письме этом, кроме общих мест патриотического свойства, выражается между прочим, уверенность, что "не только Хамяк (турецко подданный), но и новый коллега его по школе, князь Аргутинский Долгорукий, будут ревностными распространителями "зурны", каковую зурну могут получать с каждым парходом Руссаго "Общества, за исключением "Одессы" от первых помощников командиров этих парходов...".

Тотчас-же последовали меры строгости. Хамяк скрылся; взяли в качестве заложников мать и брата; хозяйку квартиры, где проживал некогда

Хан-Азадов, а ныне Заварьян с Юсуфианом, Вартикияна, и обратились ко мне с просьбою об арестовании Аргутинскаго.

Князь Аргутинский, сверстник Заварьяна и Юсуфиана, (не старше 25 лет), прибыл сюда неделю позже их из Тифлиса, тоже на учительскую должность, за 80 франков в месяц. Имя его, молодость, ничтожность содержания и загадочность поведения с первых дней привлекли на себя внимание местной полиции, начавшей следить за ним шаг за шагом.

В Консульство он, по прибытии не являлся и я узнал о его присутствии в Трапезунде лишь от Генерал Губернатора, высказавшего мне, при этом подозрение свое: не эмиссар-ли он армянскаго революционного общества, будто-бы тайно существующаго в Тифлисе? В виду подобнаго сообщения, я не замедлил приласать Аргутинскаго и посоветовать ему возвратиться на родину; он колебался, ссылаясь на свою бедность, однако, в конце концов, обещал уехать. Требование об аресте захватило его врасплох, во время сборов в дорогу.

Я не признал возможным противиться этому требованию, поставленному на столько серьезно, что, для успеха следствия, испрашиваемо было даже одиночное заключение,( при консульстве ), с запрещением доступа к арестованному кого бы то ни было. Поэтому, не имея себя помещения, соответствующаго точному соблюдению таковаго условия, и, во избежание возможных подозрений в неискренности моей или потворстве подпольной пропаганде, я изъявил письменно Генерал Губернатору согласие на вышеозначенную предупредительную меру и препроводил обвиняемаго в конак, с уговором, чтобы его там содержали прилично и допрашивали не иначе, как при делегате консульства.

Ни обыск, ни первый допрос князя Аргутинскаго ничего не выяснили. Мне говорили, что под условным, употребленным Хан-Азадовым выражением "зурна" можно разуметь "Генчак" (...звонк), газету издаваемую в Лондоне.- Добиваясь заключения следствия над Заварьяном и Юсуфианом, чтобы выслать и их на Кавказ.

Выше изложенные обстоятельства произвели в армянской среде здешняго городскаго населения значительное смятение. Боятся даже разговаривать, предполагая в каждом шпиона. Последних действительно здесь достаточно.

Советы армянской общины-церковный, гражданский и училищный,-собирались много раз для совещания: делать ли представления Правительству или нет? и ничего не решили. Вали проявляет лихорадочную деятельность в розыскивании корней зла, но если бы таковые и нашлись, то трудно предположить, чтобы здешняя почва благоприятствовала их росту и укреплению. Армяне составляют едва шестую часть общаго количества жителей Трапезунда, в Виляете-же процент их совершенно ничтожен. На оборот: благоразумие и покорность, в соединении с расчленивостью,-отличительныя их качества.

Вали затребовал от Агентств иностранных компаний представления ему корреспонденци на имя заподозренных лиц. Те ответили отказом.

Я пригласил Русское Агентство передавать подобную корреспонденцию мне и вместе с тем, предупредить помощников капитанов о возводимом на них обвинении.

Նուգն տեղում, ԹԹ.97-99: Պատճին: Չեռապիր:

N 7

ՏՐԱՊԻԶՈՆՈՒՄ ԶԵՐԲԱՎԱԿԱՆՎԱԾ ՀԱՂՂՈՒԹՅԱՆԻՆ ԵՎ  
Բ.ԶԱՎԱԼՈՒԹՅԱՆԻՆ ԲԱԹՈՒՄ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՏԵՂԻ ԳԼԽԱՎՈՐ  
ՀՅՈՒՊԱՏՈՒՊ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԱԹՈՒՄԻ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏԻՆ

Проживающие в Трапезунде русско-подданные Князь Иосиф Аргутинский Долгоруков, Дворянин Барсег Заварян по подозрению в политической неблагонадежности были арестованы турецкими властями первый в двадцатых числах Ноября прошлого года, второй через два месяца после того.

Суд разбиравший дело в конце февраля сего года оправдал Аргутинского и приговорил Заваряна к пятилетнему поселению в черте стен какого либо крепостного города.

На это решение суда последовал протест в высшую инстанцию как со стороны Заваряна, так и Прокурора. На основании же протеста сего последнего не позволено было Аргутинскому вернуться на родину.

Между-тем как в Трапезунде составлялся протокол судебного разбирательства, от Императорского Посла в Константинополе получена была Консульством 20-го сего Апреля месяца, телеграмма следующего содержания: „Русско-подданные Заварян и Аргутинский будут на днях переданы Вам. Отправьте их первым случаем в распоряжение наших Кавказских властей.“- Действительно в прошлый вторник, 23-го Апреля, турецкая администрация передала нам что Заварян свободен и что к отправлению как его, так и Аргутинского в Россию, препятствий не имеется.

Вследствие вышеизложенного, пользуясь сегодня отходом русского парохода, отправляю в Батум вышеназванных лиц в сопровождении Драгомана Консульства Г.Мегаворяна, для доставления в распоряжение полиции.

Извещая об этом Ваше Высокоблагородие, имею честь покорнейше просить Вас, Милостивый Государь, во исполнении распоряжения Г-на Посла, уведомить меня о доставлении вышеупомянутых лиц Батумской Полиции.

И.Д. Генеральнаго Консула

Նույն տեղում, թթ. 153-154: Պատճեն: Ձեռագիր:

N 8

ՀԱՐՂՈՒԹՅԱՆԻ ԵՎ Բ.ՋԱՎԱԲՅԱՆԻ՝ ԲՈՒԹԱՅԻՆԻ ԳԱԼՈՒՄԱՍԻՆ ԹԻՖԼԻՍԻ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏԻ ՋԵՎՈՒՑԱԳԻՐԸ

N 442

1 մայիսի 1891թ.  
Թիֆլիս

Рапорт

Имею честь доложить Вашему Сиятельству, что вчерашнего числа, прибыли в г.Тифлис из г.Кутаиса кн.Иосиф Егорович Аргутинский-Долгорукий и двор.Бараг Меликович Заварян, над которыми, согласно предписанию Вашего Сиятельства, от 12 Февраля с.г. за N 48, учреждено наблюдение.

Полициймейстер

И.д.Помощн.Правителя Канцелярии

Л.Спегальский

Նույն տեղում, թթ. 159: Բնագիր: Ձեռագիր:

Մ Ա Ս Յ

N 9

ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ԼԻԽԱՐՑՈՎԻ ՏԵՂԵԿԱՆՔԸ ՍՏԵՓԱՆ ԱՔՐԱՀԱՄԳԱՆՑԻ (Ա.ՋՈՐՅԱՆԻ - Գ.Խ.) ՄԱՍԻՆ

N 250

13 Հունվար 1894թ.  
[Թիֆլիս]

Փ.ու.օ.	Աբրամյան Ստեպան Կրիկորով
Звание и происхождение	Бывший студент Петровской Академии, сельский житель Эриванской губ.
Вероисповедание	
Время и место рождения	1867 г.
Место жительства	Цюрих / вх. N 250 / 94г.
Место воспитания (среднее и высшее)	Учился в Петровской Академии
Занятия и средства к жизни	
Состоит ли под негласным надзором полиции и не ограничили в праве выбора места жительства	В ведомостях негласного надзора за 1893г. нигде не значится. На основании 16 ст. воспрещено жить в Москве и Московской губернии.
Семейное положение и родственные связи	Сведений не имеется

Означенный Степан Абрамянц, за участие в студенческих беспорядках, происходивших в Марте 1890г. был уволен из Петровской Академии и ему на основании 16 ст. по распоряжению Московскаго Генерал Губернатора воспрещено жить в Москве и Московской губернии. Вследствие сего Абрамянц был подчинен негласному надзору полиции, под каковым надзором и состоял в 1890г. в Эриванской губернии и в 1891 в Тифлисе. Проживая в Тифлисе, Абрамянц арестовался местным начальником Жанд.Управления лицом „крайне подозрительным“.

В ведомостях негласного надзора за минувший 1893г. Абрамянц нигде не значится.

Помимо изложенного имеются сведения, что Степан Абрамянц, проживая в 1891г. в Тифлисе находился в сношениях с Николаем Матинянцем, привлекавшимся к дознанию по делу об Армянском движении в г.Александрополе.

В одном письме Василия Гусева, отобранном у Истоминой имеется следующая приписка:

Р.с. “Если Степан или Семен Шахвердов и Абрамянц и теперь еще в Москве ( и они были еще летом 1889г. и писали Д.П.) то было бы интересно познакомиться с ними, а если это люди свои, то через них завести связи. “

Тайн.Сов.

Лихарев.

Ռուսաստանի Դաշնութան պետարխիվ, ֆ.102, 1894, ց.92, ք.65, թթ.1-2: Պատճեն: Մեքենագիր:

N 10

ՍՏԵՓԱՆ ԱՔՐԱՀԱՄԳԱՆՑԻ՝ ՑՑՈՒՐԻՆԻՑ (ՇՎԵՑԱՐԻԱ) ՌՈՒՍԱՍՏԱՆ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ՑԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԵՐԵՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԻ ԺԱՆԴԱՐՄԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ [ԹԻՖԼԻՍԻ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆԸ]

N 448

28 դեկտեմբերի 1893թ.  
Երվան

Исключенный из Петровской Академии в 1890 году, бывший студент Степан Крикоров Абрамянц состоял под негласным надзором в Эриванской губернии, а затем переехал в г.Тифлис, где навлек подозрение в прикосновенности к армянскому движению, почему местной полицией, 18 Мая 1891 года, был произведен обыск в его квартире, но к сожалению в его отсутствие, и не давшей результатов.

Так как Абрамянц в квартиру свою более не вернулся и завсеми принятыми мерами в г.Тифлисе не розыскан, то есть основание допускать соучастие его в национальном движении. Розыск Абрамянца производился с 1892 года в Эриванской губернии, в месте его родины, Нахичеванском уезде и в Закавказском округе, где ныне проживают его родители но нигде он не оказал сведений о месте его нахождения представлялось возможным добыть.

Ныне Унтер-Офицер Нахичеванского пункта донес, что при объезде по участку встретился с братом Абрамянца, Аристакесом и в честной беседе узнал, что Степан Абрамянц проживает в Цюрихе, занимает должность учителя, получая 60 руб. в месяц. С сентября текущего года, родные получили три письма от Степана и, так как он соскучился по родине, то предполагается изыскать возможность вернуться в Россию.

О вышеизложенном имею честь донести.

Полковник /подпись/

Նույն տեղում, թթ. 3-4: Բնագիր: Մեքենագիր:

N 11

ՌՈՍՍՏՄԻ ԿՈՂՄԻՑ ՌՈՒՄԻՆԻԱՅՈՒՄ ԾԱՎԱԼԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՌՆԻԹՅԱՆ ՄԱՍԻՆ, ԳՐԱՍԵՆՑԱԿԻ ՓՈԽՂԵԿԱՎԱՐԻ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԸ ԹԻՖԼԻՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ

8 փետրվարի 1895թ.  
[Թիֆլիս]

Товарищ Министр Внутренних дел, Заведующий Полицией, в конфиденциальном письме от 25 минувшего Января за N 767, уведомил Главноначальствующаго, что о задержанных в Декабре прошлого года в Румынии, за участие в армянском движении Параскеве Стоянове и Вартанезе Папазиане Ростоме Министерством Иностранных Дел доставлены следующие сведения.

Стоянов Параскев, 24 года, болгарский подданный, сын болгарского депутата, изучал медицину в Бухарестском Университете и за несколько дней до ареста получил место помощника окружного врача в Румынии. До прибытия в Румынию, за участие в революционных происках, был осужден во Франции к двухлетнему тюремному заключению и штрафу в 3000 фр., а также изгнан из Швейцарии и Италии. Находился в переписке с анархистами Гамоном (Париж и Лондон), Яковом Мюллером (Швейцария), Луиджи Галиони и Паоло Чиччи, отбывающими в настоящее время тюремное заключение в итальянских тюрьмах, Марком Сулломом (Александрия), Эттором де Грозе (Милан), Энрико Малатеста (итальянский эмигрант в Лондоне) и другими. Из армянских революционеров он был особенно близок с проживающим в Женеве Сашей (Sasha) Атабекентом (известный в кругу членов партии под именем Атабека), пользующимся громадным влиянием среди своих соплеменников.

\* Խոսքը վերաբերվում է Ժնևում բնակվող Հայ անարխիստին, որը Հարցերով օժանդակել է «Դրոշակի» խմբագրությունը ժնև տեղափոխելու եւ Եվրոպայում ՀՅԴ գործունեությունն ակտիվացնելու ուղղությամբ Ռոստոմի գործարար շանքերին:

Папазиан Вартанез, по прозвищу Ростом (Ростум), 29 лет, персидский подданный, проживал последнее время в Швейцарии и России. Состоит деятельным членом "Армянской Революционной Федерации", издающей газету "Трошак" (Штандарт). В Бухарест прибыл по поручению Атабекента в ноябре прошлого года, для свидания с Параскевой Стояновой, который должен был доставить ему средства для поездки в Турцию. Опасаясь ехать по вышнему у него персидскому паспорту, он получил от Стоянова румынский паспорт, которым, однако, не воспользовался по незнанию румынского языка, в виду чего решил несколько обождать и уехал в Галии, был там 2/14 декабря задержан. При обыске у него отобрано рекомендательное письмо от редакции газеты "Трошак" и брошюры с программой движения, предназначавшиеся к раздаче лицам, указанным в вышем у него списке. Судя по найденному у Папазиана другому письму из Женевы в котором высказывалось беспокойство за его безопасность, на него возложено было поручение известной важности.

Расследованием, произведенным по настоящему делу, выяснено, что "Армянская революционная федерация" находилась в сношениях с кружками анархистов, от которых позаимствовала теорию "пропаганды действием", причем, согласно изложенной в газете "Трошак" программе, названная федерация, между прочим, предполагала: организовать революционные банды, вести борьбу против должностных лиц с целью терроризировать последних и подвергнуть грабежу и разрушению присутственные места. По показанию Папазиана, программа эта отпрятана в России, где заседает, будто бы, "Центральный Комитет", хотя на обложке отобранной у него армянской брошюры значится венский адрес. Кроме того, по словам названного лица указанная программа предполагала: организовать революционные комитеты в Турции, России и повсюду, где это окажется возможным, и стремиться к приобретению оружия для населения, а также приступить к террору по отношению к должностным лицам, правительственным учреждениям и шпионам. Судя по адресам, отобранным у названного армянского агитатора он по-видимому, должен был действовать лишь в Турции.

Об изложенном Канцелярия, по приказанию Главноначальствующаго, имеет честь сообщить Вашему Сиятельству для сведения и ссображений, в дополнение кконфиденциальному отзыву от 26 минувшего Января за N 49.

За Вице Директора  
За Делопроизводителя

Վ.ԿՊՊԱ, ֆ.17.ց.2.դ.1001, թթ.15-16: Պատճեն: Զեռագիր:

**ՓԱՍՏԱԹՈՒՂԹ ՕՍՄԱՆՑԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԱՆԴԱՄՆԵՐ Գ.ԶՈՀՐԱՊԻ ԵՎ Վ.ՍԵՐԻՆԳՈՒԼՑԱՆԻ ԵՂԵՐԱԿԱՆ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Ըստ կենսագրական տվյալների՝ 1915 թ. օգոստոսի 24-ին ձերբակալվելով, սեպտեմբերի 13-ից Հարազատ ժողովրդի բռնազավթած բելորոսների Հնտ եւ նրան բախտակից՝ Հայ մեծ երգիծարան Երվանդ Օտյանին (1869-1926), ի վերջո, 1918թ. նոյեմբերի վերջերին, Հաջողվում է վերադառնալ Կ. Պոլիս: «Նս այն մարդն եմ, որ Տառապանքը տեսա»,- Երևմտա մարգարի նման իր մասին ասել է Ե.Օտյանը: Հրաշքով փրկված՝ վերադառնում է, եւ սկանտեսների Հաղորդած-պատմածներով, բո-

<sup>1</sup> Ս.Մանուկյան, Երվանդ Օտյան, կյանքը, Հրապարակախոսությունը, գեղարվեստական վաստակը, Երևան, 1997, էջ 290:

նագաղթի դատան ճանապարհներին անձամբ տեսած, լսած, ճաշակածի փաստագրությամբ թղթին հանձնում «Դէպ ի մահ: Զօհրայ եւ Վարդգէս» վավերագիր-հուշագրութիւնը: Այն ներկայացնում է նշանավոր փաստաբան, օսմանյան խորհրդարանի անդամ, ազգային երեսփոխան, հրապարակագիր ու գրապետ Գրիգոր Զօհրայի (1861-1915) եւ ուսուցիչ, մտավորական ու Տեղափոխական գործիչ, օսմանյան խորհրդարանի անդամ, ազգային երեսփոխան Հովհաննես Աբրիեղյանի (1871-1915) հայտնի էր նաև Զարմար, Գիտակ եւ Հատկապես Վարդգես անուններով կյանքի վերջին օրերը, նրանց եղբրական մահը: Լեզվաժը, բնականաբար, հրապարակվում է: Ասիայի հրատարակման օրից այն անհայտ էր անգամ ուսումնասիրող-ներին:

Հետամուտ առհասարակ այդ տարիների մամուլի արձագանքներին՝ առաջինը՝ *Ерванд Отян* - «На смертном пути. Зораб и Вардгес» վերնագրով հուշագրութիւնը, մենք հրապարակված գտանք Բաքվի «Наше время» աստիակու լրագրի 1919թ. ապրիլի 27-ի համարում: Հայտնաբերելուն պես այն հրապարակեցինք՝ նշելով, որ հոգվածի հայրենի տպագիր բնագիրը ցարդ անհայտ է: Վաստակաշատ գրականագետ Ալբերտ Եարուբյանն իր «Գրիգոր Զօհրայի կեանքի եւ գրական ժառանգութեան էջերից» արժեքավոր գրքի «Նդերապատում: Զօհրայի եւ Վարդգէսի ձերբակալութիւնը, արտքն ու սպանութիւնը վաւերագրերով, վկայութիւններով եւ մեկնաբանութիւններով» բաժնում գնահատել է հրապարակված նյութը, համարյա ամբողջովին թարգմանել հայերեն, ծանոթագրել եւ հրապարակել: «Հայաստանի Հանրապետութիւն» թերթում էլ Անահիտ Թովմասյանը արժեքավորելով այս գիրքը՝ մեջբերում է կատարել Ա.Եարուբյանի այդ թարգմանութիւնից՝

Պարզ է՝ Ե.Օտյանի հուշագրութեան հայերեն տպագիր բնագիրը հայտնաբերելու որոնումները շարունակեցինք եւ տարիներ անց այն գտանք Թիֆլիսում հրատարակված «Աշխատավոր» թերթի 1919թ. ապրիլի 16-ի համարում: Թերթում՝ «Դէպի մահ» ընդհանուր խորագրի ներքո, տպագրվել են Ե. Օտյանի եւ Ջիթուհու հոգվածները՝ «Զօհրայ եւ Վարդգէս» ու «Շատերից մէկը», համապատասխանաբար I եւ II նշումով: Ջիթուհու հոգվածի վերջում, նրա անվան ձախ կողմում, փափագծերի մեջ նրված է «Աբրամարտ»: Ակնհայտ էր, որ այս երկու հոգվածն էլ սկզբնապես տպագրվել են «Աբրամարտ» անվանումով լրագրի համարներից մեկում, որտեղից էլ արտատպվել են Թիֆլիսի «Աշխատավոր»-ում: Եվ քանի որ «Աբրամարտ» լրագրի մասին հայ պարբերական մամուլի մատենագիտութեան ցանկերից կարելի է եզրակացնել, որ այն Կ.Պոլսում «Ազատամարտ» թերթի փոխարեն 1918 թ. կարճատե հրատարակութիւն է, եւ որ նրա համարները (13-32) պահվում են միայն Վիեննայի Միխիթարյան միաբանութեան մատենագրարանում, այսինքն՝ այն մեզ հասու չի կարող լինել, ուստի ընթերցող հանրութեանը ծանոթացնելու նպատակով այն հրապարակեցինք «Հայաստանի Հանրապետութիւն» թերթում՝:

Որոշ ժամանակ անց, սակայն, բոլորովին պատահար պարզեցինք, որ Հայաստանի ազգային գրադարանի «Հնաստիպ, հազվագյուտ եւ անձեռնմխելի գրականութեան» բաժնում կան «Աբրամարտի» համարները, որոնք, ինչպես ասվեց, մատենագիտական որևէ աղբյուրում նշված չեն: Ըստ այդմ, նախ ճշտեցինք, որ 1918թ. զեկտեմբերի 7-ից «Արդարամարտ» լրագիրը վերանվանվել է «Աբրամարտի», իսկ զեկտեմբերի 27-ից՝ «Ճակատամարտի»: Վերջնականապես պարզվեց, որ Ե.Օտյանի այս վավերագիր-հուշագրութիւնը տպագրվել է «Աբրամարտ» օրաթերթի զեկտեմբերի 15-ի եւ 19-ի համարներում: Ճշտվեց նաև, որ «Աշխատավորի» արտատպութեան մեջ խորագիրը «Դէպի մահ» է, «Աբրամարտում»՝ «Դէպ ի մահ»:

<sup>1</sup> Տես Ա.Ա.Զաքարյան. Ерванд Отян о гибели Григора Зограба.— “Вестник общественных наук” АН АрмССР, 1989, №2, с. 79—82; “Голос Арменин”, 20.04.2000.

<sup>2</sup> Ալբերտ Եարուբյան. Գրիգոր Զօհրայի կեանքի եւ գրական ժառանգութեան էջերից: Եղբրապատում: Օրագրութիւններ [Թեյլութ. 2000], էջ 29-31, 33, 63, 74, 86:

<sup>3</sup> «Հայաստանի Հանրապետութիւն», 20.10.2000:

<sup>4</sup> «Հայ պարբերական մամուլի մատենագիտութիւն (1794-1967): Համահավաք ցանկ», Երևան, 1970, էջ 34, 55, «Հայ պարբերական մամուլը: Մատենագիտական համահավաք ցուցակ (1794-1980)», Երևան, 1986, էջ 113:

<sup>5</sup> «Հայաստանի Հանրապետութիւն», 13.02.2002:

Բացի այդ, ճշտվեցին ուղղագրութիւնն ու կետագրութիւնը, ուղղվեցին տարբերքները:

Հատուկ ուզում ենք նշել, որ Ե.Օտյանն իր այս վավերագիր-հուշագրութիւնը գրել է անկաստանների հավաստի տեղեկութիւնների հիման վրա, որի ճշմարտացիութիւնը կասկած չի հարուցում: Թեև Ա. Եարուբյանն իր վերահիշյալ գրքում գրում է. «Յօդուածում կան փաստական ինչ-ինչ անճշտութիւններ, որոնք բացատրելի են. Մաղլումեանը Զօհրայի պատմածները վերարտագրել է յիշողութեամբ, իսկ Օտեանը գրել է առկա դեպքերից մի քանի տարի անց»: Այսպէս «Վարեւորը սակայն յոյժ ուշաբժան այն տեղեկութիւններն են, որոնք թարգմանաբար առաջարկում ենք ընթերցողին»:

Ի զուգահեռ հուշագրութեան ուսման թարգմանութիւնը շատ տեղերում հեռանում է հայերեն բնագրից, իսկ Վարդգեսի ձերբակալութեան հանգամանքների մասին տողատակ հատվածը թարգմանված չէ:

Ինչպէս Ե.Օտյանի «Դէպ ի մահ: Զօհրայ եւ Վարդգէս» վավերագիր-հուշագրութեան ցայտօր անհայտ հայերեն տպագիր առաջին բնագիրը ներկայացնում ենք զետեան հանրութեանը, ուսումնասիրողներին, ինչպես եւ Հայկական հարցով ու ինդիլիներով գործնականում զբաղվող կազմակերպութիւնների ուշադրութեանը: Այս առումով հիշելով հիշենք մենք Շիրազի «Հայոց դանթեականի»՝ Հետեւյալ տողերը.

Հայ կոտորածներն ով մտքից հանի՝  
նա է թշնամին՝ նոր Հայաստանի:

**Անուշավան Զաքարյան**  
բանասիրական գիտութիւնների  
թեկնածու.

**ԴԵՊ Ի ՄԱՀ  
ԶՕՀԻԱՊ ԵՎ ՎԱՐԴԳԷՍ  
Ս.**

Պոխէն մինչև Ուրֆա, իրենց ցաւատանը ուղևորութեան միջոցին, երկու նահատակները, Զօհրայ եւ Վարդգէս, գուրգուրոտ անհամարձեցով մը ողջունուած են Հայրենու կողմէ: Երբ իրենց արտորումն երկու ամիս ետքը ես այ նոյն ճամբով մինչև Հալէպ գացի, տեսայ, որ իրենց յիշատակը ամենուն մտքին մէջ դեռ վստ մնացած էր: Գոնիս, Ատանա, Հայէպ, ամեն տեղ այդ անդրանիկ զօհրուեն վրայ կը խօսէին: Հակառակ ոստիկանական հսկողութեան՝ շատ Հայեր, վտանգը աչք տանելով, գացած տեսնուած էին իրենց հետ ու հիմա երկիւղածութեամբ կը վերլիշէին անոնց վերջին խօսքերը:

Ամէնուն վրայ խորին տպաւորութիւն թողած էր Զօհրայի ընկճուած վիճակը. մինչ Վարդգէս զուարթ անտարբերութեամբ եւ ծիծաղկոտ զէմքով մը կը շատախօսէր իրենց մտեցողներուն՝ Զօհրայ հազիւ լռութիւնը կը խցէր քանի մը խօսք արտասանելու համար: Ամբողջ ժամեր անընդհատ կը ծխէր, մտածումներ մէջ ընկնմած:

Վարդգէս, միշտ լուստես, կը ջանայ եղեր միխիթարի ու սրտայնգիլ իր բարեկամը բայց ի զո՛ւր:

- Մեզի մեռցնել կը տանին,- կը կրկնէ եղեր Զօհրայ:

Հուլիսի մէջ, Պատօն Օթելի տէրը՝ Պ.Մաղլումեան, քանիցս ճաշի կը հրաւիրէ երկու տարագիրները, որովհետև հոն գտնուած ատենին բուսական լայն ազատութիւն տրուած է եղեր իրենց: Տիկին Մաղլումեան պատմած է ինքի, թէ սեղանին վրայ արտօթակով կուտէր Վարդգէս, մինչդեռ Զօհրայ հազիւ քանի մը պատտու կտանէր, ան այ ստիպումներով: Յաճախ լալով կը յիշէր իր կիներն ու գաւազները:

Զօհրայ իր ձերբակալման պարագաները պատմած է Պ.Մաղլումեանի: Կարծէ, որ յիշենք գտնոնք:

Չերբակովման գիշերը Զօհրայ Ալբրըլ տրիանի մէջ մինչևե կէս գիշեր թուղթ թաղացեր է Թալէաթ փաշայի եւ Խալիլ պէյի հետ: Յետոյ ոտքի կելլէ մեկնելու համար: Թալէաթ ինքն այ ոտքի կելլէ ու մտենայով Զօհրայի անոր երեսը կը համբուրէ:

<sup>1</sup> Ալբերտ Եարուբյան. նշվ. աշխ., էջ 29:

Համակրանքի այս անսովոր ցույցը կը շփոթեցնէ Զօհրապը:  
-Ինչո՞ւ Համար այս Համբույժը,- կը Հարցնէ:

-Արեւն ըխաւ,- կը պատասխանէ միւսը:

Զօհրապ դուրս կելլէ սրահէն չափազանց յուզուած: Նախազգացուծը կուեննայ, թէ այդ Համբույժը արեւուտը նշան մըն է:  
Դուրսը սաք ու գեղեցիկ գիշեր մըն էր: Կորոշէ Հետոսն երթալ մինչեւ իր՝ Այազ Փաշայի բնակարանը:

Հալու ճամբու ելած՝ կը նշմարէ, որ մէկը կը Հետապնդէ զինքը: Պահ մը կը խորհի, որ թերեւս սխալ ենթադրութիւն մըն է ըրածը եւ փողոցին միւս կողմը կ'անցնի: Մարդն ալ կը Հետեւի իրեն: Զօհրապ քայլերը կ'արգակէ, նոյնը կ'ընէ զինքը Հետապնդողը, վերջապէս՝ անձամբեր ետին կը դառնայ եւ կըսէ.

-Արեւօք զի՞նչ կը Հետապնդէք:

-Այո,-կը պատասխանէ միւսը, որ ոստիկանութեան բոմիսէր մըն է եղեր:

-Ինչո՞ւ Համար...:

-Այնպէս Հրաման եղած է ինծի:

-Գիտէ՞ք, թէ ես ով եմ:

-Այո, Զօհրապ է՞ք նոյնի:

-Բայց սխալմունք մը ըլլալու է,- կը գոչէ խեղճը,- ես Հիմա Ներքին Գործոց նախարարին Հետ էի...

-Կրնայ ըլլալ, բայց ինձի տրուած Հրամանը բացարձակ է եւ ստիպուած եմ Հպատակելու:

Զօհրապ, ճարահատ, ճամբան կը շարունակէ ու կը Հասնի բնակարանը, որուն դրան առջեւ ոստիկան մը կը սպասէր: Քոմիսէր եւ ոստիկան ամբարձրմանին սանդուխներէն վեր, կը Հետեւին իրեն:

-Ի՞նչ է ձեզի տրուած Հրամանը,- կը Հարցնէ Զօհրապ:

-Ձեզ ոստիկանատուն տանելի:

-Հիմա՞, անմիջապէ՞ս...:

-Այո, անմիջապէս:

-Եւ եթէ երթալ չուզիմ:

-Այն ստան ըռնի պիտի տանինք:

-Ձե՞ք գիտեր, որ ես մէկտուս եմ:

-Գիտենք, բայց մեզի տրուած Հրամանը բացարձակ է:

Քոմիսէրը կը յայտնէ նաեւ, որ Հետեւեալ առտու իսկ, այսինքն քանի մը ժամէն, ճամբայ պիտի կլլէ, Հետեւաբար անհրաժեշտ գոյքերը կրնայ Հետը առնել: Զօհրապ կը մտնէ իր բնակարանը, ծայն կուտայ իրեններուն, եւ ավշափոյ պայուսակ մը պատրաստելէ ետքը կուզայ կը յանձնուի երկու ոստիկաններուն, իր կնոջ ու աղջկան ողբ ու կոծին միջեւ:

Նոյն միջոցին եւ քիչ մը տարբեր պայմաններու մէջ (°) կը ձերբակալուի նաեւ Վարդգէս, եւ առտուն կանուխ երկուքը միասին կը բերուին Հայտար Փաշայի կայարանը: Իրենց կրնկերանան եղեր ոստիկան մը եւ սիվիլ Հազնուած լրտես մը:



(°) Տս ուն Հ շտակ իրաւ պատայ երեսին.

Յօհրապ

ու.թեան Տնօրէն վերստանալու Հ ւ նոյն օրը պի եզու կորած Հրէ



Վարդգէս

անկերներ- լէն յափ- իրներուն առած, կը

-Մենք ալ քեզ կը փնտռէինք:  
Եւ բրտօրէն կ'առաջնորդէ բանա, միւսնոյն ստան, Հայ «խաֆիէ»-ներու առաջնորդութեամբ եւ բազմաթիւ ոստիկաններու միջոցաւ խուզարկել տալով անոր բնակարանը:

Ոստիկանը կ'ուզէ երրորդ կարգի վախօնի մը մէջ մտցնել երկու արտարականները, Վարդգէս եւ Զօհրապ կ'ընդգիծանան: Ոստիկանը կը պնդէ, առաջինը թէ վախօնը յատկապէս պատրաստուած է իրենց Համար: Երկու տարագիրները ձայն կը բարձրացնեն ու կը պահանջեն, որ առաջին վախօնով մը տարուին:

Երկու կողմէն ձայները Հետզհետէ կը բարձրանան: Ի վերջոյ Զօհրապ գրպանէն 25 ոսկիոց թուղթ մը կը Հանէ, ոստիկանին կուտայ եւ կ'ըսէ, որ առաջին կարգի չորս տոմսակ առնէ իրենց Համար:  
-Եթէ ոչ,- կ'ըսէ,- տեղ մըն ալ չեմ երթար:

Ոստիկանը կը ստիպուի տեղի տալ, անշուշտ 25 ոսկիէն աւելցած գումարն ալ գրպանելու յուսով:

Ու այսպէս ճամբորդութիւնը կը կատարուի առաջին կարգով:

Հայտար Փաշայի կայարանին Հայ պաշտօնեաները ճանչնալով Զօհրապը, կ'երթան իմաց տալու Պ. Անտոն Թարաքի, որ կը փութայ վար իջնել, առանց գիտնալու, թէ Զօհրապ ինչ պարագաներու տակ կը ճամբորդէ: Այս վերջինը, երբ կը նշմարէ Պ. Թարաքը, որ դէպի իրեն կուգայ, ձեռքովը նշան կ'ընէ, որ ձեռնուհայ: Պ. Թարաքը, որ վերադարձիս այս մանրամասնութիւնը պատմեց, ասելցուց.

-Ինչ՞ Զօհրապը չափազանց յուզուած, սո՞գոյն եւ ընկճուած տեսայ: Վախօնին անկիւնը քաշուած, լուռ ու մուկ, անընդհատ կը ծխէր, մինչեւ կ'առաջնորդուին ճամբայ կլլելը:

Բ.

Գոնիա Հասնելուն՝ երկու տարագիրները ընդունուած են մէկ քանի Հայերու կողմէ, որոնք փութացած են իրենց ձեռքէն եկած օգնութիւնը բնոյւ, Հակատակ սպանանցող վտանգին:

Ոստիկանները թոյլ տուած են տեսակցիլ պայմանաւ, որ թուրքերէն խօսին: Այդ պայմանին տակ բնականաբար խօսակցութիւնը շատ աննշան եղած է:

Առանա նոյնպէս Հայրենակիցներ, իմանալուն երկու ծանօթ Հայերուն ժամանումը, փութացած են կայարան: Իրենցմէ մէկը, Միհրան Պօյաճեան, ծանօթ վաճառական մը, ծոտակայ կայարանի մը Համար տոմսակ առնելով, յաջողած է Զօհրապի ու Վարդգէսի Հետ տեսակցիլ Հայերէն լեզուով, եւ Հարցնել, թէ ի՞նչ ծառայութիւն կրնայ մատուցանել իրենց:

-Մեր ընտանիքներուն լուր տուէք սակէ անցնելինը-ըսած է Զօհրապ,- ուրիշ ծառայութիւն չենք սպասեր ձեռնէ:

-Դրամի թէ՛ պէտք ունիք, յայտնեցէք:

Ձէ, շնորհակալ ենք, գրամի պէտք չունինք առ այժմ:

-Մեր կը տանին ձեզ:

-Տիրապէք, գատուելու Համար, բայց չեմ կարծեր, որ մինչեւ այնտեղ Հասնինք:

-Եւ Վարդգէս գուարթ ձայնով աւելցուցած է.

-Տիրապէք իր բանաը արգէն ծանօթ է ինծի, արգէն բանա մը չէ, բայց աւելի զէշերը կան: Կը տեսնաք սա գորգը, Տիրապէք իր բանին մէջ իմ ընկերս եղած է, Հիմակ ալ միասին կ'երթանք կոր: Հին բանասկիցներ ենք:

Հալէպի մէջ, ինչպէս լսի, Զօհրապ եւ Վարդգէս բազմատար բաւական ազատութիւն վայելած են, շնորհիւ կուսակալին, որ Զօհրապի Հին ծանօթ մըն է եղեր:

Այդ ազատութենէն օգտուելով՝ տեղացի մէկ քանի Հայեր ծրագիրը կը յղան փախցնելու երկու տարագիրները:

Յանդուգն ծրագիր մը թէ՛ եւ, բայց ոչ անգործադիր: Արար ուղտապաններու միջոցաւ երկու արտարականները Պէյրութ կամ Տրեպիզիտ փոխադրել կ'առաջարկեն ու Հոնիկ նաւով կ'իջարու անցնիլ: Այդ միջոցին Սուրբախան ծովեզերքներու վրայ Հակոբութիւնը շատ խստացած չէր ու այդպիսի փախուստ մը կրնար յաջողիլ: Վարդգէս Հասնելութիւն կը յայտնէ, սակայն Զօհրապ կընդգիծանայ ու բացարձակապէս կը մերժէ, առարկելով, թէ իր առողջութիւնը չի ներեր այդպիսի արկածախնդրութեան մը մէջ նետուիլ:

-Եթէ կ'ուզես՝ դուն փախիր,- կ'ըսէ Վարդգէսին:



Բայց Վարդգէս չհասնիր երբեք իր բարեկամը լքանելու: Ինչ որ այ ըլլայ, քննէ չեմ բաժնուիր,- կը պատասխանէ:

Ջօհրայ ան ասնն կը մտածէ դիմում ընել Ճէմայ փաշայի եւ անոր աջակցութիւնը խնդրել եւ այս մտքով գիր մը կ ուղղէ Սուրիոյ գիկատարին: Ջօհրայի այդ վերջին գրութիւնը, պերճասոս թուրքերէնով մը գրուած, ինչպէս ինծի հաստացեց Պ.Մաղլըմեան, անպատասխանի եւ սպարդիւն կը մնայ եւ վերջապէս երկու արտորակները Հայէպէն ծամբայ կ ելլեն դէպի Ուրֆա:

Պժ գիտեր, թէ որչափ կը մնան Ուրֆա, թերեւս մէկ երկու օր միայն ու հոն-կէ կառքով կը մեկնին դէպ ի Տիարպէքիր, միշտ ոստիկանական հսկողութեամբ: Ահռելի եղևուներ սեղի կուսնեայ Ուրֆայէն քանի մը ժամ անգին: Թուրք չէթէներու խումբ մը կը պաշարէ կառքը: Չէթէներու պետը, ինչպէս լսեցի Հայէպի մէջ, կապի պէշը եղած է, էնպէրի մէկ ազգականը, որ յետոյ Պաղտատի թրքական բանակին հրամանատար կարգուեցաւ, անուշտ Ջօհրայն ու Վարդգէսը սպաննելու քաջա-գործութեանը իբրեւ վարձատրութիւն:

Ոճրագործները կառքը կը կեցնեն եւ կը հրամայեն երկու արտորակներուն կառքէն վար իջնել: Ջօհրայ կ իջնէ, մինչ Վարդգէս կը պտայ:

-Ոչ, վար չեմ իջնիր, կառքին մէջ մեռցուցէք զիս: Այսպէս կը նահատակուին Ջօհրայ եւ Վարդգէս, հայ ազգին երկու աղնու-կան գաւակները:

Կոտապանը, որ ինքզինք թուրք կեղծող հայ մըն է եղեր, կը վերագտանայ Հայէպ եւ ինք է, որ պատմած է եղևութիւնը իր մանրամասնութիւններով:

Չէթէները՝ բնականաբար՝ կը կողոպտեն իրենց գոհերը:

Ջօհրայի նշանուութի մատանին ու ժամացույցը ծախուած են Հայէպի մէջ: Իր ֆէյսը, կը գանուի եղեր, չեմ գիտեր ինչպէս, միսիօնարուհիի մը քով:

Վարդգէսն որեւէ հետք չէ մնացած: Թող իրենց յիշատակը անջինջ մնայ ամենուս մտքին մէջ:

**Երուանդ Օտեան**

**ՊՈԼՍՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹԵԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՀԱԿՈՒ ՔՈՉԱՐԹԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ԲԵՌԼԻՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑԻՉ ԸՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ՝ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՆՊԱՍՏ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ ԵՒ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՑՈՒԴԱՐՁՅԵՐԻ ՄԱՍԻՆ**

Հայկական հարցը, որն ըստ էութեան արեւմտահայութեան ազատգրման եւ ինքնորոշման հարցն էր, մեծ տերութիւնների կողմից նենդարար օգտագործվել է սոսկ միջոց թուրքիայի կամ մինչեւ իսկ միմյանց վրա ազդելու, իրենց զայթոզա-կան ծրագրերն իրագործելու համար: Այն գիվանագիտութեան մեջ ասպարեզ է ի-ջել 19-րդ դարի 70-ականներին՝ որպէս Արեւելեան հարցի քաղկացուցիչ մաս:

Տակալին առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, միմյանց դեմ կռվող երկու իմպերիալիստական խմբավորումներն էլ /թե՛ Անտանտը եւ թե՛ Բաւարյի միութիւնը/ հետապնդում էին զայթոզական նպատակներ, որոնք ուղղ-ված էր նաեւ հայ ժողովրդի դեմ: Եւ եթե գերմանա-թուրքական բոլոր հայկական հարցում վարում էր բացահայտ բնաջնջման քաղաքականութիւն, ապա Անտանտի պետութիւնները գերազատում էին վարել «նորբակատ» գիվանագիտութիւն՝ հա-յանպատահապատարբութիւններն տարափի տակ հետապնդելով սոսկ շահադիտա-կան նպատակներ:

Չհասկանալով կամ հասկանալ չուզեցողով Հարցի իմպերիալիստական այս գրվածքը, 1918-1920 թթ. դեպի Անտանտը կողմնորոշված Հայաստանի Հանրապե-տութեան կառավարութիւնը նույնպէս սուրբ է տվել ժամանակի քաղաքական կյանքում տեղ գտած խտրութեանն եւ ջանքեր գործադրել Հայկական հարցը լուծել Արեւմտեան մեծ տերութիւնների օժանդակութեամբ:

Ստորեւ ընթերցողների ուշադրութեանն ենք ներկայացնում Պոլսում հայկա-կան պատվիրակութեան քարտուղար Հակոբ Բոջարյանի՝ Բեռլինում ՀՀ կառավա-րութեան ներկայացուցիչ Համո Օհանջանյանին ուղղած նամակներից մի քանիսը, որոնք որոշ պատկերացում են տալիս այդ ժամանակաշրջանի քաղաքական անցու-ղործելի եւ դրանց ֆոնի վրա՝ նաեւ ազգային պատվիրակութեան ծավալված գոր-ծունեութեան մասին:

Մեր կարծիքով ներկայացվող բոլոր նամակներն էլ գրված են Պոլսից: Հա-վաքածուն ներառում է 7 փաստթուղթ, որոնք առանձին-առանձին չեն վերադա-րվել, քանի որ ունեն բովանդակութեան ընդհանրութիւն: Դրանք գասակարգված են ժամանակագրական կարգով:

**Արեւոյ Կիրմյան**  
ՀՀ արևիվային գործի գործակալութեան  
պետի տեղակալ

N. 131 N 1 10 սեպտեմբերի 1918թ.

Միքելի Համո

Քո նամակը Վիեննայից՝ սեպտ. 5-ից, ստացանք 9-ին: Ստացել ենք նաեւ քո Հեռագիրը: Կարծելով, որ դու եւ Գրինֆիլդը երկար չեք մնալ Վիեննա եւ կշտապեք Բեռլին՝ մտ լինելու համար այնտեղի բանակցութիւններին, որոշեցինք այս նա-մակը ուղղել Բեռլին, երեւի մինչ այն դուք էլ կլինեք այնտեղ: Վիեննա քեզ երեւի այսօր կհեռագրենք. Դր. Գրինֆիլդի մատուցած առանձին ծառայութիւնները մենք շատ ենք գնահատում, եւ կթի ոչինչ չենք գրել այդ մասին, դա պատահական է մի-այն: Սրա հետ ուղարկում ենք նախագահի հատուկ նամակը՝ գրված նրան: Այլեքս-/անդր/ Իվանիչն/ էլ երկու նամակ է գրում, իսկ ես ուղարկում եմ վերջին տեսակ-ցութիւնների ամփոփումը, նաեւ Սուլթանի տված ունկնդրութեան մասին տեղե-կութիւնս: Տաճկական լրագրերը բոլորն էլ փոխել են իրենց ստիւը եւ միաբերան պաշտպանում են մեր դատը: Ժամի 12-ին շարունակում եմ:

Այս բոլորիս ուղարկում ենք քեզ հեռագիր Վիեննա, իսկ այս նամակը եւ ամ-բողջ Կուրբերը ուղարկում ենք Բեռլին, հուսալով, որ դուք շուտով կվերջացնեք Վիեննա /յուս/ եւ կշտապեք Բեռլին, որտեղ լինելու են խորհրդակցութիւնները թա-լիսի ներկայութեամբ:

Սպասում ենք, որ այս անգամ խնդիրները վերջնական կերպով կպարզվեն, եւ կոնֆերանսն էլ կկայանա շուտով-Ավետիսն էլ առանձին նամակ գրեց քեզ: Մի նամակ էլ ուղարկում ենք դր. Գրինֆիլդի անունով, որի տված ծառայութիւնները բոլորն էլ գնահատում եմ:

Է՛հ, առայժմ այսքան: Ձերմ բարեւանքով քեզ, **Ավուլին:**  
Քո **Քոջարյան**

Հ.Գ. Հավանաբար Ա.Ջոհրայանը արդեն գնացել է:  
ՀԱԱ, Ֆ. Պ-200, ց. 1, գ. 80, թ. 25 եւ հակ.: Ինքնագիր:

N 2  
N. 154 21 սեպտեմբերի 1918 թ.  
*Բժ. Հ. Օհանջանյանին եւ Ա. Ջուրաբյանին*

\* Խոսքը Ալ. Խատիսյանի մասին է:

Ստացել ենք Ա.Զուրարյանի գրած նամակը Բեռլինից, 11-ին սեպտ., նույն-պես՝ Համլիի նամակը Վիեննայից, 10-ին սեպտ.երեկոյան էլ /ամուս.յս 20-ի/ ստացանք Համլիի նամակը՝ 16.09. Վիեննայից գրված: Մեր վերջին նամակը Ձեզ գրված է 14-ին սեպտ., նույն օրը եւ Հեռագրած ենք Ա. Զուրարյանի անունով՝ մեր անկախութունը չճանաչելու առթիվ բողոք ներկայացնելու բժ. Հ. Օհանջանյանի Հետ ուսու կառավարութեան ներկայացուցչի առաջ:

Ուղարկում ենք Ձեզ շարունակութունը մեր ունեցած տեսակցութունների ամփոփման, սեպտ. 14-ից սկսած մինչև 19-ը: Ուղարկում ենք նաև Երեւանի/Հայաստանի պատկաննում մեր կառավարութեան արած դեկլարացիայի թարգմանուկները ֆրանսերեն: Նույնպես եւ ուղարկում ենք մի քանի օրինակ «Հորիզոն», եւ „Ջանգ“, թերթերից՝ ծանոթանալու Համար անցուղարձի հետ:

Արիւմիտիչը առանձին նամակ է գրում, որը ներփակ ուղարկում եմ: Հետեւյալ կուրիերով ավելի մանրամասն կգրենք: Թայամի փաշայի գալը ուշացավ, գրում են, որ ամուս.յս 27-ին է/գալու, մինչև այն մեր բոլոր խնդիրները մնում են առկախ: Ձեն եկել նաև Բերնսդորֆը եւ Պավլովիչին: Ուկրաինայի գեսպանը չկա, եղանք պաշտոնակատար-քարտուղարի մոտ, ավիան շրջակայքում կառավարութեանը: Նաև նամակ գրեցինք մեր անկախութունը ճանաչելու մասին: Առանձին նամակ գրեց նաև Ալ. Իվ. /անի/ չը Լիդուրին: Առայժմ այսքան. Ջերմ բարեւներ՝ Ձեր Քոչարյան

Հ. Գ. Բարսիլյանը դեռ այստեղ է:

ՀԱԱ, ֆ. Պ- 200, ց. 1, գ. 80, թ. 65 եւ Հակ. : Ինքնազիր:

N 3

28 սեպտեմբերի 1918 թ.

N 167

Բժ. Օհանջանյանին եւ Ա. Զուրարյանին  
Մեր վերջին նամակը Ձեզ գրել ենք 24-ին սեպտ.: Անցյալ կուրիերով ձեզից ոչ մի նամակ չստացանք: Սպասում էինք այս կուրիերով ստանալ մեր բախտիցը կուրիերը երեկ ուժացել էր, այսօր առավոտյան էլ դեռ չեն դասավորել նամակները, եւ գրում ենք Ձեզ այս երկտողը առանց ձեր նամակը ստանալու, որին անհամբեր սպասում էինք: Կուրիերին հաջիվ հասցնեմ այս նամակը: Մնում է, որ Հետեւյալ կուրիերով գրենք ձեզ մանրամասն նամակ: Եթե առանձին կարելու բան լինի, կհեռագրեք: Երեկ եկավ Թայամի փաշան, ուրեմն այս օրերս նրա Հետ կունենանք կարևոր խոսակցութուններ, իսկ մինչ այն մենք հուսով ենք, ձեր նամակները մի օրում կգառնեն Բեռլինի ամբողջ անցած-գարձածին: Ստացանք նաև ձեր Հեռագրերը ամուս.յս 24-ին արված՝ Զավարյանի եւ Լիպարիտի բանտարկության մասին, որը մեզ միանգամայն զարմացրեց: Գրանից մի օր առաջ մենք ստացել էինք այստեղի Հոյանգ. գեսպանի միջոցով Երևանի ուղարկած 25.000 մարկը մեր պատվերակալության՝ հայ գերիների եւ իմերտ... Համար: Այդ առթիվ մենք դեռ Հեռագրով շնորհակալութուն ենք հայտնել Երևանի, ձեր միջոցով ուղարկելով Հեռագիրը ամուս.յս 20-ին: Իսկ ամուս.յս 27-ին արդեն ուղղակի Երևանի անունով /պատճենը՝ Օհանջանյանին/ ուղարկեցինք Հեռագիր, միջնորդելով Զավարյանի եւ Լիպարիտի ազատության մասին: Հեռագրի պատճենը ուղարկում ենք սրա հետ: Ուղարկում ենք նաև էլի մի քանի օրինակ «Հորիզոն»,-ի Համարներից, նույնպես մի նամակ բժ. Բարսիլյանից եւ երկու թարգմանութուններ թուրք լրագրի մի Հոդվածի:

Միամտմանակ ուղարկում ենք ամփոփումը մեր վերջին տեսակցութուններին՝ սեպտ. 21-ից սկսած:

Ինչպեստեսնում եք, Երևանի ուղղած Հեռագիրը ուղարկեցինք թուրք Հեռագրի միջոցով, որպեսզի ավելորդ աշխատանք եւ նեղութուն չստանք գերման. գեսպանութեանը: Հեռագրի նյութը անմեղ լինելով, այդպես ավելի հարմար Համարներից, պատճենը ուղարկեցինք Համլիին, քանի որ դուք արդեն ներկայացել եք թուրք կառավարությանը: Պետք է հայտնել ձեզ, որ մեր դիմումները այստեղի կառավարությանը ավելի մեղ Հետեւյալ արդյունքները, որոնց մասին արդեն Հեռագրեցինք Երեւան՝ Քաջազունուհու:

1/ Թույլ արվի վերադառնալ գաղթականներին Ախալքալաքի գավառի մի մասը եւ այդ մասին արդեն էնվեր փաշան Հեռագրել է հասող փաշային:

2/ Ի նկատի ունենալով, որ այլուրի մեծ կարիք կլինի առաջիկայում գաղթականները համար եւ Ազրբեջանը ունի բավականաչափ այլուր մեղ փոխարինարար սպառու Համար, մեր կառավարութունը այդ մտքով դիմում էր արան արդեն Ազրբեջանին եւ Բարսիլյանի միջոցով առաջարկել էր մեզ այստեղ աշխատել ազգի տղա Նուրի փաշայի վրա այդ մտքով: Այժմ շնորհիվ մեր դիմումների, էնվեր փաշան Հեռագրել է Հակի եւ Նուրի փաշաներին, որպեսզի այլուր բայց թողնվի մեզ՝ գաղթականների համար: Խնդրել էինք 1 1/2 միլիոն փութ:

3/ Հաստատված ուղղակի Հեռագրական դիմ Երեւան-Պոլիս եւ այդ ճանապարհով մենք ստացանք Քաջազունուհու Հեռագիր եւ ուղղեցինք մեր Հեռագիրը:

Առայժմ այսքան. Ջերմ բարեւներ բոլորից էլ՝  
Ձեր Հակար Քոչարյան

ՀԱԱ, ֆ. Պ- 200 , ց. 1, գ. 80, թ. 85-86: Ինքնազիր:

N 4

N 168

30 սեպտեմբերի 1918 թ.

Միքելի Համո,

Ամուս.յս 28-ին թեզ ուղարկեցինք նամակ՝ դեռ չստացած քո նամակները: Այժմ պարզվեց, որ կուրիերը ուշացել էր Բուլղարիայի գեպերի պատճառով: Հետո միայն ստացանք քո գրած երկու նամակները միանգամից /19-ին եւ 23 սեպտ./: Նամակից երևում է, որ Զուրարյանը երեւի արդեն գնացել է, եւ այժմ մենակ ես մնացել: Իհարկե, Գրիգորիցն էլ թեզ օգնում է, ինչպես միշտ: Անհամբեր սպասում ենք, ինչ Հետեւանք ունեցան քո եւ մեր դիմումները Զավարյանին/ եւ Լիպարիտին ազատելու Համար:

Թայամի փաշան եկել է, բայց մերոնք նրան տեսնելու են միայն այսօր՝ Հոկտ. 1-ին, ժամի 5-ին: Այս երկու օրը մենք չենք դիմել տեսակցութուն խնդրելու, ենթադրելով, որ շատ զբաղված կլինի պետական ուրիշ խնդիրներով: Հետո իմացանք, որ թուրքերը եւ Գվաղազան նրան արդեն տեսել են 1-ին: Լսեցինք, որ մեզ լիովին բավարարելու են, տեսնենք, երևում է, մի/ն/ Լաստիլի թեզ սասձը Հաստատվում է, գոնե մեզ այդպես սացին ազրբեջանցիք: Այսօր կիմանա՞նք եւ Հետո կգրենք թեզ: Քո նամակն էլ, որ երեւի ուղարկած կլինեն երեկվա կուրիերով, դեռ չենք ստացել, դարձյալ ուշացել է կուրիերը:

Վաղը թուրքական շոգենավով գնում է բժ. Բարսիլյանը, որը թեզ արդեն երկու նամակ է գրել մեր միջոցով: Սպասում ենք այս օրերս նոր կուրիերի: Բարսիլյանի Հետ գրում ենք ամեն ինչ, որ կա ինքն էլ կպատմի անձամբ: Երեկ լսեցինք, որ կառավարութունը ուզում է Հետ կանչել Կովկասից գործերի մեծ մասը՝ ուղարկելու Համար ուրիշ ֆրոնտներ, տեսնենք, որքան ճիշտ է:

Հավանորեն Թայամիին տեսնելուց Հետո մեր խնդիրը կպարզվի միանգամայն, կմնա միայն գանազան թղթեր պատրաստել եւ ստորագրել, որի համար երկար ժամանակ չի պահանջվի, եւ մենք երեւի շուտով կարող կլինենք վերադառնալ:

Այեք/անգր/ Իվ/անի/չը երեւի ստիպված կլինի ավելի մնալ կնոջ հիվանդության պատճառով:

Սրա Հետ ուղարկում ենք թեզ նախ՝ Ետիպետյանի գիրքը տպւյ՛ղ՛պս-ի մասին, որ ստացել ենք Թիֆլիսից եւ Հետո՝ մի թուրք թերթի Հոդվածի թարգմանութունը, որ Հետաքրքիր է: Առայժմ այսքան: Հետաքրքիր է, ինչ ընթացք կստանան Բուլղարիայի գեպերը: Գերմանիայում էլ արդեն պատասխանատու միջնորդութուն է ստեղծվում: Դեպքերը արագութեամբ առաջ են գնում Եւ, ով գիտի, գուցե ձմեռը մեզ խաղաղութուն բերի:

Ջերմ բարեւներով՝ քո Հակար Քոչարյան

Հ.Գ. Ավետիս Իսահակյանը այդպէս էլ, թե՞ գնացել է, ինչ լուր ունենա՞լ Միքայելից: Ձե՞ս կարող արդյոք նրան գրել եւ նամակ ստանալ:

Comment:

N 174

Սիրելի Համո,

Վերջին մեր նամակը ձեզ գրված էր հոկտ. 1-ին: Դրանից հետո ձեզնից նամակ ստացանք միայն այս առավոտյան ժամը 11-ին, եւ շտապով պիտի նամակը պատասխան, որովհետեւ կուրիերը այսօր գնալու է: Չգիտեմ, ինչու վերջին ժամանակները կարծես թե մի փոքր անկանոն է գարձել գերմ/անալան/ փոստով նամակները ստանալը: Երբ է, որ քեզ նամակ եմ ուղարկել Բարալյանից, դեռ մինչեւ 26-ը չէիր ստացել: Քո նամակն էլ, նաեւ Զուրաբյանի նամակը, մենք այսօր ստացանք միայն՝ 26-ից գրված, մի՞թե այդպես ուշ է հասնում: Ինչեւիցե, ասենք, հանգամանքներն էլ այս օրերս շատ փոխեցին, տեսնեք, ինչեր են դուրս գալու եւ ուղարկել եմ քեզ նամակներ, բայց էլի գրել եմ:

Բարալյանի նամակը ուղարկել եմ քեզ 21-ին սեպտ.: Այսօր եւ ուղարկում եմ նրա երկրորդ նամակը: Նա պիտի գնար 3 օր առաջ, բայց հանկարծ շոգենալը գնաց մի օր առաջ, քան որոշված էր, ու նա մնաց: Նոր կուրիերը դեռ չի եկել: Արտաշեսը կերթա 2 օրից հետո: Ուղարկում ենք քեզ մանրամասն ամփոփում մեր ունեցած տեսակցություններ, մանավանդ հետաքրքիր են Թալաթի, Նեսսիմիի եւ Հալիլի, Բերնադորֆի հետ եղած խոսակցությունները: Այժմ մտնում է թաթարների հետ համաձայնության գալ. եւ գրանով գրազվելու են մերոնք: Թուֆիթաշեւը եկել է: Նրանք երեւի ավելի զինվող կլինեն այժմ, եւ թուրք կտառով /արությունն/ էլ նրանց կծնչի այդ ուղղութիամբ: Վրացիների հետ տեսնեք ոնց կլինի: Այսօր կամ վաղը կտեսնեք նաեւ Փ/ն/ /Լոսովին, որ եկել է այստեղ:

Քո գրածներին կպատասխանենք հետեւյալ անգամ, հատկապես Գրինֆիլդի վերաբերմամբ: Իսկ այժմ ջերմ ու սրտագին բարեւներ բոլորիցս:

Քո՝ **Հակոբ Քոչարյան**

Հ. Գ. Մի նամակ ուղարկում եմ Ալ. Իվ/անի/ից:

ՀԱԱ, ֆ.Պ- 200, ց. 1, գ. 80, թ. 91 եւ հակ.: Ինքնազիր:

N 187

Սիրելի Համո,

Քեզնից ստացած վերջին նամակն էր 26-ից: Նույն թիվն էր նաեւ Զուրաբյանի նամակը, զրանից հետո այլեւս ոչ մի նամակ չունենք ձեզնից: Մեր վերջին կուրիերը ուղարկել ենք քեզ 5-ին հոկտ., բայց երեւի ուշացած կլինի ճանապարհին՝ վերջին դեպքերի պատճառով: Ապաստւմ ենք այսօր կամ վաղը Բեռլինի կուրիերին, եւ մենք էլ կուղարկենք այս օրերս:

Ամուլյա 9-ին ստացանք Քո հեռագիրը՝ 7-ից հոկտ., որով հրավիրում էիր գալ Բեռլին խորհրդակցութեան համար քեզ հետ: Հեռագրի պատասխանը չէինք տալիս, սպասելով, որ երկրի գրութիւնը ավելի պարզվի: Այստեղ է ահա մի շարաթ գեներ. Փ. Լոսովը, որին մի քանի անգամ մերոնք տեսել են: Շատ լավ է վերաբերվում մեր գառին, պարտատ է օգնել մեզ ինչպես կարող է, բայց երեւում է, որ զգում է, թե նա, թե դեպքերը, որը եւ խոստանում է, այժմ այլեւս իրենք չեն կարող ազդել թուրքերի վրա: Ներփակ ուղարկում եմ այդ տեսակցությունների մասնատան նկարագիրը: Թուրքիան, կարծես, սկսել է այժմ Երեւոնի հետ համաձայնութեան գալու փորձեր անել: Թե ինչ դուրս կգա զրանից, կտեսնենք: Իրամ էլի խնդրել: Այսօր հեռագրով քեզ փոխադրում ենք բանկով 20.000 մարկ. մի մասը զրանից քո ցույց տված հրատարակությունների համար էլ, մնացածն էլ ձեր ծախքերի համար: Համաձայն քո ցանկութեան քեզ եւ Գրինֆիլդին կուղարկենք վկայականներ. միայն ձեռակառ փոքր ինչ անհարմարութեան կա, այն է, որ վկայականները պիտի սրվեն կառավարութեան կողմից. իսկ այստեղից Ա. Իվ-իցը իսկապես չի կարող սուղ վկայական իրրեւ արտք. գործ. մինիստր.: Բայց դեռ գա ձեռակառութեաններ է, երեւի այդտեղ առարկութեան չի լինի այդ առթիվ: Իհարկե, ամենայն հաճութեամբ

պարվիրակութիւնը բնգունում է Գրինֆիլդին իրրեւ քեզ ընկեր եւ խորհրդակառ եւ գտնում է, որ պետք է վճարել նրան ապրուստի ծախքը, որքան որ գա գտնում ես հարկավոր:

Ալ.Իվ-ը նամակ կգրի եւ մեր մտտակա ծրագիրները կբացատրի: Պատրաստվում ենք շուտով վերագառնալ կովկաս, մեր գործը այստեղ վերջացրած համարելով: Այսօր նոր մեծ վեղիբի հետ տեսնեցին մերոնք, եւ նա խոստացավ վաղ պատասխան տալ մեր բոլոր հարցերին, որից հետո կարող ենք արդեն գնալ: Շոգենալը չլինելու պատճառով մինչեւ այսօր Բարալյանը չէր կարողացել վերագառնալ. միայն վաղը հազիվ նա գնում է, այն էլ բեռնակիր նավով: Փեվորդը մտադր. սպանն էլ է գնալու: Ես էլ պիտի գնայի, բայց տեղ չլինելու պատճառով մնացի, կերթում այս օրերս, երբ մարզատար շոգենավ կլինի: Ավալովը եկել է քեզնից նամակները թողել է, որ արդի մեջ էր, բազումով է գալու եւ դեռ չի ստացել: Բարալյանը շատ սպասում էր Քո նամակին մանավանդ Թուրքիայի համար. մի՞թե դու նրա նամակը չես ստացել, որ ուղարկել եմ քեզ սեպտ. 21-ին: Ուղարկում եմ քեզ Ջամալյանից ամուլյա 11-ին ստացած հեռագրի պատճենը:

Չարաբախիվ սպաննացող վտանգի առաջն առնելու համար անհրաժեշտ քայլերը այստեղ արինք եւ հույս ունենք առաջը կտանի:

Ուղարկում եմ քեզ նաեւ մի քանի թուրքերին հողվածների թարգմանութեան: 16-ին հոկտ. երեկ գինջը վերջապես Ավալովը ստացավ եւ մեզ ուղարկեց Քո երկու նամակները: Ժամի 4-ին այսօր գնում են շոգենալով Բարալը եւ Գի-գան: Քո նամակներից կարեւոր կտորները հաղորդեցի Երեւան: Բարալը սպասում էր, թե նամակ կլինի քեզնից Թուրքիայի համար, բայց ես ստացի, որ երեւի Զուրաբյանի հետ ուղարկի: Այսօր մինչեւ ժամի 6-ը պիտի հասցնեմ նամակը գերմ. կուրիերին:

Ալ.Իվ-չն է գրելու: Քո ուղած վկայականները Քո եր Գրինֆիլդի անունով կուղարքենք հաջորդ կուրիերով, որովհետեւ գրութեանները պիտի գրենք արտաք. գործ. մինիստրութեան կողմից, իսկ այդպիսի կնիք բերած չէինք, պիտի պատվիրենք, իսկ մինչ այն յուր կերթանք նախկին կարգով:

Ուղարկում ենք քեզ սրա հետ մեր քիչ փոփոխած EXPOSE-ն եւ քարտեզը, որով է պիտի օգտվել այսուհետեւ: Մի նամակ էլ ուղարկում եմ Գիգալից քեզ: Դե՛հ, ուրեմն ցգրութեան:

Ջերմ բարեւներս. Քո՝ **Հակոբ Քոչարյան**

ՀԱԱ, ֆ.Պ- 200, ց. 1, գ. 80, թթ. 110-112: Ինքնազիր:

Մեր վերջին նամակը գրված էր 21.09: Ստացել ենք Համոյի վերջին նամակը Վիեննայից՝ գրված 16.09, եւ Զուրաբյանի նամակը Բեռլինից, նույնպես 16.09. գրված:

Ստացել ենք ձեր երկու հեռագրերը, մեկը՝ սեպտ/եմբերի/ 20-ից, մյուսը՝ 21-ից: Ապաստւմ ենք անհամբեր նամակով մանրամասնութեաններին: Թեեւ կուրիերին, որը երեկ կար, մինչեւ այժմ, առավոտյան ժամի 12-ը դեռ ոչինչ չկա, թեեւ 20-ին սրված ձեր հեռագրում ասված էր, Brief անց: Տեսնեք, ինչով կվերջանան բանակցութեանները սեպտ. 24, ինչպես հեռագրել եք, Բազուի առումը թուրքերի ձեռքից երեւի նրանց գրութեանը ավելի ամբարցրեց Գերմ /անիայի/ աջքում, մանավանդ այժմյան անհաջողութեաններ ժամանակ արեւմտյան ֆրոնտում:

Սրա հետ վերագրածնում եմ Բեռլինից Վիեննա ուղարկած ձեր մի նամակը, որը ուղարկել էր մեզ Համոն ժամթութեան համար:

Ուղարկում ենք էլի մի քանի համարներ „Հորիզոն“, որ բերել էր Բարալյանը: Ա. Ջամալյանից երկու հեռագիր ստացանք այս օրերս Թիֆլիսից: Թուրքական հեռագրով, ի միջի այլոց, հաղորդում են, որ այս օրերս նոր կուրիեր է գալու այստեղ Հարութեանը /երեւի Մարտիրոսը/: Ներփակ ուղարկում ենք ձեզ

մի քանի տեղեկություններ մեր տեսակցություններից: Ուղարկում եմ նաև Ա. Նատրյանի նամակը:

Ուղարկում եմ նաև երկու թուրք թերթերի հոդվածների թարգմանությունները, նաև մի օրինակ վկայություններ Ախալցխայի գեպերի մասին, նույնպես Կարաբիխայի եւ Արեւսանդապուրի գեպերի մասին, որ բերել է Հետք ք. Բաբայանը:

Է՛հ, առայժմ այսքանը, սպասում ենք ձեր տեղեկություններին եւ մանավանդ թայասթ փաշայի գալուհւն, որից Հետո պիտի պարզվի վերջապես գրությունը:

Ձերմ բարեւներով բոլորիդ  
Ձեր՝ Հակոբ Փոչեքյան

ՀԱԱ, ֆ. 9-200, ց. 1, գ. 80, թ. 64 եւ Հակ.: Ինքնագիր:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂՈՒՄ ԵՒ ԶԱՆԳԵԶՈՒՐՈՒՄ**

Համեմատաբար շատ է գրվել այն մասին, թե Լեռնային Ղարաբաղի եւ Զանգեզուրի հայ բնակչությունը 1918-1920թթ. ինչպես է պայթարել Հայաստանի կազմում մնալու, ամբողջ ժողովրդի հետ իր կյանքը կերտելու համար:

Կա մի Հարց, սակայն, որ ցայսօր թույլ է յուսարանվել Հետազոտողների կողմից, չեն տպագրվել համապատասխան նյութեր: Խոսքն այն մասին է, թե Հայաստանի Հանրապետությունը, որս իշխանությունները ինչպես են վերաբերվել Հայաստանի այդ անբախտելի երկրամասերի նկատմամբ, ինչպես են իրականացրել այդ հեռավոր ու կենտրոնից կտրված տարածքներում իրենց իրավունքները, վարչական իշխանությունը: Այս բնագավառում Հայաստանի Հանրապետությունը կանգնած է եղել մեծ գծվարությունների առաջ: Նրան վիճակված էր մարտել հար ուժերի դեմ, ինչպիսիք էին թուրքական օկուպանտները, Մուսաֆաթական, սպա Սորհրդային Ազրբեյջանը, անգլիական նվաճողները, վերջապես Սորհրդային Խուսստանը, իր 11-րդ Կարմիր բանակով: Մրանք ամեն կերպ գործել են Ազրբեյջանի օգտին, լավագույն դեպքում այդ տարածքները որոշ գեպերում համարվել են վիճելի:

Չնայած այդ ամենին, ինչպես վկայում են փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետությունը իր գոյության ամբողջ ընթացքում ուշադրության կենտրոնում է պահել իր այդ անբախտ տարածքների տնօրինման հարցը, ելնելով կրեմլեոս պայմաններից, դիմել է համապատասխան քայլերի, բնղուծներ, յուժել կարգային, ֆինանսական, պաշտպանական եւ այլ հարցեր:

Սույն հրատարակությունը որոշ չափով լրացնում է պատմագրության մեջ գոյություն ունեցող տվյալ բացը: Փաստաթղթերը Հայաստանի Հանրապետության կառավարության օրենքներ ու որոշումներ են (կառավարությունը պաղայանների արձակուրդների պահի իրավասու է եղել բնղուծելու նաև օրենքներ): Դա ինքն-բախտընդ էր չի նշանակում, թե Հայաստանի Հանրապետությանը ամեն ինչ հանրու-վել է: Մեր նպատակն այստեղ այլ է, ցույց տալ, որ Հայաստանի իշխանությունը ամուր կանգնած է եղել իր տարածքները պահելու դիրքերում, անկախ նրանից, թե երբ եւ որտեղ ինչպես է այդ ստացվել:

Հալաբաժուն լրացնում է մեկ (վերջին) անտիպ փաստաթուղթ, որը, չնայած վերաբերում է խորհրդային ժամանակաշրջանին, սակայն բովանդակությամբ սեր-տորեն առնչվում է նախորդներին: Այն անստորագիր է եւ չունի ժամանակի մասին նշում: Փաստաթուղթը փաստորեն Սորհրդային Հայաստանի տեսակետն է Լեռնա-յին Ղարաբաղի հարցի նկատմամբ: Այն, մեր կարծիքով, կարող է գրված լինել ար-տաքին գործերի ժողովուր տեղակալ Ասքանազ Մուսվաթյանի կողմից (ձևագրի նմա-նուկությունը), իսկ ժամանակը կարող է լինել 1921թ.: մինչև հուլիսի 5-ի չարաբա-տիկ որոշման ընղուծումը: Հարցի յուժմանը օգնության է գալիս մեկ այլ, համան-ման, վավերագիր, որը վերաբերում է Ախալքալաքին ու Լոռուն: Վերջինը մեքե-նագիր վավերացված պատճեն է, որի տակ կապույտ մատիտով գրված է «Մուս-վաթյան» ստորագրությունը եւ ավելացված՝ «27/VII 21թ.»: Պատ-ճեններն ուղարկված են Կովկասյան բյուրո եւ Վրաստանի Կենտկոմ» (ուսուերեն): Այստեղ դժվար չէ են-թաղրել, որ քննարկվող փաստաթուղթը ամենայն հավանականությամբ պատկա-նում է դարձյալ Ա.Մուսվաթյանի գրչին եւ պատրաստվել է Կովկասյան բյուրոյին ներկայացնելու համար կամ ներկայացվել է՝ մինչև հուլիսի 4-5-ը Լեռնային Ղա-րաբաղի հարցը բյուրոյի պլենումում քննարկելը: Սերտ եւ անմիջական կապ կա այս փաստաթղթի եւ Հայաստանի ժողովուրհի 1921թ. հունիսի 12-ի հայտնի հայ-տարարության միջև, որով Լեռնային Ղարաբաղը հռչակվել էր Հայաստանի բաղ-կացուցիչ մաս, հայտարարություն, որն արվել էր Անղրկովկասյան եւ Ազրբեյջանի իշխանությունների համաձայնությամբ: Այդ մասին հատուկ որոշում էր ընղուծել ԻԿ(բ)Կ Կովկասյան բյուրոն, Ն.Նարիմանովի մասնակցությամբ 1921թ. հունիսի 3-ին: Նույն հարցի կապակցությամբ հունիսի 30-ին հեռախոսային խոսակցության ժամանակ Ալ.Մյասնիկյանը (Թիֆլիս) հայտնում է Սահակ Տեր-Գաբրիելյանին (Մոսկվա), թե «համաձայնության հիման վրա հատուկ գեղերտով Լեռնային Ղարաբաղը մեր կողմից հայտարարվել է Հայաստանի անբախտ մաս» (ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 145, թ. 61 եւ Հակ.):

Հայտնի է նաև, որ այս հայտարարության հետևությունները Ասքանազ Մուսվ-յանը նշանակվեց Լեռնային Ղարաբաղի արտակարգ կոմիսար: Այս կապակցու-թյամբ հետաքրքիր են հետևյալ մանրամասնությունները, որ քաղում ենք երկու հեռախոսագրություններից (նույն տեղը, թ. 19 եւ 68): Մեկը կայացել է 1921թ., հուլիսի 2-ին Հայաստանի արտգործադրոմ Ալ.Բեկզաղյանի [Թիֆլիս] եւ ներքադրծադրոմ Իսահակ Դովլաթյանի [Երևան] միջև, իսկ մյուսը, որի ժամանակը անհայտ է, եւ հավանորեն մոտ է առաղինին, տեղի է ունեցել Ասքանազ Մուսվաթյանի [Թիֆլիս] եւ Ի.Դովլաթյանի [Երևան] միջև: Առաջին գրույցում Ալ.Բեկզաղյանը հայտնում է Ալ.Մյասնիկյանի խնդրանքը՝ խոստացված «ֆորդը» (ավտոմեքենա) Եվլայի ուղար-կելու մասին: Ի.Դովլաթյանը պատասխանում է, որ «ֆորդը» եւ դրան ժամանա-կին ուղարկվել են Եվլայի (մեքենան, որոշ պահեստամասերով, ուղարկվել էր Բաք-վից, Հայաստանի ներկայացուցչության կողմից), որ ինքը ստացել է դրանց տեղ հասնելու մասին Ա.Մուսվաթյանի հաստատումը, այնուհետև ավելացնում, որ «այժմ ընկ. Մուսվաթյանը գտնվում է Շուշիում եւ սպասում է ինձ հեռախոսի մոտ»: Ալ.Բեկ-զաղյանը պատվիրում է Ա.Մուսվաթյանի հայտնել, որ Ալ.Մյասնիկյանը ժամանել է Թիֆլիս, ուր 2 օր անց կայանալու է Կովկասյան բյուրո իրենց հուլուղ հարցի վերա-բերյալ, թե Տեր-Գուլյանին պահում ենք եւ հետ կուղարկենք Ա.Մուսվաթյանին՝ Կով-կասյան բյուրոյի որոշման, ինչպես նաև բոլոր խնղրվածների հետ:

երկրորդ Հեռախոսազրույցն ընթացել է այսպես.

Ի. Դովլաթյան. - Քո տեղակալի հարցը գեոնես չի լուծվել:

Ա.Մուսվաթյան. - Ստացել է ևս արդյոք իմ հեռազրույցը «Ղարաբաղի արտակարգ կոմիսարի Համար կնիքներ պատրաստելու վերաբերյալ»: Կարո՞ղ եմ արդյոք ԹԻՖՆ-իսում վերցնել մեկ «Ուշգերբվուզ» գրամըքնե՞ս Ղարաբաղի Համար:

Ի. Դովլաթյան. - Հեռազրույցն ստացել եմ եւ կնիքները պատվիրել: Ղարաբաղի Համար գրամըքնե՞ս կլինի, պարզ չէ միայն ինչ ֆիրմայի:

Ա.Մուսվաթյան. - Խոսի՛ր Յու.Ֆիզաանների Հետ (ԻԿ(Բ)Կ Կովկասյան բյուրոյի քարտուղար) Ղարաբաղում իմ աուսբերութեան մասին:

Այս իրադարձություններին հարկ համարեցինք անդրադառնալ՝ ցույց տալու Համար, որ Ղարաբաղի արտակարգ կոմիսար Ա.Մուսվաթյանը, հակառակ այլ տվյալների, եվլախից Հետ չի դարձել, հասել է Ղարաբաղ (Շուշի), ձեռնամուխ լինելով իր պարտականությունների կատարմանը (1921թ, հունիսի 12-ի վերոհիշյալ Հայտարարությունից ևև հուլիսի 3-ի որոշման միջև ընկած օրերին):

Մի այլ հեռախոսազրույցում, որ կայացել է (գատելով բովանդակությունից՝ հունիսի 27-ին) Ազրբեջանի ժողովու՛մներ՝ Հաջիեւի ու Մ.Հուսեյնովի (Բաքու) ևև Շիրվանու (Թիֆլիս) միջև, կա տեղեկություն, թե իբր Հայաստանի ժողովու՛մորհի գեկլարացիան ևև Ղարաբաղ արտակարգ կոմիսար ուղարկելը կատարվել է առանց իրենց գիտությունից ու համաձայնությունից, որ հեռագիր է ուղարկվել Շիրվանու (պատճենը Գ.Րոյնիկիձեին, Ալ.Մյասնիկյանին ևև Ա.Կարաեւին) Ղարաբաղից Մուսվաթյանին հետ կանչելու մասին (ԻՍՔՊՊԱ, ֆ.85, ց.13, գ.66, թ. 1 կամ ՀԱԱ, ֆ.Կ-1, ց.1, գ.105, թ.11): Մանոթ գործելուց է: Հիշենք Ազրբեջանի Հեղկոմի 1920թ, նոյեմբերի 30-ի գեկրետը Լեռնային Ղարաբաղի, Զանգեզուրի ևև Նախիջևանի հարցի վերաբերյալ, որից (գեկրետից) շուտով հրամարվեցին: Այժմ նույնն է կատարվում ավելի բարձր մարմնի՝ Կովկասյան բյուրոյի համաձայնեցված որոշման հետ:

Վերադառնալով համաքա՛ծուի վերջին փափրագրին, այն տրամաբանական լրացումն է հունիսի 12-ի Հայտարարություն: Դրանով Խորհրդային Հայաստանը հիմնավորում էր Լեռնային Ղարաբաղը իր կազմում ընդգրկելը, հակառակ Ազրբեջանի գեկլավարությունից ղեմադրությունից:

Փաստաթղթերի սույն հավաքածուն վկայում է.

1. Հայաստանի Հանրապետությունը տեր է կանգնել իր իրավունքներին իր տարածքների՝ Լեռնային Ղարաբաղի ևև Զանգեզուրի նկատմամբ:

2. Խորհրդային Հայաստանը Լեռնային Ղարաբաղի համար շարունակել է Հայաստանի Հանրապետության քաղաքականությունը: Ինչ վերաբերում է Զանգեզուրին, ապա այն Հայաստանի պետականության սահմաններում մնաց զանգեզուրցիների հերթական պայքարի շնորհիվ, պայքար, որը գեկլավարել են Արսեն Շահնազյանը, ապա՝ Գարեգին Նժդեհը:

Ինչոր արխիվային փաստաթղթերը վավերացված պատճեններ են: Նրանցից վեցը (թիվ՝ 2,5,7,11,14,16) տեղ են գտել «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ. (քաղաքական պատմություն)» (Երևան, 2000թ.) փաստաթղթերի ու նյութերի ժողովածուում: Դրանք ընդգրկում ենք նաև այստեղ՝ խնդիրը ամբողջական տեսքով ներկայացնելու նպատակով: Կարծում ենք, որ սույն հրատարակություն մեղ ամփոփված են խնդրի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության ընդունած բոլոր որոշումներն ու օրենքները: Որոշումներից յոթը սպաղարվել են Հայաստանի Հանրապետության «Կառավարության լրարբեր» պաշտոնաթերթում, որը ևև ընդունել ենք որպես սկզբնաղբյուր: Թերթն այսօր անմատչելի է լայն ընթերցողների համար: Փաստաթղթերը չեն վերնագրվել, գրանց բովանդակությունից ընդհանրություն բերումով: Թիվ՝ 10 ևև 28 վավերագրերի վերնագրերը ընագրերին են:

**Վլադիմիր Ղազարխյան**  
պատմական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր

N 1

11 նոյեմբերի 1918թ.

**Լսեցին.** Զինվորական մինիստրի հաղորդումը այն միջոցառումների մասին, որոնք հարկավոր է ձեռնարկել թուրքական զորքերի կողմից մեր տարածքները մաքրելու կապակցությամբ:

**Որոշեցին.** Հանձնարարել Զինվորական մինիստրին ներկայացնել անհատ Ղարաբաղում ևև Զանգեզուրում գորք կազմակերպելու ևև պահելու համար Հրապարակման ենթակա չէ:

ՀԱԱ, ֆ.Պ-206, ց.1, գ.2, թ.88: Թարգմ.տու.:

N 2

16 նոյեմբերի 1918թ.

**Լսեցին.** Զինվորական մինիստրի ենթադրությունները Ղարաբաղի ևև Զանգեզուրի համար գեկրական ուժեր կազմակերպելու մասին:

**Որոշեցին.** Ի նկատի առնելով, որ Ազրբեջանը, չսպասելով Ղարաբաղի ևև Զանգեզուրի սահմանների վիճելի հարցերի փոխադարձ համաձայնությունից խաղաղ լուծմանը, անցել է գործողությունների ևև բռնազրավելով Ղարաբաղի ու Զանգեզուրի լեռնային մասերը, բնակչության վերաբերմամբ գործադրում է բռնություններ, կազմակերպել գեկրական ուժեր վերահիշյալ հայկական շրջաններում պահպանությունից, ինչպես ևև ազգաբնակչությունը ոտնձգություններից կասեցնելու համար:

Նույն տեղում, թ.92:

N 3

2 դեկտեմբերի 1918թ.

**Լսեցին.** Արտաքին գործոց մինիստրի գեկուցումը Ղարաբաղի սովի մասին:

**Որոշեցին.** Հանձնարարել Պարենալորման մինիստրին Ղարաբաղում տեղի ունեցած սովի ևև համապատասխան օգնություն հասցնելու մասին գեկուցում ներկայացնել:

Նույն տեղում, թ.106 ևև հակ.:

N 4

10 դեկտեմբերի 1918թ.

**Լսեցին.** Արտաքին գործոց մինիստրի գեկուցումը Ղարաբաղի հայերի վիճակի վերաբերյալ Ղարաբաղի ևև Զանգեզուրի Թիֆլիսի հայրենակցական միությունների ներկայացուցիչ Միքայելյանի տեղեկագրությունից:

**Որոշեցին.** Ընդունել ի տեղեկություն:

Նույն տեղում, թ.118:

N 5

21 հունվարի 1919թ.

**Լսեցին.** Մինիստր-նախագահը ի կատարումն Մինիստրների խորհրդի հանձնարարությունից ներկայացնում է ծրագիր Զանգեզուրի ևև Ղարաբաղի մշակական մասերում ժամանակավոր վարչություն հաստատելու մասին: Ծրագիրը մշակված է ներքին գործերի մինիստրի պաշտոնակատար Ա.Խատիսյանի աշխատակցությամբ: Լսական կետերն են.

1. Զանգեզուրի ևև Ղարաբաղի հայաբնակ շրջանները, կազմելով Հայաստանի Հանրապետության անբաժան մասը, կառավարվում են Հանրապետության կենտրոնական կառավարության կողմից հաստատված օրգանների միջոցով ևև Հայաստանում գործող օրենքների հիման վրա:

2. Հաղորդակցության դժվարությունների պատճառով ժամանակավորապես երկրի ընդհանուր վարչությունը հանձնվում է գոյություն ունեցող «Զանգեզուրի հայկական ազգային խորհրդին», որը կազմվելու է «Զանգեզուր-Ղարաբաղի շրջանային խորհուրդ» (ռուսերեն՝ Областной совет Зангезура и Карабах):

3. Խորհուրդը ժամանակավորապես կառավարում է երկիրը՝ Հայաստանի Հանրապետության անունից ևև նրանից ստացված լիազորություններով:

4. Խորհրդի ներկա կազմը պետք է լրացվի Ղարաբաղի Հայաստանի մասերի ներկայացուցիչներով, ինչպես նաև չըջանում ապրող թուրք ազգաբնակչության ներկայացուցիչներով, Համապատասխան իրենց թվին:

5. Խորհրդի կազմը պետք է ներկայացվի Հանրապետության կենտրոնական կառավարությունն ի հաստատություն:

6. Մինչև նոր կարգ հաստատելը՝ երկրի բոլոր պետական հաստատությունները եւ պաշտոնյաները ենթարկվում են խորհրդին, հիմնվում են հաստատվում են խորհրդի կողմից եւ պատասխանատու են նրա առաջ:

7. Երկրի նախնականները (պետական հարկերը եւ ուրիշ պետական հասույթները) ծախվում են երկրի պետքերի համար, պակասը լրացվում է Հանրապետության գանձարանից:

8. Փետրվար ամսի պետական ծախսերը Հոգալու Համար հատկացվում է Հանրապետության գանձարանից 400000 ուտր., անկախ սրանից պետական գանձարանը Հոգում է մի վաշտ (рота) զինվորների ծախսը, Զինվորական մինիստրության կազմած նախահաշվով:

9. Վերոհիշյալ 400 Հազար ուտրիին ծախսելու համար «Զանգեզուր-Ղարաբաղի չըջանալիս խորհուրդը» հաշիվ է ներկայացնելու կենտրոնական կառավարությունը:

10. Մարտ եւ Հետեւյալ (մինչև նոր կարգեր հաստատվելը) ամիսների Համար խորհուրդը պետք է ներկայացնի ի հաստատություն կենտրոնական կառավարության իր նախահաշիվը (СМЕМО), ցույց տալով միաժամանակ թե ծախսերի որ մասը կարող է ծածկվել տեղական հասույթներով եւ որ մասը պետք է հոգացվի պետական գանձարանից: Վերջինը չպետք է գերազանցի 400 հազ. ուտր. ամսական:

11. Հանրապետության կառավարությունը ուղարկում է Գորիս մի պետական կոմիսար իրեն եւ ներկայացուցիչը Զանգեզուր-Ղարաբաղի հայկական չըջանի համար:

12. Պետական կոմիսարին հանձնարարվում է հսկողություն ունենալ խորհրդի գործունեության օրինակաճանության վրա եւ հարկ եղած դեպքում ցուցմունքներ անել խորհրդին կառավարության անունից:

13. Փետրվար ամսի պետքերի համար հատկացված 400 Հազար ուտրի գումարը պետք է ծախվի պետական կոմիսարի գիտությունը եւ հաջանությունը: Հետագա ամիսներում ծախսերը պիտի կատարվեն Հանրապետության կառավարության կողմից հաստատված նախահաշիվներով:

14. Նախընթաց կետի համաձայն Գորիսի գանձարանին (казначейство) ներկայացված օրգերները պետք է ունենան պետական կոմիսարի ստորագրությունը, առանց որի չպետք է կատարվեն:

15. Եթե պետական կոմիսարը զինվորական անձ լինի, նրան պետք է հանձնվի նաև Գորիսի վաշտի հրամանատարությունը, հակառակ դեպքում հասույթ հրամանատար պետք է նշանակվի Զինվորական մինիստրի կողմից:

16. Պետական կոմիսարի ընտրությունը հանձնարարել Մինիստր-նախագահին, ներքին գործերի եւ Զինվորական մինիստրների համաձայնությունը:

**Որոշեցին.** Ընդունել ծրագիրը եւ հանձնարարել Մինիստր-նախագահին հարկավոր կարգավորություններն անել այդ իրագործելու համար:

Նույն տեղում, գ.27, թ.28-29 եւ Հակ.:

N 6

4 մարտի 1919թ.

**Լսեցին.** ներքին գործերի մինիստրի զեկուցումը Ղարաբաղի Զարբերի չըջանում միլիցիա եւ ազմինիստրացիա կազմակերպելու համար 120 Հազար ուտր. վարկ բանալու մասին:

**Որոշեցին.** Բաց թողնել ներքին գործերի մինիստրին 150 Հազար ուտր. Ղարաբաղի եւ Զանգեզուրի հայրենակցական միությունը տալու՝ այդ չըջաններում միլիցիա եւ ազմինիստրացիա կազմակերպելու, ինչպես եւ Ղարաբաղի դպրոցների հատկացնելու համար 8 միլիոն ուտրի վարկից, որը բաց է թողնված Զինվորական մինիստրին Ղարաբաղի առանձին բրիգադ կազմակերպելու համար:

Նույն տեղում, թ.59:

N 7

18 մարտի 1919թ.

**Լսեցին.** ներքին գործերի մինիստրի զեկուցումը Ղարաբաղի գրուեթյան եւ Ազգային խորհրդի գործունեության մասին:

**Որոշեցին.** 1. Բողոքի հայտագիր ուղարկել անգլիական հրամանատարությունը՝ բժիշկ Սուլթանովին գեներալ-նահագապետ նշանակելով եւ Ղարաբաղ զինվորական ուժեր մտցնելով, Ղարաբաղի չեզոքությունը խախտելու համար:

2. Իրազեկ գարձանի այդ մասին թիֆլիսի եւ Բաքվի մեր զինվորագրության ներկայացուցիչներին եւ Ազրբեջանի պառլամենտի հայ անդամներին:

3. Պահանջել գուրտ սանել Ղարաբաղից Ազրբեջանի զինվորական ուժերը:

4. Պահանջել, որ Ղարաբաղում առաջիկ լինի մինիստր տեղական վարչություն, անգլիական գեներալ-նահագապետի զեկավարությամբ եւ Ղարաբաղի չեզոք բնույթը չի խախտվի ոչ ոքի կողմից՝ մինչև որ այդ հարցը չի վճարվի Միջազգային կոնֆերանսում:

5. Ութ միլիոն վարկից Գորիսի պետական գանձարանն ուղարկել 2 միլիոն 400 հազ.ուտրի այն հաշվով, որ գրանցի Ղարաբաղը սույն տարվա փետրվար, մարտ եւ ապրիլ ամիսներում ծախսի ամսական 400 հազ.ուտր., իսկ Զանգեզուրը՝ մարտ, ապրիլ եւ մայիս ամիսներին նույնպես ամսական 400 Հազար ուտրի:

Նույն տեղում, թ.68 եւ Հակ.:

N 8

3 ապրիլի 1919թ.

**Լսեցին.** Արտաքին գործոց մինիստրի զեկուցումը գեներալ Իիչև առաջարկի՝ Հայաստանի եւ Ազրբեջանի միջև ժամանակավոր սահմաններ որոշելու մասին:

**Որոշեցին.** Պատասխանել, որ կառավարությունը համաձայն է, բայց Ղարաբաղի վերաբերմամբ նա կարող է խոսել Ղարաբաղի ազգաբնակչության ներկայացուցչական օրգանների համաձայնությամբ:

Նույն տեղում, թ.87:

N 9

14 ապրիլի 1919թ.

**Լսեցին.** Արտաքին գործերի մինիստրի զեկուցումը Բաքվի անգլիական գործերի հրամանատար Շատելյովի Սուլթանովին Ղարաբաղի գեներալ-նահագապետ նշանակելու վերաբերմամբ Բաքվի լրագրերում արած հայտարարության մասին, որով անգլիական հրամանատարությունը խոստանում է Սուլթանովին իր աջակցությունը:

**Որոշեցին.** Հանձնարարել Արտաքին գործերի մինիստրին հայտնելու գեներալ Տումանյանի, որ Հայոց կառավարությունը գեներալ-նահագապետությունը նշանակելու հարցում կանգնած է նախկին տեսակետի վրա, որն արտահայտվել է անգլիական հրամանատարությունը ներկայացրած բողոքի մեջ:

Նույն տեղում, թ. 106 Հակ.:

N 10

ՕՐԵՆՔ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԱՊՄԻՆԻՍՏՐԱՑԻԱՅԻՆ 1919թ.  
ՆԱԽԱՀԱՇՎԻ ԵՎ ԵՏԱՏՆԵՐԻ ՀԱՍՏԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

5 մայիսի 1919թ.

Հաստատել Զանգեզուրի ազմինիստրացիայի 1919թ. նախահաշիվը եւ շտապները եւ ըստ հաստատված նախահաշվի եւ ըստ Մինիստրների խորհրդի տարվուս մարտի 18-ի N 40 օրագրական որոշման 2-րդ կետի հոդ. 5-ի Զանգեզուրի ազմինիստրացիայի պահպանության ծախսերի համար տալ ամսական չորս հարյուր Հազար ուտրի սխառ 1919թ. մարտի 1-ից եւ ամսական նույն չափով՝

սկսած տարվույս փետրվարի 1-ից տալ Ղարաբաղի ազմինիստրացիայի պահպանության համար, բոլոր այս գումարները վճարելով Ղարաբաղի բրիգադ կազմակերպելու համար Ձինվորական մինիստրությունը բաց թողնված 8 միլիոնի վարկից:

«Կառավարության լրաբեր», 6 Հունիսի 1919թ.:

N 11

5 մայիսի 1919թ.

**Լսեցին.** Միբայել Արզումանյանի հեռագիրը Ղարաբաղի կառավարության, քոչվորների ու Շահմազյանի մասին:

**Որոշեցին.** Հանձնարարել ներքին գործերի մինիստրին հաղորդելու Արզումանյանին, որ ա) Հայոց կառավարությունը ոչ մի համաձայնություն չի տվել Ադրբեյջանին Ղարաբաղ կառավարելու գործում: բ) Հայոց կառավարությունը ոչ մի արգելք չունի քոչվորների՝ սարը բարձրացնելու դեմ: գ) Շահմազյանը մեղք է կր տեղում նախկին պաշտոնով:

«Կառավարության լրաբեր», 30 մայիսի 1919թ.:

N 12

3 Հունիսի 1919թ.

**Լսեցին.** Ներքին գործերի մինիստրի գեկուցումը Ղարաբաղի եւ Զանգեզուրի ծախսերը հոգալու մասին:

**Որոշեցին.** Հատկացնել 8 միլիոն ուրբուլ ֆոնդից Ղարաբաղի, Զանգեզուրի համար յուրաքանչյուրին 400 հազար ուրբլի ամսական, սկսած՝ Ղարաբաղի համար, սույն թիվի մասին ամսից, իսկ Զանգեզուրի համար՝ Հունիսից:

ՀԱԱ, ֆ.Պ-206, ց.1, գ.27, թ.176 հավ.:

N 13

14 Հունիսի 1919թ.

**Լսեցին.** Ձինվորական մինիստրի պաշտոնակատարի գեկուցումը Ղարաբաղի գործամար՝ բաղկացած մի հետևակ գումարտակից, 2 լեռնային թնդանոթից եւ 54 ձիավոր հետախուզողներից, կազմակերպելու համար 1,5 միլիոն ուրբլի հատկացնելու մասին (գեկ. 5882, Հունիսի 12):

**Որոշեցին.** Ղարաբաղի գործամար՝ բաղկացած մի հետևակ գումարտակից (батарьон), 2 լեռնային թնդանոթից եւ 54 ձիավոր հետախուզողներից, կազմակերպելու համար բանալ Ձինվորական մինիստրին Ղարաբաղի 8 միլիոն ֆոնդից 1,5 միլիոն ուրբլի:

Նույն տեղում, թ.188:

N 14

23 Հունիսի 1919թ.

**Լսեցին.** Մինիստր-նախագահի գեկուցումը Ղարաբաղի գեպերի առթիվ կր թիֆլիս մեկնելու մասին:

**Որոշեցին.** 1.Ընդունել, որ Հայաստանի կառավարությունը Ղարաբաղի վերաբերմամբ մեղք է կր վճարի հաստատ, այն է՝ Ղարաբաղը Հայաստանի Հանրապետության անբաժան մասն է կազմում եւ առայժմ պետք է կառավարվի անգլիական զենեղաբանահանգապետով, Ազգային խորհրդի մասնակցությամբ: Բողոքել Ղարաբաղի խաղաղ հայ ազգաբնակչության վերաբերմամբ կատարված բռնությունների առթիվ:

2. Շուշու անգլիական հրամանատարության կից Հայաստանի ներկայացուցիչ նշանակել Հովսեփ Արզումանյանին:

Նույն տեղում, թ. 213 եւ հավ.:

N 15

28 Հունիսի 1919թ.

**Լսեցին.** Ղարաբաղի առթիվ նախկին նիստում արած գեկուցման մասին: ա) Ղարաբաղի եւ Ադրբեյջանի փոխհարաբերությունները:

բ) Ղարաբաղի հայ գաղթականության եւ որբերի խնամության հարցը: **Որոշեցին.** ա) Ղարաբաղի եւ Ադրբեյջանի փոխհարաբերությունների հարցում կառավարությունը մեղք է կր նախկին տեսակետի վրա:

բ) Հայտնել Բաքվի Ազգային խորհրդին, որ կառավարությունը ըստ հնարավորության չի խնայի իր միջոցները Ադրբեյջանի սահմաններում գտնված հայ գաղթականության համար, որ այդ նպատակով գումարներ հատկացված են արգեն եւ որ այսուհետեւ եւս նա չի դյանա հոգ տանել Ադրբեյջանի հայ գաղթականության մասին:

«Կառավարության լրաբեր», 26 սեպտեմբերի 1919:

N 16

28 Հունիսի 1919թ.

**Լսեցին.** Ձինվորական մինիստրի գեկուցումը Ղարաբաղի հայկական կատորածի առթիվ մի խումբ ուսու սպաների արտահայտած գալույթի մասին:

**Որոշեցին.** Հանձնարարել Ձինվորական մինիստրին՝ Հայտնել այդ սպաներին կառավարության շնորհակալությունը արտահայտած զգացմունքների համար:

«Կառավարության լրաբեր», 19 սեպտեմբերի 1919:

N 17

14 Հուլիսի 1919թ.

**Լսեցին.** Արտաքին գործերի մինիստրի գեկուցումը Շուշու անգլիական միսիային կից ներկայացուցիչ փոխնդապետ Մ.Արզումանյանին ներկայացուցչական ծախսերի համար Ղարաբաղի 8 միլիոն ֆոնդից 11.631 ուրբլի տալու մասին:

**Որոշեցին.** Հանձնարարել Ձինվորական մինիստրին՝ տալ Ղարաբաղի 8 միլիոնի ուրբուլ ֆոնդից Շուշու անգլիական միսիային կից ներկայացուցիչ փոխնդապետ Միբայել Արզումանյանին 11.631 ուրբլի:

«Կառավարության լրաբեր», 13 Հոկտեմբերի 1919:

N 18

17 Հուլիսի 1919թ.

**Լսեցին.** Ձինվորական մինիստրի գեկուցումը Ղարաբաղի 8 միլիոն ուրբուլ ֆոնդը սպասելու պատճառով նորից 8 միլիոն ուրբուլ վարկ բանալու մասին:

**Որոշեցին.** Համաձայն 1919թ. Հունիսի 5-ի օրենքի՝ բանալ Ձինվորական մինիստրության 8 միլիոն ուրբուլ վարկ Ղարաբաղի կարիքներին համար: Միաժամանակ Հանձնարարել բոլոր մինիստրներին մտցնել իրենց նախահաշիվներին մեջ Զանգեզուրի եւ Ղաթարի հանքերի ծախսերը եւս:

«Կառավարության լրաբեր», 18 Հոկտեմբերի 1919:

N 19

3 օգոստոսի 1919թ.

**Լսեցին.** Մինիստր-նախագահի գեկուցումը Շուշու անգլիական հրամանատարության կից ներկայացուցիչ նշանակելու մասին:

**Որոշեցին.** Համաձայն գեկ. Կորիի հավանության՝ կապիտան Մուրադյանին նշանակել Շուշու անգլիական հրամանատարության կից ներկայացուցիչ: Մախսերը հոգալ Ղարաբաղի 8 միլիոն ուրբուլ ֆոնդից, միևնույն հաշվով, ինչպես հոգում էր Արզումանյանի ծախսը:

ՀԱԱ, ֆ.Պ-206, ց.1, գ.27, թ.259:

N 20

13 սեպտեմբերի 1919թ.

**Լսեցին.** Ներքին գործերի մինիստրի առաջարկը Զանգեզուրը ուժեղացնելու մասին:

**Որոշեցին.** Հավանություն տալ սույն օրագրին կցած Զանգեզուրն ուժեղացնելու նախագծին՝

Նույն տեղում, թ.297:

N 21

10 Հունվարի 1920թ.

**Լսեցին.** Հայաստանի ազրբեջանյան ներկայացուցիչ Տ.Բեկզադյանի զեկուցումը Ղարաբաղի կարիքների համար ծախսված 650.300 ուտրլի վճարելու մասին:

**Որոշեցին.** Ընդունել այդ գումարը վճարված մեր զիվանդիտական ներկայացուցչի միջոցով, Բաքվի Ազգային խորհրդից պահանջել ստորագրություն եւ հաշիվ:

Նույն տեղում, գ.112, թ.4 հակ.:

N 22

11 մայիսի 1920թ.

**Լսեցին.** Զեկուցում Ղարաբաղ-Զանգեզուրի ինֆորմացիայի կանոնադրման մասին:

**Որոշեցին.** Հանձնել կրթական նախարարին ամբողջ պրոպագանդայի գործի կազմակերպումը Հայաստանում:

Նույն տեղում, թ.84 հակ.:

N 23

12 մայիսի 1920թ.

**Որոշեցին.** Բաց թողնել ննամատրություն նախարարությանը 15 միլիոն ուտրլի Ղարաբաղի գաղթականությանը տնտեսական օժանդակություն տալու համար:

«Կառավարության լրաբեր», 16 Հունիսի 1920:

N 24

25 մայիսի 1920թ.

**Լսեցին.** Վարչապետի զեկուցումը Ղարաբաղի հարցի մասին: Լսեցին նաև Ղարաբաղի ներկայացուցչները եւ կարգապահների տեղեկագրեր:

**Որոշեցին.** Նախապես ամեն անհրաժեշտ կարգադրություն կատարված լինելով, եղան միայն գանազան հարցեր ու շուրջը խորհրդակցություններ:

ՀԱԱ, ֆ.Պ-206, ց.1, գ.112, թ.95:

N 25

26 մայիսի 1920թ.

**Լսեցին.** Զանգեզուրի եւ Ղարաբաղի ազմինիստացիայի եւ միլիցիայի նախահաշվի մասին ներքին գործերի նախարարի զեկուցումը:

**Որոշեցին.** Հաստատել նախահաշիվը:

Նույն տեղում, թ.97 հակ.:

N 26

21 օգոստոսի 1920թ.

**Լսեցին.** Դրոյի զեկուցումը զինվորական վերջին գործողությունց մասին ի Ղարաբաղ եւ ի Զանգեզուր:

**Որոշեցին.** Հանձնարարել ներկայացնել գրավոր զեկուցում, հետո ըստ էություն մտանալու համար հարցերուն:

Նույն տեղում, թ.177:

N 27

22 սեպտեմբերի 1920թ.

**Լսեցին.** Հանրային կրթության նախարարի օրինագիծը Ղարաբաղից դաղթած զարդակական պաշտոնյաներին նպատ տալու համար մեկ միլիոն ուտրլու վարկ թանաղու մասին:

**Որոշեցին.** Հաստատել, տալ մի միլիոն ուտրլի:

Նույն տեղում, թ.199 հակ.:

N 28

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՎՈՐԽՈՐՀԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ  
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԸ ԽՈՐՀԻՐԳԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ  
ՄԻԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

[1921թ.]

1. Բնակչության ազգային կազմը. 85%֊ը հայեր են:  
2. Հայաստանին միանալու իմաստով բազմաթիվ համազումարներում բնակչության պարզ եւ որոշակի արտահայտված կամքը:

3. Շուշիի գործկոմի եւ այլ տեղական իշխանությունների վարչական պրակտիկան բնավ նպաստավոր բնույթ չունի ազգամիջյան ընդհարումները եւ վեճերը անհիմնադրաբար վերացնելու համար: Ազգային ճնշումը ի մեծի դերախույս էլ լինում է մինչեւ այժմ բնակչությունն զգում է: Իրենեւզի դեպքերը հատկապես խորացրին հայ զուգադիմության անվստահությունը Ազրբեջանի խորհրդային իշխանության նկատմամբ:

4. Տեղական իշխանությունների վարչական պրակտիկան առաջացրեց հայ բնակչության ուժեղ շարժում Ղարաբաղի սահմաններից դուրս (Բաքվում, Անդրկասպիայում, Հյուսիսային Կովկասում): Բնակչության հետ հեռանում է նաև մտավորականությունը, նույնիսկ կոմունիստներ, սա արյունաքամ է անում երկիրը:

5. Բնակչությունը կորցնելով իր մշակութային կենտրոնը՝ Շուշին, այժմ դատապարտված է ամենախուր անկուստուրական վիճակի: Նրան պետք է մշակութային կենտրոն, որը միաժամանակ պետք է լինի եւ Լեռնային Ղարաբաղի վարչական կենտրոնը:

6. Լեռնային Ղարաբաղի միացումը Հայաստանին երկրամասը տնտեսապես չի կորում Ազրբեջանից, մասնավորապես հարթավայրային շերտից: Ընդհակառակը, հայ բնակչության ազատագրումը վարչական ճնշումից եւ մաքսային ուղեփակցների, արգելափակիչ ջոկատների հանումը ավելի կուժեղացնեն տնտեսական կարգ, ճիշտ այնպես, ինչպես այդ այժմ նկատվում է Ղազախ-Շամշադիի շրջանում:

ՀԱԱ, ֆ.113, ց.3, գ.7, թ.142 եւ հակ. -143: Ձեռագիր: Թարգմ., ուսս.:

### **ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՓԵՏՐՎԱՐԾԱՆ ԱՊՍՏԱՄԱՐՈՒԹՅԱՆ ԴԵԿԱՎԱՐՄԱՆ ՀԱՐՑԻ ԵՈՒՐՋ (ՆՈՐԱՀԱՅՑ ՎԱՎԵՐԱԳԻՐ)**

Առաջադրված հարցը վերաբերում է 1921թ. փետրվարյան ապստամբության որոշ կողմերի. ե՛րբ է այն ընդունել կազմակերպված բնույթ, չԵ՛րհանկցությունը ե՛րբ է ստանձնել ապստամբության ղեկավարությունը:

Հրապարակվող փաստաթուղթը, որը կրում է չԵ՛ր Բյուրոյի (նրա պաշտոնատար անդամների) ստորագրությունը, պաշտոնական կարգով պարզություն է մտցնում ավյալ հարցում:

Գրականության մեջ, անկախ հեղինակների կուսակցականությունից ու հայացքների քաղաքական ուղղվածությունից, արտահայտվել է երկու միմյանց հակադիր տեսակետ՝ փետրվարյան ապստամբությունը կազմակերպվել է Հայաստանի խորհրդայնացումից հետո, այսինքն՝ տարերային ընթացք չի ունեցել: Մյուս տեսակետն է՝ ապստամբությունը, որի պատճառը եղել է խորհրդային իշխանության քաղաքականությունը եւ գրանից բխող համաժողովրդական գժգոհությունը, սկսվել է տարերայնորեն եւ միայն որոշ փուլում է այն գարձել կազմակերպված ու ղեկավարվող շարժում, զինված կռիվ:

Առաջին տեսակետի պաշտպանները հիմնականում հիմք են ընդունել անդլիական «Թայմս» թերթի հետեւյալ հաղորդագրությունը. թերթի 1921թ. հունվարի

<sup>1</sup> Արխիվային գործում նախագիծը չկա:



**ՀՀ ՊԱՏՎԻՐԱԿԱՌԻԹՅԱՆ ԵԱԽԱԳԱՀ ԸՆԿԵՐ Ա.Ա.ԱՐՈՆԹԱՆԻՆ**

14 փետրվարի 1921թ. օրիվ 23

Երկու ամիս առաջ Հայաստանում կատարված Հեղաշրջման մասին ժամանակին Հաղորդել ենք Ձեզ՝ Հնարավոր չափով պարզելով այդ Հեղաշրջման պատճառներն ու հետևանքները:

Ուշի ուշով հետևելով նոր, խորհրդային իշխանության քաղաքական քայլերին Հայաստանում՝ մենք գային ենք այն եզրակացություն, որ այդ իշխանությունը ոչ արտաքին եւ ոչ ներքին քաղաքականության մեջ չէ կարողանում եւ չի կարող ոչ աղայել անգամ հետափոր չափով արդարացնել այն խոստումները, որ տային էին Հայաստանի սովետիզացիայի դիվալոր Հեղինակները Հեղաշրջման սկզբին: Ըստ այդ խոստումների, որ գրավոր ձևակերպություն են ստացել այն պայմանագրություն մեջ, որ կերված է խորհրդային իշխանության ներկայացուցիչների եւ Վրացյանի կառավարության միջև: Հայաստանի խորհրդային իշխանությունը մի կողմից պետք է սպառնար շայտաստանի անկախությունը, իսկ մյուս կողմից՝ ամբողջացնել ծվատված երկիրը գեթ նախկին Ռուսահայաստանի սահմաններում՝ դուրս մղելով սահմաններին եւ վրացիներին գրաված վարկերից եւ արտաձեղով կենտրոնական իշխանության տիրապետությունը անջատված Շարուրի, Նախիջևանի, Ջանգեզուրի եւ Վարաքաղի վրա:

Սակայն այսօր Հայաստանը փաստորեն վերածված է մի նահանգի, որտեղ ոչ թե սեղական Հայկական իշխանությունն է կարգադրում պետական գործերը, այլ ուսուսական բանակի հրամանատարությունը, նրա հետ Հայաստան ժամանած կոմիտարները (Ռուսաստանի) խորհրդային) Հանրապետության լիազոր ներկայացուցչությունը, որոնք նույնիսկ լեզվի խնդրում չեն կարողանում հեռու կենտրոնական ցարական կառավարության որդեգրած ուսուցման քաղաքականությունից:

Ավելի լավ վիճակի մեջ չէ երկրի ամբողջացման գործը: Ճահկները եւ վրացիները մինչև այսօր էլ գրաված պահում են Հայաստանի կարևոր մասերը եւ ոչ միայն Հավանություն չեն ցույց տային հետ քաշվելու, այլև օրըստօրի ուղղմապես եւ քաղաքականապես ուժեղացնում են իրենց դիրքերը: Շարուր-Նախիջևանը ինչպես անցյալում, նույնպես եւ այժմ հրամարվում է մանկ Հայաստանի Հանրապետության մեջ, իսկ Ջանգեզուրը, որ առաջ փաստորեն գտնվել Հայաստանի մասն էր կազմում, այսօր միացած Վարաքաղի որոշ մասերի հետ իրեն անկախ է Հայտարարել եւ չի էլ ուզում լսել խորհրդային) Հայաստանի մասին:

«Երկրի ամբողջացնելու» սապարեղում Հայաստանի խորհրդային իշխանության աշխատանքները ցար սահմանափակվել են «ընկերական» խնդրով, հորդորներով, «կարմիր կոչերով» եւ դիվանագիտական Հայտադրերով, որոնք ոչ գեթ կողմից ուղարկության չեն առնվում, իսկ Ռուսաստանը, առանց այն էլ զբաղված ներքին ու արտաքին հազար ու մի հարցերով, հակամետ չի երևում իր արեւելյան քաղաքականությունը եւ այդ քաղաքականությամբ շահած խլամական աշխարհի համակրանքը վտանգել ինչ որ հայկական գաղառների համար:

Ներքին քաղաքականության մեջ խորհրդային) իշխանությունը, համաձայն վերահշյալ խոստումների, ըստ ամենայնի խույս տալով քաղաքացիական կռիվ եւ մասսայական բռնադրվումների արհավիրքներից, պետք է օգտագործեր բոլոր կենդանի ուժերը երկիրը վերաշինելու համար եւ Ռուսաստանից ու Արբրելյանից դուրս, կենսամթերք, հազուստեղեն եւ վտակիր րեբելով, պարենավորել արեւելյան րին, գաղթականներին ու որբերին, կանոնավորել) ֆինանսները, Հաղորդակցությունը եւ ընդհանրապես կարգ հաստատել երկրում:

Այս ամենի փոխարեն մենք այսօր տեսնում ենք կատաղի Հայաժանք բոլոր ոչ մեծամասնականների եւ, ի մասնավորի, դաշնակցականների դեմ, հարյուրավոր եւ հազարավոր հայ սպաների ձերբակալումն ու արքունիք Ռուսաստան, իրիտ Հարստահարության հասցրած բռնադրվումներ ոչ միայն ունեւոր գտաի, այլև միջակ կարողության տեր եւ մինչև իսկ աղքատության վիճակում գտնվող մարդկանցից: Սովալուկ գաղթականներ եւ անխնամ թողած որբեր, որոնք օրական սասնակներով կտորվում են Ռուսաստանից եւ Արբրելյանից գալիք բարբերների սպանելով, մինչդեռ նրանց համար ամերիկացիների թողած խոսացրած կաթի եւ այլ մթերքները հարյուրավոր սալերով ստաքվում [են] Ռուսաստան, Հաղորդակցու-

27-ի համարում սպազբվել է նրա Կոստանդնուպոլսի թղթակցի Հաղորդումն այն մասին, թե հուլիարի սկզբին Թիֆլիսում կայացած կոնֆերանսում դաշնակցականների ղեկավարները «լճուկ են բոլոր հնարավոր միջոցներով շարունակել կռիվը բուլշևիզմի դեմ»: Սակայն, այնուհետև սաված է Հաղորդման մեջ, եւ որը համարում ենք շատ կարևոր, «առանց դրսի օգնության ոչ մի հույս չկա, որ Հայաստանը կարողանա ապստվել բուլշևիկների լծից»:<sup>1</sup> Այստեղից բոլորովին չի հետևում, թե ավել կոնֆերանսը որոշում է ընդունել խորհրդային իշխանության դեմ սպասամբելու մասին: Ուսք է դնում պայքարի մասին ընդհանրապես եւ ոչ թե սպասամբելույան մասին:

Հիմնավոր է երկրորդ տեսակետը: Խորհրդային իշխանության ճնշման ու բռնությունների քաղաքականությունը եւ ձերբակալությունները ուժեղ գեթոհուլիանները առջացրին ժողովրդական լայն դանգվածների շրջանում, ուստի գաղտնիներում ու շրջաններում տարեբայտերն կազմավորվում են զինված խմբեր, սկզբնապես հիմնական խնդիր ունենալով բանտերից ձերբակալված ընկերներին ազատել: Միայն ժամանակի ընթացքում է շարժումն ընդունում կազմակերպված ընդլթ, ձեռք բերում զեկավարություն: Կարևոր նշանակություն ունեցավ 1921թ. փետրվարի 13-ին Կոստայի շրջանի Ջուս գյուղում տեղի ունեցած խորհրդակցությունը, մասնակցությամբ մի խումբ ղեկավար գործիչների: Որոշվեց սպասամբել բուլշևիկներին իշխանությունը ստապելու համար, նշելով Երևանի վրա գրոհելու ժամկետը:<sup>2</sup>

Ինչ վերաբերում է սպազբվող փաստաթղթին, որը գրվել է Ջուսի ժողովի հաջորդ օրը՝ փետրվարի 14-ին, սպա այն ներկայացնում է ՀՅԴաշնակցության ղեկավար մարմնի Բյուրոյի պաշտոնական տեսակետը կուսակցության ղեկավարությունամբ ապստամբելու եւ իշխանությունը գրավելու մասին: Պարզ է, որ Ջուսում որոշում ընդունողները եւ Բյուրոյի անդամները, որոնք հավանաբար գտնվելիս են եղել մինչևեկական Վրաստանի մայրաքաղաքում, գործում էին համատեղ, որոշում կայացնելով միաժամանակ: Դա լրացուցիչ սպազույց է, որ հուլիարի սկզբին սպասամբելույան մասին որոշում չէր կարող ընդունված լինել:

Փաստաթուղթը, որ հրատարակվում է առաջին անգամ, անդրադառնում է հետևյալ հարցին.սպասամբելու պատճառները, բուլշևիկների իշխանությունը տապալելու եւ իշխանությունը Դաշնակցության կողմից գրավելու անհրաժեշտությունը: Ինչ է հարկավոր անել, հասկապես գրսից, սպասամբելությունը հաջողացնելու համար:

Հետաքրքիր է, որ Բյուրոյի սույն նամակ-զրույթյունը, որ պահպանվում է ՀՅԴաշնակցության Բոստոնում գտնվող կենտրոնական արխիվում, որքան մեզ հայտնի է, տեղ չի գտել, չի օգտագործվել դաշնակցական գրականության մեջ: Երևի ցույց տալու համար, թե կուսակցության ղեկավարությունը, մինչև Երևանի վրա հարձակվելը եւ նրա գրավելը, սպասամբելու եւ այն ղեկավարելու մասին որոշում չի ունեցել:

Փաստաթուղթը, ինչպես կարելի է ենթադրել ստորագրություններից, կարող է գրված լինել Բյուրոյի անդամ-քարտուղար Գեւորգ Վազարյանի ձեռքով: Երևանում իշխանությունը բուլշևիկներին հանձնելուց հետո (դեկտեմբերի 2, 1920թ.) Դաշնակցության ղեկավարների մի մասը հեռացել էր դեպի մենշևիկյան Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիս, որտեղից եւ պետք է ուղարկված լինի գրություն-նամակը:

Վավերագրում կատարված ընդգծումները մերն են:

**Վաղմիր Վազարյան**  
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
**Համլիս Գեւորգյան**  
պատմական գիտությունների թեկնածու

<sup>1</sup> Թերվում է ըստ՝ Գրիգոր Չուբարյան, Դաշնակցության սոցիական օրինեսացիան եւ Հայրենիքի փրկության կոմիտեն: Երևան, 1929, էջ 37-38:  
<sup>2</sup> Ս.Արսեյան, Հայաստանի Հանրապետություն: Երևան, 1993, էջ 560: Կ.Ասուսյան, Փետրուարեան սպասամբությունը, Պէյրուս, 1970:

թյան կատարյալ դադարում, ֆինանսական սոսկալի ճգնաժամ, անօրինակ բազմիշխանությունների քաղաքներում, կատարյալ անիշխանություն գավառներում, պաշտոնյաների մի չտեսնված սանձարձակություն, քաղաքացիական ազատությունների բացարձակ վերացում եւ ի յրումն այս ամենի՝ անտուն, անտեր Հայ գաղթափանհներեւեւ Հնդագուրի գյուղացիների վտարումը այն վայրերից, ուր նրանք տարիներէջ ի վեր Հաստատվել են, որպէսզի այդ վայրերի նախկին թուրք բնակիչները վերագտնան իրենց տեղերը:

Սորհրդալին իշխանությունն արտաքին քաղաքականությունից Հիասթափված եւ ներքին կայուն բռնություններից եւ բռնազրավումներից ջղայնացած ժողովուրդը լցված է սոսկալի առելությունամբ գեպի նոր իշխանությունը: Մինչեւ անգամ երկրի գաշնակցութեան կատարի Հակառակորդները երանի են տալիս այն օրերին, երբ երկրի դեկը գաշնակցականների ձեռքին էր գտնվում: Ժողովրդի արամադրությունն աչքի առաջ ունենալով, գծվար չէր լինի մի նոր Հեղաշրջումը մի քանի օրվա ընթացքում ազատել երկիրը այս նոր կարգի բռնադրներից, եթէ չլիներ այն վախը, որ Ալեքսանդրապոլում դարանած թուրքերը, որոնք, Ղարսի շրջանն ու Շիրակի մեծ մասը ավերելուց եւ սրբելուց Հետո, մեծ պետքակ ունեն Արարատյան դաշտն եւս ոտի տակ տալու, իսկույն կօտրվին այդ դեպքից երեւանը գրավելու Համար: Սակայն այս գծաբառությունը կարող է պատահել նաեւ առանց կազմավերւպված Հեղաշրջման ժողովրդական տարերային շարժումն Հետեւանքով, որ ամեն օր կարող է բռնկվել, եւ որ մենք նախատեսնում ենք, ի նկատի ունենալով ժողովրդի օրավուր անող առելությունն ու թշնամական վերաբերմունքը գեպի խորհրդալին իշխանությունը: Էլ չենք խոսում այն մասին, թե այսպիսի մի տարերային շարժումը ինքնբերտիչըյան որպիսի մեծ չարիք է Հանդիսանում մեր առանց այն էլ քայքայված երկրի Համար:

Այս Հանգամանքներում կենսական պահանջ է դառնում մեր երկրի եւ ժողովրդի Համար խորհրդալին իշխանություն կազմակերպված տապալումը Հայաստանում: Այս գործի Համար կան մի քանի նախադրյալներ, որոնց յուժումը մեծապես կախված է ձեզանից եւ մեր արտասահմանյան գործիչներից եւ որոնց մասին Բյուրոն Հարկ է Համարում այդ ձեզ եւ ձեզ Հետ գործող մեր բոլոր կուսակցական ընկերներին Համապատասխան պահանջներ:

1. Դեկտեմբերի 2-ին երեւանում եւ Ալեքսանդրապոլում կըքված գաշնակրբը՝ մերը մեծամասնականների եւ մյուս թուրքերի Հետ, պիտի Հայտարարել բացարձակապես անընդունելի եւ սպառնալիքի տակ կորզված՝ միանգամայն Հակառակ Հայ ժողովրդի եւ Հայաստանի Հանրապետության կառավարության կամքին:

2. Բացարձակապես դեմ պիտի գնալ Ռուսահայաստանից Հրամարվող տարրերին, որովՀետեւ նախ՝ Ռուսաստանի լիազոր ներկայացուցչությունը մի գաշնակրդով՝ կըքված Հայաստանի) Հանրապետական կառավարության Հետ, արգենն Հրամարվում է այդ Հողամասերից Հողուտ Անկախ եւ Միացյալ Հայաստանի եւ ապա՝ գործնականապես անհնարին է Հիմնել Հայ պետականությունը առանց այն կոմպակտ Հայութեան օժանդակության, որ գտնվում է նախկին Ռուսահայաստանում:

3. Միացյալ եւ Անկախ Հայաստանի խնդիրը նախ պիտի պաշտպանվի ամբողջ թափով՝ Համաձայն Սեւրի գաշնագրի եւ Վիլսոնի որոշած սահմաններում: Սակայն եթէ ինչ-ինչ պատճառներով այս պաշտպանությունը դառնա միանգամայն անհնարին, կամ գործնականապես պարտվի, որ Լոնդոնում՝ կըքվելիք գաշնագիրը նույնպիսի ամուլթեան պիտի դատապարտվի, ինչպես Սեւրի գաշնագիրը, այդ դեպքում անհրաժեշտ է գաշնակից պետությունների միջնորդությունը կամ անմիջական Հարաբերությունը Համաձայնության գալ տաճիկների Հետ՝ սահմանների խնդրում իրրեւ մինիմում ընդունելով այն պրոյեկտը, որ ներկայացված էր Ալեքսանդրապոլի դեկտեմբերի կողմից Անդորայի կառավարության ներկայացուցիչներին: Տաճկաստանի Հետ Համաձայնության գալը անհրաժեշտ նախադրյալ է Հանդիսանում մեծամասնականների իշխանությունն տապալման Հայաստանում եւ

<sup>1</sup> Այդպես է բնագրում - Վ.Ղ., Հ.Գ.:

<sup>2</sup> Վանի, Բայազետի սանձակները, Մուշի սանձակի մի մասը, Խնուսի գազան եւ Բաթումից Հարավ տարածքը, մինչեւ Վիլի: Տես՝ ՀԱԱ, ֆ. 9-200, ց.1, գ.636, թթ. 117-120 (Կարաբեքիի պատասխանը Ալեքսանդրապոլի բանակություններում Հայաստանի պատվիրակությանը 1920թ. նոյեմբերի 30-ին): -Վ.Ղ., Հ.Գ.:

այդ Համաձայնությունն անպատճառ պետք է կայացնել, եթէ պարզվից, որ դիվանագիտական միջոցներով կամ արտաքին ուժի ճնշմամբ անհնարին է լինելու Հեղաբացնել տաճկական վտանգը մեր սահմաններից:

4. Հանրապետության նախկին պաշտոնական ներկայացուցիչները, իրրեւ նշանակված վաստորեն եւ իրավականորեն ճանաչված երկրի կառավարությունից, պիտի մնան իրենց պաշտոնավարության մեջ եւ իրրեւ այդպիսին, չպիտի ճանաչեն երկրի այժմյան կառավարությունը, չկորցնելու Համար այն իրավական լիազորությունները, որ օրինավոր ճանապարհով ստացել են նախկին կառավարությունից:

5. Պետք է ջանալ ի մի ամփոփել բոլոր Հակամեծամասնական քաղաքակառուցողական վարող օրգանների գործունեությունը՝ վերջ տալով այն տարածայնություններին, որ գոյություն ունեն այդ օրգանների եւ մասնավորապես Հայաստանի Հանրապետության ներկայացուցչության եւ Ազգային] պատվիրակության միջև:

6. Հայաստանի Հանրապետության գումարներից, որոնք գտնվում են ձեր ներկայացուցչությունն արամադրության տակ, անմիջապես մի խոշոր բաժին պետք է Հանել եւ Պոսի կլինարոնական կոմիտեի միջոցով ուղարկել մեզ, կազմակերպելու Համար այն աշխատանքները, որոնք ձրազրված են մեծամասնականների տիրապետության տապալման Համար:

Ընկեր ՍԱրարատյանը լիազորված է մեր կողմից Հիմնավորելու մեր տեսակետները ու պահանջները ներկա քաղաքական մոմենտի եւ դրանից բխող խնդիրների վերաբերյալ արտասահմանում գտնվող բոլոր կուսակցական օրգանների եւ ընկերների առջ:

ՀՅԴ Բյուրոյի Հերթական անդամ **Ա.Ջամալյան**  
Անդամ-քարտուղար **Գ.Ղազարյան**

ՀՅԴ Կենտրոնական արխիվ (Բուստոն), գործ 121, փաստաթուղթ 16:  
Բնագիր: Ձեռագիր: Փաստաթուղթը գրված է «ՀՅ Դաշնակցության Բյուրո» գրոշմակները կրող 3 թերթների բոլոր 6 էջերի վրա:

## ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԵՐԿԱՅԱՑՈՒՑԻ ՄԻՀՐԱՆ ՏԱՄԱՑՅԱՆԻ ՁԵԿՈՒՑԱԳՐԵՐԸ ԵՒԼԻԿԱՑԻ ԿԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1916թ. Անգլիայի ու Ֆրանսիայի միջև կըքված Սաբր-Պիլոյի գաղտնի Համաձայնագրով, թուրքիայի պարտությունից Հետո, Կիլիկիան պետք է անցնել Ֆրանսիային: Սակայն, Մերձավոր Արեւելքում բավարար չափով սազմական ուժ չունենալու պատճառով Ֆրանսիային չի Հաջողվում մինչեւ Մուզոսի գինադադարի ստորագրումն իրականացնել Կիլիկիայի սազմական գրավումը: 1918թ. Հոկտեմբերի 30-ին, Մուզոսում, Անտանտի ներկայացուցիչների եւ Թուրքիայի միջև ստորագրվում է դիմադադար, որի 10-րդ Հոդվածով նախատեսվում էր թուրքական գործերի գուրս բերումը Կիլիկիայից: 1919թ. Հունվարին Ֆրանսիական եւ բրիտանական կառավարությունների Համաձայնությունը կիլիկիայի վերահսկողությունը Հանձնվում է Ֆրանսիական սպաներին, որոնք պետք է ենթարկվեին անգլիական զորավար Ալենրիին: 1919թ. փետրվարի 1-ին Ֆրանսիական բանակի գնդապետ Բրեմանը, ժամանելով Ադանա, ստանձնում է իր պարտականությունների կատարումը: Երբ 1919թ. սեպտեմբերի 15-ին Անգլիայի ու Ֆրանսիայի միջև կըքված Համաձայնագրով Կիլիկիայում անգլիական գործերը փոխարինվում են Ֆրանսիականով, այնտեղ քաղաքական գրությունը կտրուկ սրվում է՝ քեմալականների եւսանդուն գործողությունների Հետեւանքով: 1919թ. աշնանը, քեմալական ղեկավարությունը

սկսում է լուրջ պատրաստություններ տեսնել Կիրիկիայի դեմ առաջին հարվածը իրականացնելու համար: Արդեն 1920թ. հունվարին քեմալական զորքերն ու տեղացի չեռնիկները՝ օգտվելով ֆրանսիական զինվորական վարչություն րոտնած անվճարական ու երեւրեց գիրքից, ազգամական գործողություններ են սկսում Մարաշի դեմ, ուր բնակվում էր մոտ 20000 հայ: Փետրվարի 11-ին, շուրջ 20 օր տևած մարտերից հետո, երբ թուրքական կողմը, փաստորեն, պատրաստվում էր գեները վայր դնել, գեներալ Բերիթը ֆրանսիական զորքին նահանջի հրաման է արձակում: Ֆրանսիական հրամանատարություն այս քայլը ողբերգական հետևանք է ունենում Մարաշի հայության համար՝ շուրջ 11000 հայ չնչնացվում են թուրքերի կողմից: Նման ողբերգական վախճան են ունենում նաև Կիրիկիայի հայաշատ մյուս խոշոր քաղաքներն ու նրանց շրջակա գյուղերը՝ Հաճընը, Ռիրֆան, Այնթապը, Ջեյթունը և այլն:

Ֆրանսիական կառավարությունը 1921թ. հոկտեմբերի 20-ի Անկարայի պայմանագրով, Կիրիկիան առյիս է թուրքիային: Ստորև ներկայացված են Կիրիկիայում Միացյալ Հայաստանի պատվիրակության ներկայացուցիչ Միհրան Տամատյանի Կ.Պոլսի հայոց պատրիարքության հասցեով ուղարկած 5 գեկուցագրերը /16.02 - 10.05.1920/, որոնք ներկայացնում են 1920-ի սկզբներին Կիրիկիայի ներքաղաքական դրությունը, ֆրանսիական հարձակումները, Կիրիկիայի հայության նկատմամբ ֆրանսիայի վարած երկակի ու ննչք քաղաքականությունը հետևանքով տեղի ունեցած հայկական ջարդերն ու Կիրիկիայի հայթափությունը:

Փաստաթղթերը հրատարակվում են առաջին անգամ: Ներկայացվող հավաքածուն կազմված է պատմական փաստաթղթերի հրատարակման գործող կանոններին համապատասխան:

**Առնյա Միրզոյան**  
պատմական գիտությունների թեկնածու

N 1

ԿԻՒԼԿԻԱՅԻ ԼԻԱԶՈՐ ԴԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Մ.ՏԱՄԱՏՅԱՆԻՉԵԿՈՒՑԱԳԻՐԸ  
Կ.ՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԿԱԶ ԶԱՎԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ՝ ՏԵՂԻ  
ԳԱՂԱՔԱՎԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԲԵՐ ՄԱՐՄԻՆԵՐԻ ՄՈՏ  
ԿԻՒԿԻԱՅԻՑԻՑ ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

16 փետրվարի 1920  
Աղանա

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայր.

Ահագանգէն վերջ ահա մահագանգ... Ամենաոխրոյ պարտականութիւնն ունիմ այս անգամ արիւնի և նախճիբի բոթը գուժելու Ձեր Սրբազնութեան և իր միջոցաւ Ազգ. պատվիրակութեան: Մարաշ, իր ամբողջ շրջանով, ոչ ևս է: 35-40, 000 հայութեամբ օծառած ցանկալի և պանծալի Հայկական Կիրիկիան շրջանէ մը մէկ քանի հազար խնակներ միայն այսօր կիսամեռ և անուաղ աստանդական կը թափառին մարդահասակ ձիւներու մէջ, ուրիշ հազարաւորներու թաղումը իրենց աչքով տեսնել վերջ նոյն վտանգին ամէն վայրիեան ենթակայ: Թրքական վատութիւնն ու վայրագութիւնը մեզի վազածանօթ էր, ինչ որ բաւմեղուցիչ և պակուցիչ է միանգամայն ֆրանսական զավճանութիւնն ու մատնութիւնն է, որ տասնակ հազարաւորներու անմեղ ու ֆրանսաէր հայերու կորուստին և Կիրիկեան ամէնէն կարեւոր միջնաբերդին կործանումին պատճառ դարձաւ...: փաստերը դժբախտարար ջարթախիչ են այս մասին:

Կիրիկիոյ ամբողջ շրջանը ամենածանր վտանգներու ենթարկուած է, և ամէնէն տեղ վառոթի տակաւոր, որուն վրայ նստած է Հայ ժողովուրդը, պայթելու մտ է: Կիրիկիոյ ամբողջ հայութեան սպառնացող օրհասական վտանգին, այս ահաւոր աղէտին հանդէպ ժողովուրդին անզոհական գաղտնամներուն, ինչպէս նաև արդար յուզման և գերաբարձութեան միջոցին, մեր շուրջ այնպիսի ահելի և անմիջական պարտականութիւններ և պատասխանատուութիւններ կը ծանրանան, որ անկարողութեան մատնուած ենք երկարօրէն տեղեկագրելով մեր կացութիւնը պարզելու Ձեր Սրբազնութեան, Ազգ. կեդրոնական վարչութեան, Ազգային պատուիրակութեան և Հայկական կառավարութեան: Այս հանգամանքներուն մէջ մեզի ուրիշ բան չէր մտար ընել, բայց միայն այստեղէն ճամբայ հանել պաշտօնական իրազեկ

անձնաւորութիւններ, որ գան պարզեն Ձեզ մեր դժոխախի կացութիւնը -կացութիւն մը որուն առջև կը նսեմանան Համիտեան շրջանի և Ատանայի 1909-ի եղերութեան ամենէն տխուր դրուագները - և մեր բարձրագոյն իշխանութեանց և անոնց միջոցով ,սպառնական, ֆրանսայի և դաշնակից ,պաշտպան, պիտուէնանց ներկայացնեն մեր զխուսն սպառնացող բնաջնջումի ահաւոր վտանգը, ինչպէս նաև մեր բողոքը, մեր պահանջները, մեր անվերածելի պահանջները: Արդար և, պէտք է լաւ համոզուած ըլլալ ամէն Հայ և ամէն մարդ, որ Կիրիկեան հայութիւնը և իր վարչիները, կեանքը և մահուան մէջ համընդհանր և ամենաոխրալի փութրիկներն են ծանրագոյն վտանգներու հանդէպ անընկճելի իրենց պահանջներն ունին: Դուք էք, Ազգային բարձրագոյն մարմիններն են, որ պիտի բարձրացնեն անոնց ծայրի ի լուր քաղաքակիրթ աշխարհին, եթէ, աւագ, քաղաքակիրթութիւնը անամէջ բաւ մը չէ, իր անուսով մղուած ամենապիւրջին համաշխարհային պատերազմէն վերջ ալ:

Ներկայ նամակը Ձեր Սրբազնութեան պիտի յանձնէ տեար Կարապետ Արքահամեան, որ իբր անխնայալի Ատանայի Հայ ազգային միութեան, ամենակատարեալ կերպով իրազեկ է ոչ միայն Կիրիկիոյ կացութեան բոլոր մանրամասնութեանց, այստեղ խաղաղութեան քաղաքական էնթրիկներուն և Հայալինջ գաւերուն շուրջ մեր բոլոր մտահոգութիւններուն, ինչպէս նաև մեր բոլոր անտութիւններուն և հայեցակէտերուն, և, վերջապէս, մեր բոլոր պէտքերուն: Նույնպէս ճամփայ կը Հանինք Մարաշի ամբողջ անցքերուն ակնատէս արթմնատեսութեան վրայ մը յանձնի տքթ. Յարութիւն Տ. Լազարեանի: Մեր թախանձագին դիմումին վրայ մեր ամենաանկեղծ թարեւած և բազմերախտ բարերար տքթթ. Ձէմարտ հակառակ իր յառաջացած տարիքին և այստեղ ունեցած պատասխանատու պաշտօնին, ի սէր մեր ազգին գերագոյն գոհոգութիւնն յանձն առաւ անմիջապէս ճամբայ ելլել Կ. Պոլիս գալու, իր հեղինակաւոր ձայնը, իր անժխտելիօրէն անկողմնակալ վկայութիւնը և թուրք, և հայկական գործերու շուրջ իր բազմամակ փորձառութիւնը ի սպաս դնելու յօգուտ Կիրիկիոյ տառապեալ ժողովուրդին փրկութեանը, և ի պաշտպանութիւն անոր սրբազան շահերուն: Անոր Կ. Պոլիս ներկայութեանը պիտի ունենայ, կը հաստատար, իր ամենամեծ նշանակութիւնը, մասնաւոր, ան պիտի կրնայ նաև խոսիլ յանուն բազմաթիվ ակահատէս ամերիկացիներու, որոնք իրեն տեղեկագրեցին Մարաշի եղեռնին ամբողջ ազիտարչ և ըմբոստացուցիչ մանրամասնութիւնները:

Աւելորդ է բսիլ, թէ Կ. Պոլսոյ մէջ այս միջոցին ներկայութիւնը գերապատիւ Տ.Մուշեղ արքեպիսկոպոս Սերոբեանին, որ կիրիկեան գործերու շուրջ խորունկ փորձառութեան մը կը միացնէ ներկայ տաղնապինի նախընթացներու ամենամտօրիկ իրացելի հանգամանքը, երկարատեւ ամիսներ մեզ հետ բաժնած ըլլալով մեր բոլոր մտահոգութիւնները, մեր ցաւերը, և մեր այնքան արգարացի ակնկալութիւնները - Մուշեղ արքեպիսկոպոսի ներկայութիւնը, կրտսէ, պիտի ունենայ իր մեծագոյն օգտակարութիւնը: Անշուշտ պիտի հաճիք միշտ զինքը խորհրդակից ունենալ:

Ասիկ զատ, կարծեմ, գերապատիւ Պայաքեան Հայր սուրբն ալ՝ Պ.Արքահամեանի և իր ընկերակցին հետ, միեւնոյն շոգեմուտով կը մեկնի Պոլիս և ինքն ալ պիտի բեթէ Ձեզի իր թանկագին վկայութիւնը այս կողմերու կացութեան մասին:

Ահա այսպէս, ամէնէն կարեւոր տարրերն ունիք Ձեր տրամադրութեան տակ կացութեան ամէն կողմերն լիուրի ուսումնասիրելու և բոտ այնմ ոչ միայն պէտք եղած կորովի, ամենազրու դիմումները կատարելու, այլ և խորհելու ահաւոր չարիքը, և վտանգը զիմազրուելու համար ազգովին կարելի միջոցները ձեռք առնելու համար: Մասնաւորապէս, կը խնդրեմ Ազգ. պատրիարքարանէ կը Ազգային պատուիրակութեանն և նկատի ունենայ մեր ասանակ հազարաւոր հին և նոր գաղթականներու ամենաթշուառ դրութիւնը և շուտափոյթ և կարեւոր օգնութիւններ հասցնել մեզ: Չպիտի դադրիմ մեր ազգին համար ամօթալի իրականութիւն նկատելու սա անհավատալի պարագան, թէ անցեալ յունիսէն մինչև ևս օրս, ճամտուան երկար շրջանին մէջ, ուր այստեղ կը գտնուիմ - բացի Բարեգործականի և Որբախնամի կանխորոշ նպատակով զրկած գումարներէն և թշկական առաքելութեան պիւսճէնէ - Կիրիկիոյ քնցահետք պէտքերուն համար Ատանայի ազգային միութիւնը ստացած է միմիայն 100.000 /հարիւր հազար ֆրանկ/, այն ալ մի միայն Ազգ. պատուիրակութեանն՝ իմ միջոցաւ: Նոյն ժամանակամիջոցին օտար Հաստատութիւնները, անզւ. կառավարութիւնը և, մասնաւոր, ֆրանսականը ամենախոշոր

գումարներ արամադրած են. ֆրանսական նպաստը միլիոններով կը հաշուի ու ես ուրիշ առիթով մասնանիշը բրած եմ, որ այստեղ սանթիմ մը չի ծախսուիր, որ Բարբաթական պարտուակիրն տակ միանգամայն չի ծառայէ քաղաքական նպատակներու եւ Հոգային Հաշուէլարգարութեան ժամանակ նմարին մէջ չի գրուի անհամաձայն փոխարինութիւններու, իրավունքներու, չափերու ապահովումին եւ տիրացումին համար...: Եւ բսկ, թէ մենք տակաւին կը պնդենք ու պիտի պնդենք ցփերը, թէ Կիլիկիան մեր հայրենի Հողին գոհարն է, թէ մեր կիլիկիան չափերը մեր ազգային չափերուն ամէնէն Հոգբրանական, ամէնէն կենսական մասը կը կազմեն: Եթէ մեր կացութեան այս ամօթայի կողմին Հակառակ, Պատուիրակութեան Կիլիկիոյ ներկայացուցչութիւնը եւ Ազգային միութիւնը կըրցած են բարձր պահէլ ազգին priestice-ը տարներու եւ ֆրանսացիներու իսկ առջեւ, եթէ կըրցած են իրենց հեղինակավոր դիրքը պահպանել մեր թշուառ եւ յուսալքէլ ժողովուրդին հանդէպ, եթէ ժողովուրդին, յուսախար լէզէ սնականներուն կարգապահութիւնը ցարդ կարելի եղած է պահպանել, եթէ անիշխանութիւնը, ներքին երկպառակութիւնները, ծայրային յուսահատութիւնը եւ անոր յարակից բոլոր չարիքները տակաւին չեն շղթայազերծուած, եթէ տակաւին այս գրբարտ կացութեան հանդէպ եւ ազգին մնացեալ Հաստատներուն կողմէ՛ զէպի ցանկալի Կիլիկիան ցոյց տրուած անտարբերութեան Հակառակ զանգուածային արտագաղթի կործանարար, բայց վերջ ի վերջոյ անխուսափելի, շարժում մը ծայր տուած չէ, պէտք է բնդուելի եւ խոստովանել, որ հրաք մը իրականացած է, հրաք մը, որ պատելով կը բերէ ինչպէս Ազգային միութեան անխոշ աշխատանքներուն եւ ազգին ամէն Հատուածներուն Հոգեւոր պետներուն եւ իշխանութեանց եւ քաղաքական կազմակերպութեանց համբարշխութեանը, իմաստութեանը եւ խոհմտութեանը, նոյնպէս՝ Կիլիկիոյ ժողովուրդին գիտակցութեանը, Հայրենասիրութեանը, կենսունակութեանը, չարքաշութեանը եւ անոնց նման բնատու ճնիկ պանծալի յատուութիւններուն: Բայց, վերջապէս, մեր իրաւունքն է սուրբի եւ հուրի բնդմէջէն, մինչեւ վերջին վարկեանը մեր ձայնը բարձրացնելու եւ մեր սիրելի ազգակիցներուն ,օգնութիւն, օգնութիւն,, աղաղակելու:»

Աւելի քան երեք ժամանակն է, քանի որ Ձեր մէջ ունիք կիլիկիան վիճակի եւ բազմակողմանի պահանջներուն լիութի տեղեակ անձնուորութիւններ, ամբողջ կիլիկիան ինչդիր խորքանիին կերպով ուսումնասիրելու եւ ըլլայ դիմումներու, ըլլայ ձեռք առնելիք ազգային միջոցներու մասին վերջնական որոշումներ կայացնել: Պատմական պարտականութիւն մըն է, որ այս կերպով կուսանդենք Ձեզի, Կիլիկիոյ 200.000-ի մօտիկ հայութիւնը իր կողկողալին աչքերը Ձեզի դարձուցած է: Այսօր կամ երբեք, վաղը, գուցէ, շատ ուշ կըլլայ...»

Փայով մեզի, կրնաք բացարձակապէս վատահ ըլլայ, որ Ազգ. միութիւնը, եւ, Ազգային մարմիններ եւ կուսակցութիւններ մինչեւ վերջը պահանջէին վրայ պիտի գտնուիր: Բուք կրնաք գուշակել մեր գիրքին բովանդակ փափկութիւնը եւ գծարտութիւնները, մենք ստիպուած ենք, հակառակ մեր դիմումներուն վերջնա առած պառնադին կերպարանքին, մինչեւ վերջը հաշտ քաղաքականութեան մը Հետեւել ֆրանսական իշխանութեանց հանդէպ:»

Մարաշի աղէտէն գատ, այստեղ՝ Ատանայի մէջ այ վասնդը ամենայուրը է, մինչեւ 10 օր խոսովութեանց շղթայագերծումին կը սպասուի, եթէ անկէ առաջ բան մը չի պատահի: Վտանդին իրական ըլլալը կը խոստովանին նոյն իսկ Ֆրանսական իշխանութիւնները:»

Հանրի, Միսի եւլն վիճակին վրայ չեմ ծանրանար: Մեր պատգամաւորը՝ Պ.Արբահամեան, Ձեզ լիութի կը տեղեկացնէ:

Աւելի երկարել աւելորդ համարելով Կիլիկիոյ եւ կիլիկիան հայ ազգարնակութեան բազմը եւ նուիրական չափերը Ձեր ձեռքերուն մէջ կը յանձնենք:

Ամենախորին յարգանքներով մատչիմ ի համբար Մ. Ա.Քոյ գերապատիւ օրբաղուութեանը:

Ամբ. Հայաստանի պատուիրակութեան

Կիլիկիոյ լիավոր ներկայացուցիչ

**Մ. Տամատեան**

ՀԱԱ., Ֆ. Պ. - 430, ց. 1, դ. 295, թթ. 4-7: Պատճեն: Միքեհնազիր:

N 2

Մ.ՏԱՄԱՏՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՒՇԵԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵՆՐՅԱՆԻՆԻՆ՝ ՄԱՐԱՇԻ, ՄԻՍԻ, ՀԱՃԸՆԻ, ՌԻՐՖԱՅԻ ՈՒ ԱՅՆԹԱՊԻ ԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԵԼԵԿԱՅՈՒՄ ՖԻԱՆՍՄԻԱՏՆԵՐԻ ՎԱՐԱՄՇ ՀԱՎԱՀԱՅՎԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՎԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

20 փետր.1920  
Ազանա

Արբահայն

Ազանայի Ազգ. միութեան Ձեր զրկած 5 փետր. - ի նամակը մեզ անյայտ պատճառով Օսմանիէ զրկուելով այնտեղէն մեզ վերադարձաւ երկի միայն: Կ.Պոստոյ թերթերէն տեղեկանալով, որ Մրք. Պատրիարք Հայրը Բարեկ մեկնած է, այս նամակս կրնաք գործածել իբրեւ պաշտօնական նամակ եւ պատճէր զրկել Ն.Մրբաղուութեան ինչպէս նաեւ Ազգ. պատուիրակութեան:

16 փետրուարին նամակ մը գրած եմ ուղեկայ Արբահայն Պատրիարք Հօր եւ յանձնած եմ պրն. Կարապետ Արբահամեանին, զոր ժովի ճամբով զրկած ենք Ձեր կողմը՝ բնկերացած մարաշցի սկանաստի մը, դժբաղբարսը նուր պիտի ուշանայ, իսկ ցամաքէն մարզ զրկել անկարելի եղաւ: Ահա այս պատճառաւ է, որ ուշ պիտի լսէք մեր լուրերը:

Մեր վիճակը, Արբահայն, որեւէ բարեբուժի նշան ցոյց չտար, այլ երթալով կը ծանրանայ եւ յուսահատական կը դառնայ: Մարաշ - Մարաշի գէղեզին մասին նախորդով գրած եմ, ամփոփեմ:

Ֆրանսացիք առանց սեւէ լուրջ, հիմնական պատճառի, փետրվ. 11 - ին յանկարծական եւ դաղտին կերպով Մարաշը բքեցին, մինչեւ այդ 10000 - ի չափ կորուստ ունեցող հայութիւնը կը մատնուի անկարագրելի խոհապի: Առաջին փախուղներու խումբ մը 2500 է աւելի, կը յաղթի Հետեւիլ նահանջող ֆր. զօրասիւնին, 2000 է բազկացած երկրորդ խումբէ մը հազիւ 25 - 30 - ր կազատուին թուրքերուն կողանքներէ: Փախուղներու այս խումբը մինչեւ Պէլ Փուշար աղիկ գեշ ճամբան կրնայ շարունակել, անկէ անդին տեղացած ձիւնին եւ աւելի լուրջին ցուրտին երեւէ, շատէր կը ստանն, ճամբան կը թաղուին, եւ հազիւ 1800 մարդ կը հասնին Իպանդէ՛ անբացատրելի խեղճութեան մէջ: Ինչ եղան մնացած 6 - 8000 հայերը Մարաշի մէջ - ոչ ոք գիտէ: Կը տեսնէք, որ, բառին կատարեալ իմաստովը, Մարաշը կործանեցաւ: Ֆրանսացիք իրենք իսկ կը խոստովանին, թէ աւելի սխալ մը տեղի ունեցած է եւ պատասխանատուները կը փնտրեն. սպասելով իրենց enquete-ի արդիւնքին, մենք այ պատրաստելու վրա ենք մեր տեղեկագիրը՝ ի մի հաւաքելով առանձին վկայութիւնները, բայց այս երկար գործ է, անմիջականին դառնանք: Մեզի համար ֆրանսական աւելի պատասխանատուութիւնը բացորոշ է, եթէ աշխարհի վրայ բան մը կայ, որ առանց այլեւայլքի դաւաճանութիւն կրնայ որակուել այս գործն իսկէ - Այսօր արդէն 9 - րդ օրն է աղետին, ամէն օր դիմում կատարած ենք Col. Bremend-ին եւ General DuFieux - ին, գիրենք ստիպելով, որ մեզի բռնեն, թէ ինչ են մտադիր ընել մնացեալ 8000 հայութիւնը փրկելու համար. առանց սեւէ որոշ գոհացուցիչ պատասխանի: Կրտէին, թէ նոր գորքով, Հասած Իսկեհերբուռնէն, վերստին Մարաշի վրայ պիտի քային անմիջապէս. (հին զօրքէն գրեթէ խնր չկայ. սաստիկ յոգնած, տասնորդուած եւ բարոյալքված էն, շատերը նաեւ հիվանդ, ոտքերին սուտած էն, նոյն վիճակին մէջ են լէզէօնականները, որոնց միւս կողմէ կատարուցութիւնն այ իբր նկատի առնիք եղած վիթխարի մատնութեան դէմ, կրնաք երեւակայիլ, որ անխուսափելիորեն գատալութիւններ տեղի պիտի ունենան խմբովին: Այս կերպով Լէգրանն այ անուս մըն է այլեւս:) Մենք չենք հավատար, որ այս հանգամանքներու մեջ, պիտի ուղեն, կամ պիտի կրնան Մարաշի վրայ անմիջական արշավանք մը կազմակերպել, մանավանդ, որ այդ կողմերը ձիւնը կը շարունակէ անյուրիորեն տեղայ եւ ճանապարհները փակել:

Առաջարկեցիքը aeroplane-ն էր զրկել, եւ թուրքերուն ազգարարիլ սպառնալիքը թէ հայերուն պետք չէ դպչին, այս կերպով գոնէ իրենց գոյութիւնը յայտնել, խոստացան, բայց չեն գիտեր,թէ պիտի կատարեն, կը ենթադրենք, որ հայերը մեկ երկու վարքեր կեդրոնացած կը դիմարեն մինչեւ վերջին շուկեշերտին: Առաջարկեցիք նաեւ, որ Հանրենէն հայկական ազատարար խումբ մը ճամբայ հաննի Ձեյթունի վրայով, որ փճացած չէ, ինչպէս առաջ լուեցան Մարաշ իջեցնելու համար, խոստացան, բայց չեմ կարծեր, որ ընթացք տան: Դժբախդարսմբ միջոցները չեն ններ ինքնադուրեւ իրականութեան վերածելու այս խորհուրդները: Նույնպես

Շարժարանները եւ աղյուսակները ապացուցում են, որ Հակառակ թուրքական պաշտոնական վարկածների, Կարինի նահանգում Հայերը ոչ թե կազմում էին բնակչության նվազագույն հատվածը, այլև որոշ գավառներում ու գյուղերում՝ մեծամասնություն էին: Պաշտոնական վիճակագրության բացակայության պայմաններում, ասպարեզ էին բերվում կողմնակալ վիճակները, որոնք, «ապացուցում», էին Հայության փոքրամասնություն լինելը: Ինչը կոտորածների ճանապարհով Հայաթափման գործընթացը կոծկելու նպատակ էր հետապնդում:

Օսմանյան թուրքալի արևելյան նահանգներն իրենց ազգային կազմով, առանձնահատկություններով, աշխարհագրական դիրքով եւ զարգացման աստիճանով մնում էին որպես կայսրությունից առանձնացված տարածքներ, որտեղ ինչքան որ թույլ էր կենտրոնական իշխանությունը, այնքան ուժեղ եւ ինքնիշխան էին՝ տեղական իշխանությունները, քուրդ բեկերն ու թուրք բեյերը: Առկա թվական վարչակարգը, պարբերաբար բորբոքելով կրոնական մոլեռանդությունը, այն ուղղում էր քրիստոնյա Հայաստանների դեմ, որպեսզի Հայաստաններին ու կոտորածներին միջոցով իրականացնեն օսմանիզմի՝ Հայաստանների ոչնչացման ու ձուլման քաղաքականությունը:

Որպեսզի ավելի քան ընդգծված ներկայացվի թուրքական բռնապետության Հայալույ թաղաքականությունը, բերենք եւս մեկ վկայություն, որի Հեղինակն է բնիկ Բղեցի Նազարեթ Փոստոյանը:<sup>1</sup>

Հեղինակը մեզ է ներկայացնում 48 գյուղի մասին արժեքավոր տեղեկություններ, նշում՝ բնակչության, տների, գոհերի, արտադրած աշխատողների թիվը: Պարզվում է, որ 48 Հայաթնակ գյուղերն ունեցել են 4537 տուն, 33177 շունչ Հայ բնակչություն: Ե Փոստոյանը տեղեկություն չի թողել Նուլիսի եւ Շարուկ գյուղերի մասին, որոնք, մեր ունեցած աղբյուրներից մեկի վկայությամբ ունեցել են 15-ական տուն՝ 80 եւ 105 շունչ Հայ բնակչությամբ: Եթե գումարներ նաև ԱՄՆ-ում գտնվողների թիվը, ապա բնակչության ընդհանուր թիվը կկազմի՝ 34224: Ե Փոստոյանի վկայություններից պարզվում է, որ կոտորածներից փրկվել են ընդամենը 30 Հայ: Այսինքն՝ Մեծ եղեռնին զոհ են գտնացել 33332 շունչ Հայեր:

**Հովհաննես Զատիկյան**  
պատմական գիտությունների  
թեկնածու

**ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍԻԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1900-1908թթ.**

19-րդ դարի երկրորդ կեսին եւ 20-րդի սկզբին եվրոպական երկրները, ԱՄՆ-ն թուրքիայում եւ մասնավորապես Արեւմտյան Հայաստանում, Կիլիկիայում իրենց տնտեսական աշխարհաքաղաքական դիրքերն ամրապնդելու, ազդեցություն ունեննելու ընդլայնելու նպատակով Հիմնում էին Հյուսիսատոսություններ, փոխհյուսիսատոսություններ: Փրանսիան այս բնագավառում բավականին եռանդուն գործունեություն էր ծավալում: 20-րդ դարի սկզբին նա Հյուսիսատոսություններ ուներ Դամասկոսում, Հայնպում, Բեյրութում, Տրապիզոնում եւ փոխհյուսիսատոսություններ՝ Էրզրումում, Վանում, Սվազում, Դիարբեքիում, որոնք ուղղություն էին առնում իր երկրի տնտեսական ու քաղաքական գործերին: «Նրանք ոչ միայն ներկայացնում էին Արեւմտյան Հայաստանում իրենց երկրների ու քաղաքացիների շահերը, այլև զանազան պատրվակներով միջամտում էին տեղացիների ներքին կյանքին», - գրում է «Մուրճի» տեսաբան Լեւոն Սարգսյանը<sup>2</sup>:

Մեր Հետաքրքրության առարկա ժամանակաշրջանում Փրանսիան ավելացրեց իր հյուսիսատոսական ծառայություններին, գործակալների թիվը Հատկապես Արեւմտյան Հայաստանում: Երկրի արտաքին գործերին նախարարը գրա մասին Հայտարարել էր դեռ 1902թ., ի պատասխան

<sup>1</sup> ԱԱ, ֆ. 9-57, ց. 5, գ. 140, թ. 6:  
<sup>2</sup> Նույն տեղում, ֆ.9-476, ց. 1, գ. 161, թթ. 11-12, 18:  
<sup>3</sup> Հայ ժողովրդի պատմություն, Հ. VI, Երևան, 1981, էջ 286:  
<sup>4</sup> Մուրճ, ամսագիր, Թիֆլիս, 1902, N 7:

պատգամավոր Ռուսների Հարցապնդման, սակով թե Ֆրանսիան 11 գործակալներ է ուղարկել Թուրքիա, տեղում իրերի գրությունը ստուգելու եւ ճշտելու նպատակով<sup>1</sup>: Ավելի ուշ, այս անգամ Ֆր. գր Պրեսանսի խորհրդարանում 1904թ. Հունիսի 9 - ի Հարցապնդմանը պատասխանելով, պայցանցելու Համար, որ կառավարութիւնը միջոցներ է ձեռք առնում արեւմտահայերէն պաշտպանելու նպատակով, Հետեւյալն է ասում, «Ինչ վերաբերում է Հայաստանին՝ չնայած այն մեր առեւտրական շահերի տեսանկյունից ոչինչ չի ներկայացնում, ես ձեզ Համատացնում եմ, այլ միմիայն Ֆրանսիայի աջակցութեան վկայութեան նպատակով ավելացրել եմ մեր գործակալների թիվը Հայաստան կազմող շրջաններում: Այսպես, մասնալորագրւած 1903թ. սեպտեմբերի 13 -ին ես ստեղծել եմ վանքի փոխյուզպատոսութիւնը եւ որ այս տարվա Հունվարի 23 -ին իմ կողմից մեկ այլ Հյուլպատոսարան է հիմնվել Վարպուտում»<sup>2</sup>: Հանրապետութեան արտաքին գործերի նախարարը կարեւորութիւն է տալիս Հյուլպատոսների եւ գործակալների աշխատանքներին: Նա գտնում է, որ «Հյուլպատոսների ներկայութիւնը ձեռ միութարութիւն է տեղի ազգաբնակչութեան Համար, եւ բազում անպատանձ մեր գործակալների կողմից ներկայացված տաղանակները ցրվել են Կոստանդնուպոլսում արագ եւ եռանդուն միջամտութիւններից հետո»<sup>3</sup>:

Համապատասխանում է արդյոք նախարար Դեկլասեի կարծիքը իրականութեանը, կարելի է հաստատապես պատասխանել՝ ոչ: Հենց այդ օրերին, երբ Ֆրանսիայի խորհրդարանում բանավեճ էր ընթանում, արեւմտահայ գաղտնիներում ջարդերն ու ավերը շարունակվում էին: Եվ պատգամավոր Ֆր. գր Պրեսանսի առարկութիւնն անհիմն չէր: «Ունենալ նշանակում Հյուլպատոսներ, որոնք կլինեն պարզապես անկարող, անգործունակ վիաներ, ֆրանսիայի Համար ավելի վատ է, քան այնտեղ ներկայացուցիչ չունենալը»<sup>4</sup>: Խորհրդարանի սույն ուշագրավ նիստի ընթացքում նախարար Դեկլասեի ասածները որոշ լույս են սփռում Հյուլպատոսների գործունեութեան վրա: Նա նշում է, որ «Մյուս կողմից օգտակար է, որ մեր գործակալները Հենց տեղում են իրականացնում կատարված դեպքերի քննութիւնը, որ հետագայում մեզ կօգնի օսմանյան կառավարութեան մոտ միջնորդելու գործի ողջ իմացութեամբ»<sup>5</sup>: Դեկլասեի իրական, գուցե թվացյալ լավատեսութեամբ Համակված խոսքին Պրեսանսն զարժյալ պատասխանում է. «Եթե նրանք միայն պարզապես պետք է արձանագրեն այն, ինչ տեղի է ունենալու նրանց աչքի տեսք, այս Հայ ժողովուրդը գրանից ոչինչ չի շահի, կամ ավելի շուտ գա կլինի ոճրագործութիւններին լուխյան համաձայնութիւն տալ»<sup>6</sup>:

Դեկլասեի քանիցս հիշատակում է տեղերից ստացվող ճեպագրերի մասին: «Pro Armenia» -ն իր էջերում շարունակաբար տեղ է տվել Հյուլպատոսների եւ փոխՀյուլպատոսների տեղեկատվութեանը, որի վերաբերյալ կիտավի Համապատասխան տեղում: Բննելով Համադրելով այն տեղեկատվութիւնը, որ պարունակում են այդ փաստաթղթերը, գալիս եւք այն եզրակացութեան, որ այն հիմնականում ստույգ ու Հավաստի է: Այսպես Ֆրանսիայի Հյուլպատոս Բերթերոնը, Սասնո կոտորածների պատճառները քննելուց հետո ճիշտ պատասխան է տվել Պրեսանսին. «Հստակ պատասխանատվութիւն է ընկնում ողջ կառավարութեան եւ նրա պաշտոնյաների վրա»<sup>7</sup>: Ինքը Դեկլասեն, Հունիսի 9 -ի նիստում իր ելույթի մեծ վկայակոչում է Հյուլպատոսների տեղեկագրերը, որոնցում Հաղորդած տվյալները կասկած չեն Հարուցում:

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> Pro Armenia, 1904, N 87 - 88.

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> Նույն տեղում:

<sup>7</sup> Pro Armenia, 1904, N 87 - 88.

Պահպանվել են վկայութիւններ Հյուլպատոսների արժանապատիվ կեցվածքի, մարդասիրական ազնիվ արարքների մասին: «Գեղամ. Տեր-Կարապետյանի թղթակցութիւնները եւ բոլոր մյուս աղբյուրները, - Սասնո, Մուշի գերագույն տաղանակի օրերին, - միաբերան կվկայեն, որ ֆրանսիական Հյուլպատոսը գտնվել է իր մարդկային կոնսուլի բարձրութեան վրա, որ նա ճշմարիտ Հայու մը պես պաշտպանել է Հայ ժողովուրդը...»<sup>1</sup>: Եվ ապա «...աղբյուս Հրահանգված էր իրեն Պարիզին եւ որ Հյուլպատոսներու նշանակումը ուրիշ վասնդված վարերում ու անոնց աչալուրժ Հակոբութիւնը միեւնույն ժամանակ Պոլսո գնապահի մշտնընտրվող հորդորներն ու ազգաբարութիւնները Բ. Դրան՝ ազատեցին մեր ժողովուրդը մյուս վիլայիթներուն մեջ եւս: Եվ նույն կրողի միջամտութիւններուն շնորհիվ այլ՝ երկրորդ ետ առավ իր որոշումը՝ վերջ տալու Հայկական Սասունին եւ բնակեցնելու գայն քլուրդերով»<sup>2</sup>:

1901թ. Առաքելոց վանքի Հայտնի կովի ժամանակ, երբ Անդրանիկն իր գիւղերներով պաշարվում է թուրքական կանոնավոր բանակի հրամանների կողմից, երեք երկրների, այդ թվում Ֆրանսիայի, Հյուլպատոսները խոչընդոտում են վանքի՝ իրեն Հնարարայն սրբավայրի հրետակոծմանը<sup>3</sup>: Կան այլ փաստեր եւս Ֆրանսիացի Հյուլպատոսական ծառայողների զինանձն ու անձնագոհ վերաբերմունքի վերաբերյալ<sup>4</sup>:

Հյուլպատոսների գործունեութեան արդյունք է Համադրում փաստականների՝ կոտորածներից խույս տված Հայերի՝ իրենց բնակավայրերը վերագործնելու փաստը, մասնալորագրւած Մուշում<sup>5</sup>:

1900 - 1908 թթ., ընթացքում ֆրանսիական Հյուլպատոսների գործունեութեան ուսումնասիրութիւնը ցույց է տալիս, որ Ֆրանսիան մշտապես գիմել է Ռուսաստանի նմանաբնույթ ծառայութիւններին, Համաձայնեցրել գործողութիւնները, բողոքի ցույցերը Բարձր Դուռն դեմ: Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարը մշտապես, երբ խոսք է գնացել իր երկրի Արեւելյան Հարցում ունեցած պարտավորութեան, Բեռլինի վեճակովի 61-րդ հոդվածով ստանձնած պատասխանատվութեան մասին, շեշտել է, որ Ֆրանսիան մենակ չի ստորագրել 61-րդ հոդվածն ու բարեփոխութիւնների 1895թ. մայիսյան ծրագիրը: Նույն մտնեցումն է գրեւորվում եւ Հյուլպատոսների Հարցում:

1901թ. Հունվարի 3 -ի գրութեամբ Ֆրանսիայի գեսպանը Կոստանդնուպոլսում Ռուսաստանի գեսպանին առաջարկում է Համատեղ բողոք ներկայացնել Բ. Դուսնը, անձամբ սուլթանին նախարան նահանգներում, Արանիայում եւ Մակեդոնիայում մոյեգնող բանութիւնների կապակցութեամբ: Հատկապես շեշտվում էր, որ իր եզրակացութիւնները հիմնված են Հյուլպատոսների տեղեկագրերի վրա<sup>6</sup>: Ֆրանսիայի ջանքերը՝ Համադրածակցելու Ռուսաստանի եւ Անգլիայի հետ, շարունակվում են նաեւ Հաջորդ տարիներին<sup>7</sup>:

Ըստ մի այլ Հաղորդագրութեան 1904 թ. ամռանը «Ֆրանսիական, ռուսական եւ անգլիական Հյուլպատոսների Հաշվետվութիւնները Սասունի գեսպանի մասին Հաղորդում են, որ հուլիանների արդյունքում Հայերն ունեն 3000 զոհ»<sup>8</sup>: Նույնաբնույթ տեղեկատվութիւն էր պարունակում «Մուրճ»՝ «Արտաքին տեսութիւն» բաժինը<sup>9</sup>. «Շրջվով Բիթլիսի վիլայիթում երեք Հյուլպատոսները, ռուսաց, ֆրանսիական եւ անգլիական,

<sup>1</sup> Վարանդյան ԼԲ., ՀՀԴաշնակցութեան պատմութիւն, Երեւան, 1992, էջ 260:

<sup>2</sup> Pro Armenia, 1904, N 87 - 88.

<sup>3</sup> Հարավատ պատմութիւն Տարնո, էջ 156:

<sup>4</sup> Պատմութիւն Եվրոկիտ Հայոց, Համադրված Արշակ Ակոբյանյան, Գաֆրի, 1952, էջ 1206:

<sup>5</sup> Դրոշակ, 1902, N 7:

<sup>6</sup> АВП РИ, Политархив, N 3455, лл.1 - 3.

<sup>7</sup> Դրոշակ, 1904, L, 5:

<sup>8</sup> Генощид армян в Османской империи, Сборник документов и материалов, сост. М.Г.Нерсисян, Р.Г.Саакян, Ереван, 1982, с.172.

<sup>9</sup> Մուրճ, 1904, N 6:

Հաստատեցին, որ թյուրք զորքը եւ քյուրդերը սոսկալի գաղանթթյուններ են կատարել անպաշտպան Հայերի վրա՝ կոտորելով մոտ 5000 հոգի ...»<sup>1</sup>։

Ֆրանսիայի կառավարութիւնը Վանում իր Հյուպատոսին կարգադրել էր 1904թ. գարնանը անգլիական եւ ռուսական Հյուպատոսներին Հետ Համատեղ ստուգայց կատարել Սասուն։ Ստուգայցը կատարվել էր, բայց առանց ռուսական ներկայացուցչի մասնակցութեան՝ Հաղորդում է ֆրանսիական Հյուպատոսի ճեպագիրը՝

Ֆրանսիայի կառավարութիւնը ընդառաջելով ռուսական ղեկավարութեան առաջարկութեանը, 1907 թ., Հուլիսի 3 -ին հրահանգում է թիֆլիսի, Վանի եւ Էջրուռմի իր Հյուպատոսներին՝ Անգլիայի ու Ռուսաստանի ղեկավարներին Հետ Համատեղ Հետաքննել Բիթլիսում տեղի ունեցած դեպքերը։ Դիվանագիտական գրադրութիւնները պարզվում է, որ Բիթլիսի մահճանգիական բնակչութիւնն ըմբոստացել է եւ պահանջում է տեղի վայու պաշտոններով լրջուր, սպառնալից անկարգութիւնները կործանարար կլինեն Հայերի համար։ «Այն դաշտում քրդերն ու շերքիները ավերում են Հայկական գոյուղերն ու կոտորում Հայերին» - շարունակում է ղեկավարն Չիտովիւրը։

Ուշադրով է, որ Հյուպատոսները չափազանց ճշշտ էին գնահատում իրենց դերը։ «Սուրճը» վկայակոչելով Լոնդոնի «Standart» լրագիրը, գրում էր. «Եվրոպական պետութիւնների Մուշ ուղարկված երեք փոխյուպատոսները զեկուցանում են, որ ավելորդ են համարում իրանց բնակչութիւնը ալոտեղ, որովհետեւ նրանք անզոր են արգելել թուրքերին՝ անգլիութիւններ կատարել Հայերի դեմ»։ Ինչ վերաբերվում է թուրքիային, սպա Եվրոպական պետութիւնները պետք է իմանան ինչ եւ որ աստիճան առաջ տանեն արշավանքը Բ. Դուան դեմ։ «Այլապես թուրքերը Հմտացած ձգձգման արվեստի մեջ՝ միշտ գիտեն ձգձգել ամեն մի գործ, մինչեւ որ Եվրոպական դիվլյուստարիան կհնոցնի եւ կձանձրանա»<sup>2</sup>։

Ֆրանսիայի Հյուպատոսը ռուսական եւ անգլիական Հյուպատոսներին Հետ Հարկադրված է եղել կատարել տարբեր բնույթի, տեղական Հանգամանքներից բխող գործառույթներ։ Հայտնի է, որ երեք Հյուպատոսները 1904 թ. Սասուն ղեկաբերի ժամանակ միջամտեցին գեղիգոյուզանցիների եւ թուրքական կողմի զինված ընդհարմանը, այն Հաշտութեամբ վերջացնելու նպատակով, թեեւ ընդհանուր իրավիճակը մնաց անփոփոխ՝

Երեք երկրների Հյուպատոսներին տեղեկատվութիւնը վերաբերում է թուրքիայի կյանքի ամենատարբեր բնագավառներին։ Տարբեր երկրների Հյուպատոսները լրտեսում, հետեւում էին միմյանց գործունեութեանը՝ Հատկապես անտեսական բնագավառում։ Ահա թե ինչ է գրում Վանի ռուսական փոխհյուպատոսը իր վերադասին. «Պատահարք ինձ Հաջողվեց նայել Վանի ֆրանսիական Հյուպատոսներին վերջին տարիների գաղտնի զեկուցագրերից մի քանիսը։ Նրանցում ասվում էր, որ ռուսական առևտրի Հետ Հաջողութեամբ մրցակցելու համար Ֆրանսիան պետք է օգնի թուրքիային Փոքր Ասիայում երկաթուղիների եւ խճուղիների կառուցման գործում, քանի որ դրանց կառուցումով Ռուսաստանը այլեւս չի ունենա աշխարհագրական այն առավելութիւնները, որոնք թեեւ դեռ չեն օգտագործվել, բայց բացում են առևտրական լայն հեռանկարներ»<sup>3</sup>։ Եվ այս այն պարագայում, երբ Ֆրանսիան եւ Ռուսաստանը համարվում էին բարեկամ երկրներ։ Ֆրանսիայի Հյուպատոսի հետաքրքրութեան շրջանակները վերաբերյալ արժեքավոր վկայութիւն է ներկայացնում Վանի ֆրանսիական փոխհյուպատոս Ռարյուի զեկուցը արտաքին գործերի նախարար Դեկլաստին, գրված Էրզրումից 1902 թ. Հուլիսի 13 -ին։

<sup>1</sup> Նույն տեղում։

<sup>2</sup> Pro Armenia, 1904, N 87 N 88, Դրոշակ, 1904, N 4 - 5։

<sup>3</sup> Политархин, 1643, лл.162,167,176, 3456, лл. 46 - 52.

<sup>4</sup> Մուրճ, 1904, N 7։

<sup>5</sup> Նույն տեղում։

<sup>6</sup> Նույն տեղում։

<sup>7</sup> Հանրաբայան Ա., Ազգաբաղյին Հարաբերութիւնները Արեւմտյան Հայաստանում, էջ 136։

«Պատիվ ունեմ Ձերզ գերագնացութեան փոխանցելու զեկուցագիր, որը մեզ ներկայացրել է Վանի մեր Հյուպատոսական գործակալը, այդ վկայութեամբ գերմանական միսիայի ստեղծման մասին։

Ամենայն Հավանականութեամբ գերմանացիները ցանկանում են Հայաստանում ազդեցութիւն տարածել, որը մինչ այդ չեն ունեցել։ Վերջին չորս տարում մենք այստեղ ակնհաստես եղանք զոկտոր Բելքի՝ Հայտնվելուն, որը զբաղվում էր գիտական հետազոտութիւններով եւ իմիջիպալաց նաեւ՝ քաղաքականութեամբ։ Այդ պարտը ինքնամոռացութեան պահին Հայերին Հայտնել էր, որ չուսով նրանք Վանում կտեսնեն գերմանացի միսիոներներին իսկ Հետո՝ Հյուպատոսի։ Սպասելով նա իրացրեց բարեգործական ընկերութիւններին միջոցով բազկանաձափ օգնութիւն՝ Վանում բարեգործական աշխատանքների համար։ Այդ օգնութիւնները տրամադրվել են մեր քաղաքում ամերիկական միսիոներներին։ Կարճ ժամանակ անց այստեղ ժամանեց գերմանացի մի օրիորդ, որը ըստ իր ասածի, ուղարկված է Վան՝ հետեւելու համար Գերմանիայից բերված բարեգործական միջոցների օգտագործմանը։ Նրանից Հետո ժամանեց մի միսիոներ, որը լրագործված էր, բայց ամեն ինչը, նաեւ զեկավարելու գերմանական միջոցներով ամերիկացիների կողմից իրականացվող աշխատանքները։ Այդ միսիոները, որը Հետագայում նշանակվեց Ստամբուլի դպրոցներից մեկի տնօրեն, փոխարինվեց անորոշ տարիքի մի օրիորդով եւ որը ինչպես իր նախորդները, կարծես թե միակամ էր ամերիկյան միսիայի Հետ, բայց որը այս տարի սկսեց առանձնանալ գերմանական միսիայի անունից՝ որբանցի շինարարութիւն կազմակերպելով։ Երբ Գերմանիան այստեղ կկազմակերպի իր միսիան, մենք անշուշտ ակնհաստես կլինենք Հյուպատոսի Հայտնվելուն, ինչի մասին Հայտարարեց զոկտոր Բելքը, իսկ այնուհետեւ գերմանացիները կհաստատվեն Հայկական նահանգների հնչց արտում ...

... Եստ ցավալի է տեսնել, թե ինչպես են մեր միսիաները թողնում այս նահանգները ու փակում իրենց դպրոցները, այն ղեկաբում, երբ անգլիական, ամերիկյան, գերմանական բողոքական միսիաները ծաղկում են եւ հիմնում նոր դպրոցներ»<sup>4</sup>։

Գերմանիան Հախուռն թափով ամուր գիրքեր էր նվաճում թուրքիայում։ Փոխհյուպատոսը, հիշատակելով զոկտոր Բելքի հնագիտական գործունեութիւնը, ուշադրութեամբ է հրավիրում նրա Հետզհետե լայն ծավալ ընդունող քաղաքական գործունեութեան վրա, որը իրականացվում է բարեգործական ու կրթական միջոցառումներով։ Հատկանշական է, որ գերմանական բողոքական քույրերը գործել են ամերիկյան քույրերի հետ, այնուհետեւ առանձնացել են եւ Վանում հիմնել են որբանոց-դպրոց»։ Այդ բոլոր միջոցառումները հող են նախապատրաստում այդտեղ Գերմանիայի քաղաքական ներկայութիւնը սպաճովելու նպատակով։ Ըստ զեկուցագրի հեղինակի, նշած Հանգամանքները բերում են այն երրակացութեան, որ Գերմանիան Հաստատուն գիրք կգրավի Հայաստանում, ինչպես գրավում է թուրքիայում՝ մնացած ասպարեզներում։ Նա ցավով է փաստում Ֆրանսիայի Հետզհետե թուլացող գիրքերի մասին։

Ֆրանսիայի կառավարութիւնը, Հավանաբար, անօգուտ Համարելով Հյուպատոսական որոշ կետերի, ինչպես օրինակ Խարբերի, գործունեութիւնը, մահճարկական բնակչութեան կողմից Հյուպատոսաբանի ավերումից Հետո փակել էր այն, ինչը պատճառ էր դարձել Հայերի նոր Հայածանքների<sup>5</sup>։

<sup>4</sup> Վարդեմար Բելքը եւ Կառլ Լեհման - Հաուպտը հնագիտական պեղումներ են կատարել Վանի մերձակայքում։

<sup>5</sup> Documents Diplomatiques Françaises: 1871-1914, Paris, 1936, pp. 395 - 396.

(գործավարական թարգմ. ֆրանս.)։

<sup>6</sup> Արամայան, Ազատութիւն արշալույսին, Թիֆլիս, 1913, էջ 112։

<sup>7</sup> Դրոշակ, 1907, N 4։

Հյուլպատոսներն իրենց պարտականությունները կատարելիս, Հաճախ ենթարկվել են զինված Հարձակումների, չեն շրջադաշնի առանց պահակախմբի ուղեկցությունը՝:

Փրանսիան Հյուլպատոսական ծառայություն է ունեցել նաև Կիլիկիա-արևմտ։ «Դրոշակում» 1905 թ. մարտի 4-ին հրատարակված «Կիլիկիան եւ Փրանսիական Դիվանագիտությունը» վերնագրով նյութը Հստակ պատկերացում է տալիս Թուրքիայում գործող ֆրանսիական եւ մյուս երկրների Հյուլպատոսների գործունեությունը վերաբերյալ։

Այն Հարցին, թե ինչով են զբաղվում եվրոպական Հյուլպատոսները Թուրքիայում, Հողվածագիրը Հանգամանալից պատասխան է տալիս, որից բխում է մի եզրակացություն. Հյուլպատոսների մեծ մասը զբաղված չեն իրենց անմիջական պարտականությունների կատարմամբ։

Հողվածագիրը գտնում է, որ կան Հյուլպատոսներ, որոնք առևտրական գործունեություն են կատարում, որոշ Հյուլպատոսներ բնագիտական Հետազոտումներ են անում՝ թիթեուներ են որսում։ Ոմանք զբաղվում են ստորական փյառակները փորփրելով՝ Հնագիտական պեղումներ են անում, իսկ մի մասն էլ պարզապես Հանգստանում։ Ըստ Հողվածի Հեղինակի կան նաև իրենց կոչման բարձրության վրա գտնվողներ, իրենց պարտականությունները արժանապատիվ կերպով կատարողներ. հսկում են իրենց վստահված շրջանի քրիստոնյաների անդորրության, ընդհանուր խաղաղության վրա եւ Հետևելով ստորագրված փաստաթղթերի պայմանների կատարմանը։

Այնուհետև Հողվածագիրը ներկայացնում է Մարաշում ֆրանսիական Հյուլպատոսության ստեղծման հանգամանքները։

«Մարաշում, ինչպես Հայտնի է, Փրանսիական փոխՀյուլպատոսությունը Հաստատված է Հայկական կոտորածներից հետո. 1895 - 96թթ. սուլթանի զորքի պարտությունից հետո, թուրք կառավարության եւ Զեյթունի Հայերի մեջ Հաշտություն կայացվեց Անգլիայի, Փրանսիայի, Իտալիայի եւ Ռուսաստանի ներկայացուցիչների միջամտությամբ ու միջնորդությամբ։ Հետևաբար Մարաշում նստած եվրոպական միակ ներկայացուցչի ֆրանսիական փոխ-Հյուլպատոսի վրա, բացի ընդհանուր անդորրության հսկելու պարտականությունից, ընկնում է եւ մասնավոր պարտականություն՝ հետևել, թե գործադրվո՞ւմ են արդյոք պետությունների ստորագրած պայմանները Զեյթունի գայմագամության նկատմամբ։

Հեղինակն անգրագուսնում է գեյթունցիների տնտեսական գրությունը։ Նա իրավացիորեն գտնում է, որ օրինական եւ անօրինական խստությունների պատճառով գեյթունցիները զրկվել են իրենց հիմնական զբաղմունքով՝ Զորեպանությունում պարապելու հնարավորությունից եւ մասնավոր ծայրահեղ չքավորության։ Ըստ Հողվածագրի նույն վիճակում են Հայտնվել շրջակա Հայկական գյուղերի բնակիչները։ 1895-1896 թթ. կոտորածների ժամանակ շատ բնույթիցներ կորցնելով իրենց աշխատողներին, չեն կարողանում զբաղվել Հողագործությամբ ու անասնապահությամբ։ Ըստ կնքված Հաշտության պայմանագրի՝ բնակչությունը ոչ միայն «գլխասր փաղիշահից» օգնություն չստացավ, այլևս ենթարկվեց անասունների կրկնակի տուրքի։ Ստեղծված կացությունը շատերին Հարկադրում էր գիմել վերաբնակություն։

Զեյթունում, ինչպես Հաղորդում է Հողվածագիրը, սուլթանը վերահաստատում է իր ուզմական ներկայությունը, ավելացնելով գինվորների ու թնդանոթների թիվը։

Կառավարությունը սաստկացրել էր կրոնական ու քաղաքական Հարձանքները։ Հայերը երկարատև բանտարկության էին դատապարտվում մի երգարան, մի եվրոպական թերթ կամ «Մարսելյոզ» ընթերցելու Համար։ Այնուհետև Հողվածագիրը գրում է.

Քրիստոնյա գայմագամը, որ պետությունների միջնորդության չնորհիվ նշանակվեց ազբատ յեռնային Զեյթունի շրջանին, իբր թե հանգստություն տալու Համար, իրոք գոյություն չունի։ Նա չեզոքացված է

բոլորովին իր պաշտոնի մեջ եւ շրջանի բոլոր գործերը de facto կատարում է գինվորական Հրամանատարը... Այսպիսով թե պետությունների խոսքն է Հարցված եւ թե Թուրքիայի շահը ապահովված։ Երկու կողմերն էլ գոհ են. Հարցնող չկա միայն բուն ազգաբնակչության գոհունակության մասին»։

«...Գերության մեջ սարող ժողովուրդը,շարունակում է Հողվածագիրը, - ցավեր ու դարձեր շատ ունի։ Թյուրք յաթագանի տակ Հեծող բրիտանյանները Հոգեկան սփոփանք կզգային, գոնե մի քանի րուպի անվան չունեջ քաշելու՝ ճնշվածների պաշտպան, Հալասարություն եւ եղբայրության նշանարանին Հետևող Փրանսիայի ներկայացուցչի մոտ։ Բայց կարո՞ղ է արդյոք մեկը ազատորեն մտնել այն անկարգեր, որի վրա ծածկանվում է երեք գույնի դրոշակը։ Գեկտեմբերի սկզբին գեյթունցիներից մեկը քաջություն, թե միամտություն է ունեցել այնչեղ Փրանսիայի փոխ-Հյուլպատոսին եւ ... մինչևե օրս հեծում է բանտում։

Այդ տեսակի փաստերի դիմաց, իրավունք չունե՞մ միթե Հարցնելու, թե ինչու Համար են Հաստատված Փրանսիայի Հյուլպատոսները Թուրքիայում՝ անհատների քսակը լցնելու, կրոնափոխությունը խրախուսելու, օգափոխություն անելու՞, թե՞ խաղաղություն վրա հսկելու. Փրանսիայի աված խոստումները կատարելու եւ Հանրապետության գրոշը բարձր պատվով պահելու Համար։ Թող այս Հարցերին պատասխանեն իրենք Փրանսիացիք»։

Ամփոփելով Թուրքիայում 1900 - 1908 թթ. ֆրանսիական Հյուլպատոսական ծառայության գործունեության վերաբերյալ փաստերն ու վկայությունները Հանգում ենք հետևյալ եզրակացությունից։

Հյուլպատոսական ծառայությունը եւ կաթոլիկ սուրբությունը նպաստել են Փրանսիայի տնտեսական եւ քաղաքական ազդեցությունը բնագայնմանն ու ամրապնդմանը։

Հյուլպատոսական ծառայությունների Հալաստի տեղեկատվությունը գեկուցները Փրանսիայի Հայկական քաղաքականություն վրա ազդեցություն չեն ունեցել։

**Արամ Նաչատրյան**

## **ՎԵՐԱԿԱԶՄԵԱԼ ՀՆՁԱԿՑԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆՆԵՐԷՆ**

Հայ ազգային կուսակցությունների պատմության նորովի ուսումնասիրությունը մեր պատմագրության կարևոր խնդիրներից է։Այս ուղղությամբ, թեև նախորդ տասնամյակում նկատելի առաջընթաց է կատարվել, այնուամենայնիվ, դեռևս մնում են պատմագիտական առումով քիչ ուսումնասիրված Հարցեր։ Դրանց թվին է դասվում նաև վերակազմյալ հնչական կուսակցության պատմության ուսումնասիրությունը։ Վերակազմյալների գործունեությունը ընթացել է մի ժամանակաշրջանում (1896-1921թթ.), որն անտարակույս Հայ ժողովրդի Համար գործավածնարախտորոշը։ Կուսակցության ձևավորումը սերտորեն առնչվում է Սոցիալ-դեմոկրատ հնչական կուսակցության հետ, որից սերվել էին եւ հետագայում բաժանվեցին վերակազմյալները։

Ինչպես Հայտնի է, 1887թ. ժնեւում ձևավորված հնչական կուսակցությունն արեւմտահայության ազատագրությունը թուրքական բռնակալությունից գործրել էր իր ծրագրի մոտակա նպատակը։ Այս ուղղությամբ հնչականները ակտիվ գործունեություն ծավալեցին 1890-ական թվականներին, որոնցից հիշարժան էին Գում-Գալուռի ցույցը եւ Զեյթունի ապստամբությունը։ Սակայն արեւմտահայության կոտորածների (1894-96թթ.) եւ դրան հաղորդաց սեակցիայի շրջանում, հնչականները լուրջ կորուստներ կրեցին, իսկ նրանց մարտավարությունը չավեց սպասված արդյունքը։ Դա 1890-ական թվ. կեսերին հանգեցրեց ներկուսակցական ճգնժամի։ Դրա հաղթահարման եւ կուսակցության հետագա գործունեության ծրագիրը մշակելու նպատակով, 1896թ. Հունվարին Լոնդոնում

<sup>1</sup> Անահիտ, 1901, N 9, 1902, N 6:

<sup>1</sup> Դրոշակ, 1905, N 5:

տեղի ունեցավ Հնչակյան կուսակցության պատգամաբերական ժողով: Այստեղ Ա.Նազարբեկյանի ղեկավարած կուսակցության կենտրոնի ղեմ՝ Հանդես եկան արևմտահայ գործիչները (Ա.Արփիարյան, Մ.Տամատյան, Ա.Սշտուհի և այլն):Նրանք պահանջեցին կուսակցության ծրագրից Հանել սոցիալիզմի մասին գրուելը, որը թուրքական իրականության պայմաններում համարում էին անիրագործելի, իսկ Հայկական Հարցի լուծման տեսանկյունից՝ նույնիսկ վնասակար: Դրանից բացի, զբմում էին կուսակցության գործելակերպի փոփոխության, կուսակցական կենտրոնի վերակառուցման հարցեր: Սակայն Նազարբեկն ու նրա կողմակիցները չընդունեցին ծրագրային ու կազմակերպական փոփոխությունների պահանջը, որի Հետևանքով բնղղմագիրները Հեռացան կուսակցությունից ևւ 1898թ. Արևսահարկայան լուսակցություն տեղի ունեցած համագումարում ստեղծեցին նոր՝ վերակազմվալ Հնչակյան կուսակցություն: Վերակազմյալները հիմնելով իրենց մասնաճյուղերը տարբեր երկրներում ևւ, հրաժարվելով սոցիալիզմի քարոզչությունից, իրենց ուժերը կենտրոնացրին միմիայն Հայկական Հարցի լուծման վրա: Նրանք գտնելով, որ թուրքական բռնակալությունից արևմտահայությունից ազատագրության միակ ուղին՝ համընդհանուր պայտամբությունն է, հրաժարվեցին նաև ցույցերի, սառնձին գիշերված կյուլիների հնչակյան գործիչությունից:

Պետք է նշել, որ վերակազմյալների ծրագրերում Կիլիկիան առանձնահատուկ տեղ էր գրավում,քանզի այն ոչ միայն համագլային պայտամբության հրամար վայր էր համարվում, այլևս դիտվում էր որպես Հայոց նոր պետականության վերականգնման օջախ:Նրանք զա բացատրում էին Կիլիկիայի աշխարհազարական դիրքով, Հատկապես Եվրոպայի Հետ ծովային կապով, որը հնարավորություն կտար անհրաժեշտության դեպքում՝ ոսղմական օգնություն ստանալ Եվրոպայից: Այս գործում նրանք փորձում էին ներգրավել Հայ ունևուր խավիրին, նրանց շահագրգռելով միջկալին աուևուրից ստանալիք իրական շահույթով, որ Հայ ունևուրները կարող էին ակնկալել Կիլիկիայի ազտագրման ևւ այնտեղ Հայկական ազգային պետականության ստեղծման դեպքում:<sup>1</sup>

Այնուամենայնիվ, դիտակցելով, որ սեփական ուժերը բավարար չեն նման ծրագրի իրագործման համար, վերակազմյալները դիմում են Ֆրանսիայի օգնությանը: Արշակ Չոպանյանի միջոցով, նրանք փորձում են պարզել, թե Ֆրանսիան քաղաքական անհրաժեշտ պահին կօգնի Հայերին՝ իր հովանավորության ներքո Կիլիկիայում Հայկական ինքնավարություն ստեղծելու գործում: Կիլիկիայի ազատագրության իրենց ծրագրեր, սակայն մերժվում է Ֆրանսիայի կողմից:<sup>2</sup> Երևաթուրքական Հեղափոխության տարիներին նրանք առժամանակ օրակարգից Հանեցին Կիլիկիայի ազտագրության իրենց ծրագրերը:

Այդ տարիներին ներկուսակցական պայքարի սրման Հետևանքով վերակազմյալ Հնչակյան կուսակցությունը պտակտվեց: 1906թ. Հուլիսին, ԱՄՆ-ի Ֆիշբուրգ քաղաքում կայացած պատգամաբերական ժողովում, վերակազմյալների մի մասը՝ Սուրեն Պարթևյանի(իսկական անունը Միսակ Պարտիզպանյան) ղլխավորությանը սառնձնանում է ևւ 1907թ. ապրիլից Բոստոնում սկսում հրատարակել «Ազգ» թերթը:<sup>3</sup> Սակայն, բաժանումից շատ չանցած վերակազմյալների «ազգային» թևեր միավորման նպատակով բանակցությունների մեջ է մտնում արմենական կուսակցության առանձին խմբերի, ինչպես օրինակ՝ Գաղափարակցական միության Հետ: Արդյունքում, 1908թ. հոկտեմբերին ստեղծվում է նոր՝ Հայ Սահմանադրական ոսղկավար կուսակցությունը:

Այդ միությունը մաս չկազմած վերակազմյալները պահպանում են իրենց ինքնուրույն գոյությունը: 1910 թվականից, Բոստոնում սկսում են հրատարակել «Պահակ» թերթը:

1908թ. հուլիսին,երրաթուրքերը պետական Հեղաշրջում կատարելով,երկրում Հայտարարեցին սահմանադրական-միապետություն: Սա մեծ ոգևուրություն ստաբացրեց նաև Հայերի մեջ: Այդ կապակցությամբ 1908թ. սեպտեմբերի 12-ին վերակազմյալ Հնչակյան կուսակցության Կ.Պոլսի վարչությունը հանդես եկավ

պաշտոնական Հայտարարությունը նրանք սահմանադրության վերահաստատումը համարելով թուրքիայի քաղաքական ու սոցիալ-տնտեսական Հերացման, երկրի ոչ թուրք ժողովուրդների բարգավաճման գրավական,ողունեցին այն: Երկրում հռչակված ժողովրդավարական վարչակարգը կուսակցությունը համարում է Հեղափոխության հաղթանակը ևւ այն Հնկա գոհույթյունների արդյունքը «որոնց մեջ Հայ մարտական կազմակերպություններն իրենց անհաշիվ բաժինն ունեցան»:<sup>4</sup> (Նկատի ունեն ՆՅԴ ևւ Հնչակյան կուսակցությունների կողմից երիտթուրքերի օգնելու փաստը - Գ.Հ.):

Վերակազմյալները Հայտարարում են, որ դադարեցնում են րնդհատակյա գործունեությունը, հրաժարվում զինված պայտամբության ծրագրից ևւ այտուևտու, գործելու են միայն սահմանադրական ճանապարհով: Նրանք, Հայտարարում են նաև, որ կուսակցությունը օսմանյայ կայսրության անբողջականությունից այս Հպանման կողմնակից է ևւ չուի որևէ անջատողական ձգտում ևւ նպատակ: Սակայն, արևմտահայությանը դիտելով որպես օսմանյան միության անբաժնետարր, կուսակցությունը ձգտում է, որ Հայությունը չձուլվի «այլևսայլ հոսանքներում մեջ, որպեսզի հարզվին ևւ պահպանվին անոր կրոնական, կրթական ևւ այլ առանձնանշորհումները»:<sup>5</sup> Հայտարարության մեջ վրակազմյալները նշում են նաև, որ անհատ պայքար են մղելու ներքին ու արտաքին բոլոր այն ուժերի ղեմ, որոնք փորձ կանեն վերացնել «ազատական սեղմը ևւ վերահաստատեն նախկին անհանդուրժելի բռնակալությունը»:<sup>6</sup>

Սակայն ոգևուրություն ու խանդավառություն երկար չստևեց: 1909թ. ապրիլին Կիլիկահայության կոտորածները ի գերես Հանեցին Հայ ազգային կուսակցությունների ունեցած պատրանքները: Նրանք հատուցեցին, որ օսմանյան կայսրության ժողովուրդների իրավահավասարության ևւ ազատության մասին երիտթուրքերի խոստումները կեղծ են, որ ազգային հարցում նրանք ավելի Հետադիմական են, քան սուլթան Համիդը:

Երիտթուրքերի հանդեպ վերակազմյալների դիրքորոշման փոփոխության պարզորոշ վկայություն է Հետևյալ փաստը. 1913թ. Խարբեղի կուսակցության պաշտոնաթերթում («Մամուրեթ ուլ Ազիզ» թիվ 1429) հրատարակվում է Հայությունն ուղղված Խարբեղի Հայոց հոգևուր աուջնորդ Պակ վարդապետի հակաուսական ուղղվածություն ունեցող կոչ-հոդվածը,ուր համեմատության մեջ են դրվում ոուսական ևւ թուրքական տիրապետությունները ևւ ցույց է տրվում, թե իբր Հայ ժողովրդի արևելյան հատվածը գտնվում է շատ ավելի անմխիթար վիճակում, քան արևմտահայությունը, որ «ուուսական պոզպատե լուծը» ավելի ծանր է, քան թուրքական «փեսայտ լուծը»: Հայ հոգևուրական ժողովրդին Հնադանդություն ևւ «օսմանյան Հայրենիքի նկատմամբ օրինապահություն» կոչ է անում:<sup>7</sup>

Վերակազմյալ Հնչակյան կուսակցության Խարբեղի մասնաճյուղը, 1913թ. փետրվարի 22-ի իր Հայտարարության մեջ գատապարտում է Պակ վարդապետի կոչը, ցույց տալիս, որ նման խեղաթյությունները անհարիր են Հայ հոգևուրականի կերպարին:Միաժամանակ ցույց է տրվում, որ ոուսական տիրապետությունն երբևք չի կարելի համեմատել թուրքականի Հետ: Վկայակցելով 1895-96թթ. արևմտահայության, 1909թ. կիլիահայության ջարդերը, գաղաուահայության նկատմամբ շարունակվող բռնություններն ու հրատահարությունները, վերակազմյալները հերքում են այն Հայտարարությունը, թե՛ «Անատոլուի մեջ թուրքն ու բուրդը մինչև սյուր եղբուր պես ապրած են Հայերուն հետ»:<sup>8</sup> Նշվում է նաև, որ Հայ ժողովուրդն, համագործակցելով գրացի ժողովրդների հետ, իսկապես ձգտել է խաղաղորեն ապրել թուրքիայում ևւ նվիրվել երկրի գարգացմանը՝ բայց փոխարենը միշտ Հանդիպել է այդ ժողովրդների թշնամությանն ու ատելությանը, որը «ճատ անգամ քաշարիված ու հրահրված է կառավարությունն»:<sup>9</sup>

<sup>1</sup> Այս հոդի վրա նույնիսկ տեղի ունեցան որոշ Հայ մեծահարուստների սպանություններ. 1906թ. հուևվարին Պոլսում սպանվեց ազգային բարերար Աբիկ Ունեճյանը, 1907թ. հուևիսին Նյու-Յորքում՝ գորգի վաճառական Հովհանես Թավչանճյանը:

<sup>2</sup> Պայքար, Բոստոն, 1935, 23 հուլիսի:

<sup>3</sup> Ազգ, Բոստոն, 1907, 20 ապրիլի, թիվ 1:

<sup>4</sup> ԱԱԱ, ֆ.Պ-282, ց.1, գ.38, թ.1:

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> Նույն տեղում:

<sup>7</sup> ԱԱԱ, ֆ.Պ-282, ց.1, գ.42, թ.1-2:

<sup>8</sup> Նույն տեղում:

<sup>9</sup> Նույն տեղում:

Այդ ժամանակաշրջանում վերակազմայիններ կրկին դիմում են դաշնակցութանը՝ համագործակցության ցանկությունը: «Մենք ինչու»՝ հակառակություններ ունենանք իրարու հետ, - գրում էր «Ձայն Հայրենացը»: - Ձէ՞ որ միևնույն ազգին զավակներն ենք, որ իրարու բով կապրինք մայր Հայրենիքին մեջ: Մենք որ իրելու գաշակցական, հնչական կամ սամկավար, միասին ապրեցինք ստասպամ Հայրենիքին մեջ, միասին տանջվեցանք, ինչպես նաև միասին կովեցանք հաճախ, ինչու՞ - այժմ այ միասին չգործենք»:

1912-13թթ. տեղի ունեցող բազմաթիվ փոփոխությունները և մտնեցող համաշխարհային պատերազմի փաստը, ստիպեցին վերակազմայիններին արագացնել իրենց մասնաճյուղերի ամբաստանական գործը, հատկապես՝ Կիլիկիայում: Պետք է նշել, որ այս հարցում վերակազմայիններ սերտ համագործակցություն մեջ էին ևսահմանադիր-նամկավարների հետ: Հայտնում, Ձեյթունում, Սուևտիայում գտնվող սամկավարներին ու վերակազմայիններին գեներգիներամիներով օգնում էին Եգիպտոսի իրենց մասնաճյուղերը: Օրինակ, 1913թ. սեպտեմբերի 26-ին, սամկավար գործիչ Ապահին (նախկին վերակազմայ) ուղղված վերակազմայ կարապետ Գրիգորյանի նամակից պարզվում է, որ Ապահին այդ օրերին եղել է Սուևտիայում և տեղի գործիչներին հանձնել 200 փամփուշտով:՝ Անշուշտ, սա եղակի փաստ է: Երևի, Ապահին, հասկանալով, որ միայն սեփական ուժերով չեն կարող բավարարել ինքնապաշտպանության նախապատրաստվող ժողովրդի պահանջները, նրանք պատերազմի նախօրին կրկին հանդես եկան ազգային ուժերի համախմբման կոչելով: Դրանք ավարտվեցին նրանով, որ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին (1913թ.) Կ. Պոլսում Հայ Հեղափոխական դաշնակցության Արևմտյան Բյուրոն, (ՄԴՀ) Սոցիալ-դեմոկրատ հնչական կուսակցության կենտրոնական վարչությունը, Սահմանադիր-նամկավար կուսակցության կենտրոնական ակումբը և վերակազմայ Հնչական կուսակցության կենտրոնական վարչությունը հայտարարեցին, որ այսուհետև համերաշխ են գործելու ազգային հարցում, հատկապես՝ նահանգների բարենորոգումների իրականացման հարցում: Միաժամանակ, միասնաբար են հանդես գալու օսմանյան պաշտամենտի բնորոշություններին:<sup>1</sup>

Ցավոք, պատերազմի նախօրյակին Հայ կուսակցությունների միջև ստորագրված համաձայնագրերը իրականում ամուր հիմք չունենին և բոտ կուսության շարունակվում էր միջկուսակցական պայքարը: Մասնավորապես, 1914թ. սկզբներին, երբ հրապարակ ելավ պատգամավորների բնորոշության հարցը, Հայ ազգային կուսակցությունների միջև սրվեց սեփական կուսակցություններից պատգամավորներ անցկացնելու պայքարը:

Պատերազմը ստիպեց Հայ քաղաքական ուժերին կրկին համագործակցության քայլեր ձեռնարկել, քանզի պատերազմի այս կամ այն ելքից մեծապես կախված էր նաև հայության ճակատագիրը: 1914թ. հոկտեմբերին Ամերիկայի 4 Հայկական կուսակցությունների (ՄԴՀԿ, ՀՅԴ, ՀՍԽԿ և վերակազմայ հնչական) ներկայացուցիչները Մուշեղ եպիսկոպոս Արքեպիսկոպոսին տանք խորհրդակցություն են գումարում, նպատակ ունենալով՝ «Հավաքական շարժում մը հառաջ բերելու ամերիկահայոց մեջ»:<sup>2</sup> Որոշվում է, որ կուսակցությունները պետք է գործեն միասնաբար և կազմվում է միջկուսակցական մարմին, որը ստանում է «Միջկուսակցական խորհրդատուով» անունը: 1914թ. նոյեմբերի 12-ին իր առաջին նիստում ընդունված բանաձևում ձևակերպվում է խորհրդատուովի նպատակը՝ պատերազմում արևմտահայութանը համակողմանի օգնություն ցույց տալու նպատակով ամերիկահայության ուժերի մոբիլիզացում: Դրա համար, նախատեսվում էր.

ա) անտաստի պետությունների հավանությունն ու օժանդակությունը ստանալուց հետո Ամերիկայի Հայ երիտասարդներից կամավորներ ուղարկել Կովկաս,

բ) հայկական հարցին սատարելու նպատակով «գիվանագիտական հետապնդումներ կատարել»:

Որոշվում է նաև զաղարեցնել առանձին կուսակցությունների կողմից մասնավոր հանգանակությունները և սկսել ընդհանուր հանգանակություն: Խորհրդատուով որոշում է իր անունը կոչել «Ազգային Պաշտպանության Ամերիկայի Հանձնախումբ»:<sup>3</sup> Սակայն, շուտով հանգանակության հարցի շուրջ հանձնախմբի ներսում առաջանում են տարաձայնություններ: Գաշնակցականները գտնում են, որ հանգանակված զրամի զգալի մասը պետք է ուղարկվի Կովկաս՝ Հայ Ազգային Բյուրոյին, որի միջոցով էլ այն հասկացվելու է կամավորական շարժանը: Դրանք մեծ էին վերակազմայիններ, սամկավարներն ու սոցիալ-դեմոկրատ հնչականները, որոնք գտնում էին, որ հանգանակված զրամը պետք է ուղարկվի Հայոց կաթողիկոսի հովանավորության ներքո ստեղծվելիք «Խոստ հանձնախմբին», որ պետք այն համակցել «միմիայն երկիր մեկնած կամ մեկնելիք Հայ կամավորներուն»:<sup>4</sup>

Դաշնակցությունը, շարունակելով է պաշտպանել իր տեսակետը. «Հայրենիք» ամսագրի միջոցով առանձին հանգանակություն է սկսում՝ ի նպաստ կամավորական շարժման: Միջկուսակցական հանձնաժողովի մյուս անդամները զաշնակցությունից պահանջում են զաղարեցնել մասնավոր հանգանակությունը և հանգանակված զրամը գնել Հանձնաժողովի տրամադրության տակ, սակայն, ՀՅԴ-ն մերժելով դա, բաժանվում է «Ազգային պաշտպանության Ամերիկայի Հանձնախմբից»:<sup>5</sup>

Առաջին համաշխարհային սանձաղերծումից հետո, ԱՄՆ-ի վերակազմայ Հնչական մասնաճյուղերը տեղագրին աշխատանքներ կատարեցին Կիլիկիայի ազատագրության ծրագրի իրագործման ուղղությամբ (Ջավեն, Վահե ծածանուններով - Գ. Հ.): Լոնդոնում Արքեպիսկոպոսի հայտնի հայտեր և նշանավոր պետական գործիչ Դենի Գաշինի միջոցով, ֆրանսիական կառավարությանը հայտնեց, թե վերակազմայ Հնչական կուսակցությունը փափագում է սկսել Կիլիկիայի ազատագրության գործը, եթե՝ «Փրանսիան խոստանաք իր լուրջ օգնությունը»:<sup>6</sup> Արքեպիսկոպոսն առաջարկում էր Փրանսիայի աբակցությունը ստեղծել Հայ կամավորական զորամասեր: Ըստ վերակազմայինների, Կիլիկիայի ազատագրության ծրագրի հաջող փուլը նախատեսում էր Հայ կամավորական զորամասերի կենտրոնացումը Կիպրոսում, որտեղ պետք է գեներ ստանալին և մարզվեին ֆրանսիացի սպաների զեկավարությամբ: Այնուհետև, Հայ կամավորները, որոնց թիվը 1000-ից պակաս չպետք է լիներ, միանալով ֆրանսիացի զինվորների հետ, կկազմեին միանգամայն բավարար ուժ՝ Կիլիկիա ներխուժելու համար: Ըստ վերակազմայինների, Կիլիկիայում այդ ուժը անելով և հասնելով 10 հազարի՝ կրավարներ երկրամասը լրիվ ազատագրելու համար: Այս ծրագրի մասին Արքեպիսկոպոսն տեղյակ է պահում Վիկտոր Բերրարին՝ խնդրելով համապատասխան դիմում անել իր կառավարությանը: Խոսելով վերակազմայինների՝ Կիլիկիայի ազատագրության ծրագրի մասին, երվանդ Գասպարյանը, իր «Մեծ եղևուր և Փրանսիան 1915-18թթ.» գոկոտրական ատենախոսության մեջ գրում է, որ վերակազմայինների ծրագիրը ուղղմական փորձադիտական իմաստով բավականին մշակված ու հստակեցված ծրագիր էր, որի խոսուն ապացույցը եղավ այն, որ երբ 1916թ. աշնանը Փրանսիան որդեգրեց Հայության ուղղմական ուժը Կիլիկիայում օգտագործելու քաղաքականությունը, ապա բառացիորեն իրականացրեց այդ ծրագրով նախատեսված քայլերի ու մեծ մասը: Ուստի, ֆրանսիական կառավարության ծրագրի մերժման բացասական պատասխանը, թելադրված էր նրանով, որ

<sup>1</sup> Ձայն Հայրենաց, Կ. Պոլիս, 1909, թիվ 23:

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. Պ-453, ց. 1, գ. 133, թ. 1:

<sup>3</sup> Դրոշակ, 1913, թիվ 1112: Տես նաև «Ազգ», Բոստոն, 1914, 21 հունվարի:

<sup>4</sup> Ժողմեջյան Հ., Պատմություն ամերիկահայ քաղաքական կուսակցությանց, Փրովիդենս, 1930, էջ 198:

<sup>5</sup> «Վան-Տուպ», Թիֆլիս, 1916, 21 փետրվարի, թիվ 13: Տես նաև Գանդուրի Լրանո, Հայ Հեղափոխությունը օսմանյան բռնադատության դեմ, 1890-1910, Բեյլյուսթ, 1973, էջ 184:

<sup>6</sup> Ժողմեջյան Մ., Եզվ. աշխ., էջ 201:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 202:

<sup>8</sup> Պաշար, Բոստոն, 1935, 16 հուլիսի:

<sup>9</sup> Նույն տեղում, 23 հուլիսի:

<sup>10</sup> Չուպույան Ա., Նամակներ, Երևան, 1980, էջ 120:

այդ ժամանակաշրջանում Ֆրանսիան մերժողական դիրքորոշում ունեւ հարցի նման լուծման վերաբերյալ:<sup>1</sup>

Ստանալով Ֆրանսիայի մերժումը, վերակազմայիները, օգտագործելով մեծ Հայասեր, յոգ Ջեյմս Բրայսի քաղաքական ազդեցությունն ու կապը, դիմեցին անդրկական կառավարությանը:

Սակայն, այս քայլը համարելով իրենց շահերին լուրջ սպառնալիք, ֆրանսիացիները վերակազմայիներին զրուցացնում են, որ իրենք «գոչ չեն մտ, եթե Հայերը Կիլիկիայում ապստամբեն ուրիշ տերության օգնությամբ, առանց Ֆրանսիայի մասնակցության»:<sup>2</sup> Այսպիսով, ֆրանսիական կառավարության վարած նման քաղաքականությունը ծանր հետևանքներ ունեցավ Կիլիկիայի հայության ֆիզիկական գոյության եւ նրա հետագա քաղաքական ճակատագրի վրա:<sup>3</sup>

1914-1915թթ. հայկական կամավորական շարժման աջակցելու նպատակով, վերակազմայ Տեչակյան կուսակցությունն եռանդուն գործունեություն էր ծավալել: 1915թ. հունիսին կամավորներ հավաքագրելու կոչով, կուսակցության ԱՄՆ-ի նահանգային վարչությունը գիտում է իր ակումբներին: ԱՄՆ-ի վերակազմայիների կազմում 45 հոգանոց ջոկատը, կապիտան Ջիմ Չանգալյանի գլխավորությամբ, Թիֆլիս է հասնում 1915թ. սեպտեմբերին:<sup>4</sup> Նույն ամսին Թիֆլիս հասավ նաև ՍաՀմանադիր-առակավոր կուսակցության՝ ԱՄՆ-ի նահանգային վարչության կողմից Կովկաս ուղարկված կամավորների խումբը Անուշավան Տեր-Մկրտչյանի գլխավորությամբ:<sup>5</sup>

1915թ. սեպտեմբերի վերջին ռուսական զորքերը վերադարձվում են Վանը: Այդ ժամանակ Թիֆլիսում փոխարքայի գիտություն մի խումբ կովկասահայ նշանավոր դեմքեր (մեծահարուստներ, մտավորականներ) գումարում են խորհրդակցություն, որին մասնակցում են նաև վերակազմայիներից՝ Պետրոս Տեփոյանը, Ներսես Դշոյսյանը: Խորհրդակցության նպատակն էր՝ ստեղծել մի մարմին, որը ստանձնելու էր ստանձներ վերադարձված Վանի պաշտպանական ու վարչական զորքը: Նույն մարմինը հսկելու էր նաև Արեւմտյան Հայաստանի գրավված մյուս վայրերը: Մարմինը կոչվելու էր՝ «Հայաստանի Վերաշինաց Հանձնաժողով»:<sup>6</sup>

Հայաստանի Վերաշինաց Հանձնաժողովը (ՀՎՀ) ընտրում է գործադիր մարմին հետևյալ կազմով.ատենապետ՝գրոֆ. Մինասյան (եղել է Վանի Կենտրոնական վարժարանի տեսուչ), քարտուղար՝ պրոֆ. Մայիսայան, խորհրդականներ՝ պրոֆ. Երիկյան, Ա.Տեր-Մկրտչյան (առակավոր) եւ Պ.Տեփոյան (վերակազմայ):

Գործադիր մարմնի կանոնադրությունը վավերացվում է փոխարքայի եւ Կովկասում ռուսական բանակի գլխավոր հրամանատար Նիկոլայ Նիկոլաևիչի կողմից: Վերջինս Գործադիր մարմնի տրամադրություն տակ է դնում 200 հոգուց բաղկացած կազակական ջոկատ:<sup>7</sup> Վանի կուսակալ նշանակված գեղապետ Դերման, բացի վերահիշյալ կազակներից, ցանկություն է հայտնում իր հետ Վան տանել նաև հայկական երկրպագահ ջոկատ,որի հրամանատար է դառնում Ա.Եկարյանը: Նրա տեղակալ է նշանակվում վերակազմայ Ջիմ Չանգալյանը: Շուտով Եկարյանը՝ 50 հոգանոց հեծյալ խմբով եւ Չանգալյանը՝ 45 հոգանոց հետևակով մեկնում են Վան: Հայկական երկրպագահ գունդը (այդպես էր կոչվում -Գ.Հ.) ստանձնում է Վանում եւ նրա շրջակայքում կարգ ու կանոնի սպահովման եւ Հայ բնակչությունը, հատկապես քրդական հարձակումներից, պաշտպանելու գործը:<sup>8</sup> 1917թ. մարտի 16-26-ը Ամերիկայի չորս հայկական կուսակցությունները համաձայնություն գալով հիմնական սկզբունքների շուրջը, խորհրդակցություն են անցկացնում, որի արդյունքում կազմվում է «Ամերիկայի հայ ազգային միությունը»:<sup>9</sup> Միությունը

ընտրում է Գործադիր մարմին, որի ատենապետն էր՝ Միհրան Սվազյանը (վերակազմայ):

Ազգային միության նպատակն էր՝ կամավորական շարժման կազմակերպումն ու աջակցությունը, հայ գաղթականության օգնության կազմակերպումը, Հայաստան քարոզչությունը: «Ամերիկայի հայ ազգային միությունը», փաստորեն, դառնում է Փարիզի Հայ Ազգային պատվիրակության ներկայացուցիչ մարմինը Ամերիկայում: 1917թ. հուլիս-ոտիտներ ամիսներին կամավորագրվում են 1172 ամերիկահայ:<sup>10</sup>

Պատերազմի ավարտից հետո չիրականացավ վերակազմայիների՝ Կիլիկիան Ֆրանսիայի օգնությամբ ապստամբելու ծրագիրը:Պատճառը՝ վերջինս թրքամետ քաղաքականությունն էր: Այս հանգամանքը, բնականաբար, խոր հիասթափությունն առաջացրեց վերակազմայիների մոտ, որոնք մասուլի էջերից եւ միտինգներում դատապարտեցին Ֆրանսիայի քաղաքականությունը:<sup>11</sup>

Վերակազմայիները, որ Արեւմտյան Հայաստանի ազատագրության գործում մեծ հույսեր էին կապել Ռուսաստանի հաղթանակների հետ, մտահոգված էին այն-ստեղ օրբստորի հզորացող բոլշևիկյան կուսակցության՝ պատերազմի նկատմամբ որդեգրած քաղաքականությունից:Նրանք ձգտում էին սեպարատ հայտություն կնքել Գերմանիայի հետ՝ առանց բռնագաղթումների ու ռազմատուգանքների: Այս-տեղ վերակազմայիների դժգոհության պատճառը «առանց բռնագաղթումների» սահմանումն էր, որի իրագործումը ենթադրում էր՝ Արեւմտյան Հայաստանի գրավված տարածքների վերադարձը Թուրքիային: Վերակազմայիները նշում են, որ Արեւմտյան Հայաստանից ռուսական զորքերի դուրսբերումը պահանջելով, բոլշևիկները ցույց են տալիս իրենց բացարձակ անտեղյակությունը «իրական պայմանների վերաբերյալ»:<sup>12</sup> «Պահակի» 1917թ. դեկտեմբերի 25-ի համարում վերակազմայիները գրում էին. «Նա, ով եղել է թուրքական սազմանում, ով դիտել է ռուսաց զորքերի նահանջի պատկերը, ու հետո հարձակման ժամանակ նորից ոտք դրել Հայաստան, գիտե, որ զորքի նահանջը հայ ժողովրդի ողորմելի մնացորդի կորուստն է, ժողովրդի, որ գեւ ողջ է մնացել Միջագետք բռնագաղթած արքայից հետո: Էլի նորից կրկին այդպիսի նահանջի փորձը, դա կնշանակե մի անգամ ընդմիջտ արմատապես զճուել հայկական հարքը՝ ազատելով թուրքաց Հայաստանը Հայերից»:<sup>13</sup>

Բացի բոլշևիկներից, վերակազմայիները խիստ քննադատության են ենթարկում նաև ռուս միապետականներին, որոնք չգաղաքացիներով պայքար ժամանակավոր կառավարության եւ ղեմնորատական կարգերի դեմ, երկիրը քայքայում են մյուս կողմից: Նրանք հայ ժողովրդի շահերին ավելի համապատասխան էին գտնում Ռուսաստանի ժամանակավոր կառավարության քաղաքականությունը, որը կողմնակից էր պատերազմը մինչեւ հաղթական ավարտին հասցնելուն:

Վերակազմայիները, միաժամանակ, գաղափարական պայքար են մղում հայ բոլշևիկների դեմ, քննադատում նրանց այն բանի համար, որ կառչած մնալով միջազգային եւ ռուս սոցիալիստների գաղափարներին, փաստորեն, անտեսում են հայ իրականության պայմանները՝ պահանջելով ռուսական զորքերի վերաբերումը Արեւմտյան Հայաստանից:«Փոխանակ հայ Հայրենիքը եւ հայ ժողովուրդը նկատի առնելուց-գրում էր «Պահակը»,- նրանք տարված են մարքեթվի վարդապետությունը եւ Մարքսեն ավելի մարքսիստներ եղած են»:<sup>14</sup>

Նկատի ունենալով Անդրկովկասում ստեղծված ազգամիջյան պայթյունավտանդ իրադրությունը, վերակազմայիները առաջնահերթ խնդիր էին համարում կովկասահայության գիտնումը բնոգծելով, որ ազրբեջանցի թավթարները այս առումով շատ առաջ են անցել հայերից:

Առաջին համաշխարհային պատերազմի վերջում՝ 1917թ., որպես Անտանտի դաշնակից պատերազմի մեջ մտավ նաև ԱՄՆ-ը: Այդ ժամանակ, արդեն, նկատվում էր Միացյալ Նահանգների ծանրակշիռ դերը միջազգային քաղաքականության

<sup>1</sup> Գասպարյան Ե., Մեծ եղերնը եւ Ֆրանսիան 1915-18թթ. (գոկտորական ատենախոսություն), Երևան, 1997, էջ 49:

<sup>2</sup> Չուգանյան Ա., Նամակախ, էջ 122:

<sup>3</sup> Գասպարյան Ե., նշվ. աշխ., էջ 50:

<sup>4</sup> ՀԱԱ. ֆ.Պ-427, ց.1, գ.46, թ.1:

<sup>5</sup> Պալքար, Բոստան, 1958, 23 դեկտեմբերի:

<sup>6</sup> ՀԱԱ. ֆ.Պ-427, ց.1, գ.46, թ.2:

<sup>7</sup> ՀԱԱ. ֆ.Պ-427, ց.1, գ.46, թ.2:

<sup>8</sup> Նույն տեղում:

<sup>1</sup> Տամոսյան Մ., Իմ հուշերս, Պելլուսթ, 1985, էջ 112-113:

<sup>2</sup> Ճիգմեչյան Մ., նշվ. աշխ., էջ 354:

<sup>3</sup> «Պահակ», Բոստան, 1919, 27ապիսի:

<sup>4</sup> Նույն տեղում, 25 սեպտեմբերի:

<sup>5</sup> Նույն տեղում, 1917, 25 դեկտեմբերի:

<sup>6</sup> «Պահակ», 1917, 25 դեկտեմբերի:



մեջ: Վերակազմյալները ձգտում էին այս Հանգամանքն օգտագործել Հայկական Հարցի լուծման գործում: Այս ուղղութիւնը կուսակցութեան նաՀանգալին մասնաճշուշկերն ամերիկյան Հասարակութեան մեջ ծավալել էին ակտիվ Հայանպաստ քարոզչութիւն:

Վերակազմյալները նաև ակտիվ գործունեութիւն էին ծավալել եղեռնից մազազուրծ իրենց Հայրենակիցների բազմաթիվ կարիքները Հոգայու ուղղութիւնով: Ժողովները, միտինգները ու մամուլի միջոցով նրանք կոչ էին անում ամերիկահայութեանը՝ Հնարավոր բոլոր միջոցներով օգնել Միջազգետբում, Հայաստանի Հանրապետութեան սահմաններում ու Կովկասում ապաստանած, սովից, ջրախց ու հիվանդութիւններից տառապող Հայ գաղթականներին: Նրանք ցալով էին նշում այն իրօրութիւնը, որ ջրօրհրի ու տեղահանութիւնների Հետեւանքով Արեւմտյան Հայաստանը Հայաթիափել է եւ, Հայերի իսպառ դատարկման վտանգից իււստափելու Համար, Հարկավոր է պատմական Հայրենիքում պահպանել գեթ ժողովրդի վերջին մնացորդներին: Այդ նպատակով կուսակցութիւնն ամերիկահայութեան Հանգանակութիւններից ստացված միջոցներով ծավալուն աշխատանք էր տանում ստղերում կազմակերպելու օգնութիւնը: Վերակազմյալները ստեղծել էին «Միտ-Չիչան» եւ «Արծիվ» թատերախմբերը, որոնք պարբերաբար ներկայացումներով Հանգես էին գալիս ամերիկահայութեան մեջ, եւ Հալաքված միջոցների զգալի մասը Հատկացվում էր Հայկական բարեգործական Հասաստութիւններին:

191թ. Թիֆլիսում հրատարակվում է վերակազմյալ Հնչակյան կուսակցութեան ծրագիրը: Մրագրի ներածական ընգարձակ մասը նվիրված է սցիալիզմի քննադատութեանը: Այստեղ ընգծված է այն միտքը, որ սցիալիզմի ուսմունքը անհարկ է Հայկական շահերին: Կոչ է անում Հայ ժողովրդի բոլոր խավերին անծամանակ չողեւորվել եւ ուժերը չլստանել Հանուն օտար գաղափարների, այլ ի սպաս գնել ազգի եւ Հայրենիքի ազատագրութեանը:՝ Մրագրի «նպատակ» բաժնում Հայտարարվում է, որ կուսակցութեան գերինդրեր Հայ ժողովրդի ազատագրութեան ձեռքերումն է եւ այդ գաղափարին Հալատարիմ ազգային բոլոր ուժերին՝ Հայրենիքի սահմանների մեջ Համախմբելը: Վերակազմյալները մշակել էին նաև կուսակցութեան գործիւտօճը բաղկացած երկու կետից՝ մինչեւ պատերազմող երկրների միջև Հաստութեան կնքումը եւ Հաստութեան բանակցութիւնների ընթացքում:

Կարեւոր խնդիր էր Համարվում ազգային բոլոր ուժերի կողմից Պողոս Նուբարի՝ Ազգային պատվիրակութեանն աջակցելը:՝

1918թ. նոյեմբերին վերակազմյալ Հնչակյան կուսակցութեան Ամերիկայի մասնաճյուղը ընդունում է «Հայ Ազատական կուսակցութիւն » անունը: Մեկ այլ փաստաթղթում կուսակցութիւնը կոչվում է «Ազգայնական-Ազատական կուսակցութիւն»:<sup>4</sup>

Կուսակցութեան անվան փոփոխութիւնը պայմանավորված էր այն Հանգամանքով, որ, վերակազմյալները մերժելով Հնչակյան սցիալիզմը, իրականում որդեգրել էին ազատական (իբերալ) գաղափարախոսութիւն:

Սակայն, Հասարակական գարգացման ազատական ձեւը Համարելով Հայ ժողովրդի միակ ճիշտ ուղին, նրանք, միաժամանակ, ազգայնականութիւնը Հոչակում են այն հիմքը, որի վրա Հեննվելով միայն, ազգը կարող է Հասաստուն ու առողջ օրգանիզմ լինել: Ազգայնականութիւն սակով, նրանք Հասկանում են՝ Հայրենիքը եւ անկախութեան, ազգային պատմութեան ու ավանդութիւնների, ազգային Հարաստութիւնների Հանգեալ Հարգանքը: Ընդ որում, սահմանազատված է ազգայնականութիւնը ազգայնամոլութիւնից, քանի որ վերջինս որակվում է որպես Հետադիմական ու վտանգավոր երեւութ: Վերակազմյալները ազգայնականութիւնը Հակադրում են սցիալիզմին, որը բոտ նրանց՝ ջլատում է ազգի ներքին միասնութիւնը, թուլացնում ազգային ինքնատիպութիւնը եւ վտանգի տակ գնում Հայրենիքն ու անկախութիւնը:<sup>5</sup>

<sup>1</sup> Նուէն տեղում:

<sup>2</sup> Մրագրային Հարցեր վերակազմյալ Հնչակյան կուսակցութեան, Թիֆլիս, 1917:

<sup>3</sup> Մրագրային Հարցեր վերակազմյալ Հնչակյան կուսակցութեան, Թիֆլիս, 1917:

<sup>4</sup> Լազարյան Վ. Թամկավար ազատական կուսակցութիւն, Հիմնական Մրագրեր, կանոնադրեր, վավերագրեր, Երեւան, 1988:

<sup>5</sup> Պահակ, 1919, ապրիլ 15:

Սակայն թիվ են կազմում այն փաստաթղթերը, որոնք ստեղծվել են Երևանի Քաղաքագործիքի ֆինանսական բաժնի կողմից 1923թ. իրականացրած քաղաքի եւ ողջ գաղտնի բնակչության կենսականների վճարման վիճակագրության արդյունքում: Հարկատուի եւ նրա բնտանիքի անդամների կենսագրական տվյալները այստեղ զուգակցվում են նրա զբաղեցրած անշարժ գույքի (տուն, բնակարան, խանութ, կրպակ, արհեստանոց, ջրաղաց եւ այլն) ու զրանց նկատմամբ քաղաքացու ունեցած իրավունքի (սեփականատեր, վարձակալ, ժամանակավոր բնակիչ) վերաբերյալ տեղեկատվությամբ:

1932 թվականին Հայաստանի ողջ տարածքում իրականացված բնակարանային եւ կալվածային հաշվառման գործերում ամփոփված վիճակագրական թերթիկները տեղեկատվություն են տալիս տվյալ հասցեում (չըջան, գյուղ, քաղաք, փողոց, տուն) բնակվող բնտանիքների բնտանական կազմի, բնակարանի, խանութի զբաղմունքի եւ մասնագիտության, զբաղեցրած պաշտոնի, աշխատանքի կամ ծառայության վայրի, զբաղեցրած բնակարանի կամ շինության նկատմամբ բնակչի ունեցած սեփականատիրական իրավունքի (սեփականատեր, վարձակալ) վերաբերյալ, մատնանշվում են շինության տարածքը, բնակարանային օժանդակ հարմարություններն ու կառույցը եւ այլն:

Արխիվում լուրջ աշխատանք է տարվել նաև այս փաստաթղթերից օգտվելու գործը գյուղացնելու ուղղությամբ: Ավարտին է մոտենում Երևանի քաղաքագործիքի ֆինանսական բաժնի վիճակագրական հաշվառման թերթիկների տեղեկատվության համակարգչային մուտքագրումը, վերակազմվել են Երևան քաղաքի 1932թ. բնակարանային եւ կալվածային հաշվառման շուրջ 250 գործեր, որոնց մեջ բնակիչների հաշվառման թերթիկները կարծած էին խիստ անկանոն ձևով. հանգամանք, որը մի քանի անգամ զգվարեցնում էր որոնումը: Այժմ այդ գործերից յուրաքանչյուր ներկայացնում է քաղաքի մեկ փողոց՝ տների ու բնակարանների համարների աճող հերթականությունը:

Ձանաբան Հիմնարկներին, Հաստատություններին, կազմակերպություններին շինարարական նպատակների համար կատարված Հողհատկացումներ արվել են դեռևս 20-ական թվականների սկզբներից: Այս պատճառով էլ նման տեղեկություն պահանջող հարցումների ճնշող մեծամասնությանը պատասխանելու համար արխիվայինները սկզբում ստիպված են լինում դիմել ոչ թե բուն ֆոնդին, այլ կողմնակի նյութերի, քանի որ հարցում կատարողները անգամ մտադիր ճշտությամբ չեն հիշում իրենց Հնուաբերրող կառույցի Հող հատկացման թվականը եւ չեն կորցրանում մատնանշել թեկուզ եւ մոտավոր նախագծման, կառուցման, շահագործման թվականները: Այս դեպքում ուսումնասիրությունն սկսվում է համապատասխան վերադաս մարմնի կապիտալ շինարարության ցու-

ցակների, շինարարության ավարտից հետո կառույցի՝ պետական ընդունող հանձնաժողովի ակտերի ուսումնասիրությունից, որոնց մեջ նշված է լինում շինարարության սկիզբը: Նախնական այս որոնումներից հետո միայն ուսումնասիրությունը կատարվում է նախարարների խորհրդի ֆունդի շրջանակներում:

Արխիվազեկների առջև այստեղ եւս ծառանում էին որոշակի գծավարություններ:

Իսկն այն է, որ 1920-1940թթ. Ժողկոմխորհի (նախարարների խորհուրդ) որոշումներն ու արձանագրությունները ցրված են մի քանի տասնյակի հասնող ցուցակներում՝ գրազրույթյուններ ու այլ կարգի փաստաթղթերի զուգորդմամբ:

Արխիվում իրականացվեց այս ցուցակների բոլոր գործերի թերթային ուսումնասիրություն և համակարգիչ մուտքագրվեց շուրջ 30000 որոշում, արձանագրություն, գույքահաշիվ ստեղծվեցին նաև Ժողկոմխորհի որոշումների և արձանագրությունների տարեկան ցանկեր ամփոփող (մի մասը մեքենագրված, մի մասը՝ լուսապատճենահանված) տեղեկատու գործեր, որը զգալի կրճատեց հարցումների պատասխանելու ժամանակացույցը:

Ժողկոմխորհի (նախարարների խորհուրդ) որոշումներն ու կարգադրությունները 1941թ. սկսած մինչև 1954թ. արխիվ են հանձնվել առանձին ցուցակներով, որոնցում յուրաքանչյուր կառույցի հողհատկացման որոշումը մեկ առանձին գործ է, և տեղեկություն որոնումը կատարվում է ցուցակների միջոցով:

1955-1992թթ. որոշումների յուրաքանչյուր տարվա ցուցակում հողհատկացման որոշումները հավաքված են 20-30 գործում՝ «հողհատկացման որոշումներ» ընդհանուր վերնագրով և գրանց կից գրազրույթյուններով ու դժագրերով:

Այս գործերից ստեղծվեցին երկու ախպի տեղեկատուներ. 2 ստվար ցուցակում ամրագրվեց Հայաստանի յուրաքանչյուր շրջանում այդ տարվա ընթացքում արված հողհատկացման որոշումներ պարունակող գործերի ցուցակի և գործի համարը, իսկ հողհատկացման որոշումներ պարունակող բոլոր գործերը ենթարկվեցին փորձագիտական արժեքավորման, յուրաքանչյուր գործից հանվեց որոշման շրջ օրինակը, գրանց բացակայության դեպքում լուսապատճենահանման միջոցով ստեղծվեց որոշման կրկնօրինակը և յուրաքանչյուր տարվա որոշումների համար կազմվեցին առանձին տեղեկատու գործեր:

Սա, իհարկե, որոշումն արագ փնտրելու և մշտական պահպանության գուրծերը անընդհատ թերթից պաշտպանելու համար արված հարկադրական քայլ էր, որ պայմանավորված էր համակարգիչների սակավությունը և տեղեկատվության մուտքագրման ժամանակատար աշխատանքով:

Մեր առաջնահերթ խնդիրն է ավտոմատացնել որոնողական այս համակարգը ևս, որպեսզի արխիվ գիմողների հարցումների ժամանակին և սպասիչ պատասխաններ արվեն:

**Էմմա Հովսեփյան**  
բանասիրական գիտությունների  
թեկնածու

## **ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴՐԱՆՑ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ**

Արխիվագիտական գրականության մեջ անձնակազմի վերաբերյալ փաստաթղթերը բնորոշվում են որպես առանձին անհատների սոցիալ-իրավական, աշխատանքային, ծառայողական, կենսագրական և այլ բնույթի փոխհարաբերությունները պետական և ոչ պետական հիմնարկների ու կազմակերպությունների հետ բնութագրող փաստաթղթեր, որոնք հաստատում են աշխատանքային ստաժը, աշխատավարձի չափը, կրթական ցենզը, սեռատարիքային կազմը, պաշտոնական ու սոցիալական գրունթյան փոփոխությունները և անձնական բնույթի այլ տեղեկությունները:

Անձնակազմի վերաբերյալ փաստաթղթերը գուտ տեսակային առումով բազմազան են: Դրանք անձնական գործեր են, աշխատավարձի հաշվառման մատյաններ կամ անձնական հաշիվների քարտեր, ընդունման-ազատման վերաբերյալ հրամաններ, ինքնակենսագրություններ, բնութագրեր, Հիվանդությունների պատմություններ, պատերազմական կամ հետպատերազմյան ժամանակներում կազմված փոխտակառույցներ և նորարակների ցուցակներ և այլն: ԽՍՀՄ փլուզումից և ԽՍՀՄ լուծարումից հետո անձնակազմի վերաբերյալ փաստաթղթերի շարքին զատվեցին նաև կոմունիստների անհատական գործերը և հաշվառման քարտերը, ինչպես նաև անվանագրության մարմիններում կուտակված գտման ու արխիվային հետաքննական գործերը: Թվարկված փաստաթղթերը ըստ իրենց մեջ պարունակող տեղեկատվության կարելի է բաժանել հետևյալ սպեկտրների՝ իրավական, ծագումնաբանական, պատմա-վեցնագրական: Ելնելով



Հիշյալ ասպիտաներից, կարելի է վիճարկել արխիվագիտական այն մոտեցումը, թե անձնակազմի վերաբերյալ փաստաթղթերի պահպանության առավելագույն ժամկետը 75 տարի է:

Ցանկացած արխիվագետի, պատմաբանի եւ կամ իրավաբանի Համար պարզ է, որ աշխատավարձի Հաշվառման մատյաններում պարունակվող տեղեկատվությունը Հիմնականում աշխատավարձի չափի մասին է (իրավական ասպեկտ): Մինչդեռ ինքնակենսագրությունները, անձնական ու անհատական եւ դաման գործերը կարող են պարունակել առավել հարեցված տեղեկատվություն (ժամանանրատկան, պատմագիտական կամ կենսագրական ասպեկտ): Սովորաբար փաստաթղթերի պահպանության ժամկետները որոշվում են նրանց մեջ պարունակվող տեղեկատվության հարեցվածությունը եւ ծավալը Հաշվի առնելով: Այս տեսանկյունից ելնելով անձնակազմի վերաբերյալ փաստաթղթերի իրարից խստորեն տարբերվում են, ուստի եւ տարբեր պետք է լինեն նաեւ նրանց պահպանության ժամկետները: Այսպես օրինակ, աշխատավարձի Հաշվառման մատյանները (անձնական Հաշիվների բարտերը) Հիմնականում բացի աշխատավարձի չափից, այլ տեղեկատվություն չեն պարունակում: Իսկ աշխատավարձի չափի մասին տեղեկատվությունը գլխավորապես անհրաժեշտ է լինում թոշակավորման ժամանակ: Հայտնի է նաեւ, որ թոշակավորման մեխանիզմը Հայաստանում յուրը փոփոխությունների է ենթարկվել, որի Հետևանքով աշխատավարձի չափը էական չէ, չհաշված որոշ բացառություններ եւ ԱՊՀ երկրներում ապրող մեր հայրենակիցների առկայությունը (այդ երկրներից մի քանիսում թոշակի չափի Համար անհրաժեշտ է աշխատավարձի չափը): Բայց, նույնիսկ այս դեպքում, նմանատիպ փաստաթղթերի 75 տարի պահպանության ժամկետը սահմանված է արհեստակետորեն որովհետեւ գիտարկումները ցույց են տալիս, որ աշխատավարձի չափի մասին արխիվային տեղեկանքները Հիմնականում անհրաժեշտ են լինում 70-ական թվականներից սկսած: Այստեղից Հետևելով, աշխատավարձի Հաշվառման մատյանների (անձնական Հաշիվների բարտերի) պահպանության ժամկետը պետք է իջեցվի: Պահպանության ժամկետների իջեցման միտումները պետք է տարածվեն նաև անձնակազմի վերաբերյալ այլ փաստաթղթերի վրա (ուսանողների, սովորողների անձնական գործեր, արտոնյալ կարգով թոշակավորման գործեր եւ այլն): Հարցի նման լուծումը բացի գուտ արխիվագիտական լինելուց, նաև ժամանակի թելադրած պահանջ է: Անհրաժեշտ է զգուշորեն, բայց առավելագույն չափով բեռնաթափել գերատեսչական եւ պետական արխիվները:

Անձնակազմի վերաբերյալ այն փաստաթղթերը, որոնք, ինչպես վերը նշվեց, ունեն ծագումնաբանական, պատմագիտական, կենսագրական ասպեկտ կամ պարունակում են տեղեկություն անշարժ գույքի նկատմամբ ունեցած իրավունքի մասին, պետք է դառնան արխիվագետների հատուկ հոգածության առարկան: Մա նշանակում է, որ արխիվագետը դեմքով պետք է չըջվի դեպի մարզը, կարողանա լուծել մարզու Հիմնահիմքները կապված ժառանգության իրավունքի վերականգնման, որդեգրման, տարբեր երկրների քաղաքացիների ամուսնությունների, հայրությունը հաստատելու, անուն, ազգանունը փոխելու Հետ:

Ուսումնասիրելով մեր իսկ կողմից կազմված պահպանության ժամկետների նշումով փաստաթղթերի ցանկը, տեսնում ենք, որ այս կարգի փաստաթղթերի պահպանության ժամկետները Հիմնականում 75 տարի են, երբեմն ՓՄՀ նշումով, որոշ դեպքերում 3-ից 20 տարի: Կարծում եմ ժամանակն է, այս կարգի փաստաթղթերի փորձագիտական արժեքավորմանը մոտենալ նորովի եւ «75 տարի» հասկացությունից հատկապես ՓՄՀ նշումով իսպառ հրամարվել: Պետք է հրամարվել նաև այն մտքից, որ նմանատիպ փաստաթղթերը պահպանվեն գերատեսչական արխիվներում: Հնարավոր եւ ճիշտ եմ համարում, որ դրանք ընդունվեն պետական եւ համայնքային արխիվներ ու հաշվառման վերցվեն առանձին:

Անձնակազմի վերաբերյալ փաստաթղթերի (գործերի) պահպանության ապահովման Հետ կապված խնդիրները եւ դրանց լուծման ուղիները նույնքան կհնձառ ու հրատապ են, որքան փորձագիտական արժեքավորման ու ընտրության Հետ կապված խնդիրները: Խորհրդային իշխանության տարիներին պահպանության ապահովման Հետ կապված խնդիրները գրեթե չէին առաջանում,

որովհետեւ Հիմնարկ-ձեռնարկությունները եւ կազմակերպությունները սովորաբար գտնվում էին կայուն վիճակում: Ներկայումս բողոքովին այլ են ժամանակները, հարյուրավոր Հիմնարկ-ձեռնարկություններ եւ կազմակերպություններ լուծարվում կամ սեփականաշնորհվում են՝ բախտի քահանուհիների թողնելով առաջին Հերթին անձնակազմի վերաբերյալ փաստաթղթերը: Իրավաբանական տեսանկյունից մոտենալով, անձնակազմի վերաբերյալ փաստաթղթերը չեն մտնում ՀԱԱԾ կազմի մեջ, ուստի թվում է, թե արխիվային ծառայության աշխատողները պետք է առնչվեն չունենան դրանց Հետ: Բայց արդյոք ճիշտ է նման մոտեցումը. իմ կարծիքով, միանշանակորեն՝ ոչ: Մենք պարտավոր ենք հարցին լուծում տալ եւ այնպիսի լուծում, որ առավելագույն դեպքերում սուժողները չլինեն: Այս ուղղությամբ որոշակի աշխատանքներ կատարվել են գեներալ 1998թ. երբ կազմվեց եւ ՀՀ կազմարևության կողմից հաստատվեց Հիմնարկ-ձեռնարկությունների եւ կազմակերպությունների լուծարման կամ սեփականաշնորհման դեպքում ՀԱԱԾ փաստաթղթերը պետական արխիվներ հանձնելու կարգը, ուր նշված է նաև անձնակազմի վերաբերյալ փաստաթղթերի տեղական ինքնակառավարման կամ վերական մարմնի արխիվ հանձնման մասին: Անցած տարիների տեղափոխված ինքնակառավարման մարմինների արխիվները չստեղծվեցին եւ մոտ ապագայում չեն էլ ստեղծվելու: Վերագաս մարմինները, եւ շատ պակասերում նույնիսկ իրավահաջորդները, հրաժարվում են տեղեկանքից գործերին: Որոշ Հիմնարկներ էլ վերագաս չունեն: Մոտում են պետական արխիվները: Հարցը հասունացել էր: Ուստի համապատասխան շտկումներ կատարվեցին վերոնշյալ կարգի մեջ: Ըստ նոր կարգի, Հիմնարկների լուծարման կամ սեփականաշնորհման դեպքում անձնակազմի վերաբերյալ փաստաթղթերը կհանձնվեն պետական արխիվներ: ՀՀ մարզերում այս հարցի լուծումը Հեշտ կլինի: Կարգային մասնահյուղերը եւ ներկայացուցչությունների ղեկավարների արգել հանձնարարված է պետական պահպանության ընդունել նմանատիպ փաստաթղթերը եւ նվազագույն հաշվառման:

Հարցի լուծումը որոշակի գծավորությունների առաջ կկանգնեցնի երեւան քաղաքում:

Սակայն որքան էլ բարի լինեն մեր մտադրությունները եւ պարտատարածությունները գործը տեղից շարժելու, գծավորություններ անպայման կլինեն: Հարցը կայանում է նրանում, որ առևտրային կազմակերպությունների ղեկավարները այնքան էլ բարյացակամ չեն իրենց գործունեությունը փաստաթղթավորելու եւ լուծարման կամ հարկ եղած դեպքում փաստաթղթերը արխիվ հանձնելու: Նմանատիպ կազմակերպություններում շատ դժվար է գտնել ընդունման-ազատման վերաբերյալ հրամաններ կամ աշխատավարձի Հաշվառման մատյաններ: Իսկ լինելու դեպքում դրանք շատ դժվար են հանձնվում արխիվագետին, էլ ուր մնաց՝ պետական արխիվ: Հարցը կարող է լուծվել «Իրավաբանական անձանց գրանցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն – լրացում կատարելու միջոցով: Սույն օրենքի 2-րդ հոդվածով սահմանված է, որ լուծարված իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրը «արխիվային գործը» 5 տարի պահպանվում է պետական ռեգիստր տարածքային բաժանմունքներում, որից հետո հանձնվում է պետական արխիվ: Մեկ այլ հոդվածով (8) սահմանվում է իրավաբանական անձանց եւ անհատ ձեռնարկատերերի «արխիվային գործի» վարման եւ պահպանման կարգը: «Արխիվային գործը» ոչ այլ ինչ է, կթե ոչ հսկողական գործ, իսկ բուն արխիվային փաստաթղթերի մասին խոսք չկա: Օրենքի 24-րդ հոդվածով սահմանված է, որ իրավաբանական անձանց եւ անհատ ձեռնարկատերերի լուծարման դեպքում, վերջիններս պարտավոր են տեղեկանքներ ներկայացնել հարկային մարմիններից եւ սցղիայական ապահովության Հիմնադրամից՝ պարտքեր չունենալու մասին:

Ներկայումս մշակվող «Հայաստանի Հանրապետությունում արխիվային գործի մասին» օրենքի նախագծի Հետ ՀՀ կառավարություն կներկայացվի նաև Հիշյալ օրենքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին օրենքի նախագիծը:

**Սոս Մարուքյան**  
ՀԱԱ փոխտնօրեն

## ՀՐԱԶԳԱՆԻ ՄԵՐ ԿԱՄՈՒՐՁԸ

Հայաստանի կամրջաշինության պատմությունն ունի հարուստ անցյալ: Պատմական աղբյուրները հիշատակում են «Տափերական» կոչվող կամուրջն Արաքսի վրա, Մեծամորի կամուրջը և այլն:

20-րդ դարում լայն տարածում ստացավ մետաղակոնստրուկցիաներով, ապա նաև երկաթբետոն կոնստրուկցիաներով կամրջաշինությունը: Կամուրջների այս վերջին խմբին է պատկանում նաև Երեւանում կառուցված Հրազդանի մեծ կամուրջը:

Հնուպատերազմյան տարիներին, Հաշվի առնելով Երեւանի հյուսիս-արևմտյան ուղղության զարգացման հիմնախնդիրները և Երեւանն Աշտարակի Հետ բարեկարգ մայրուղով կապելու անհրաժեշտությունն Երբաղխորհուրդը իր 1946թ. ապրիլի 16-ի թիվ 7/27 որոշմամբ առաջարկում է Միծեռնակարկղի բարձունքի մոտ՝ Զանգվի վրա, կառուցել քաղաքային ձևի կամուրջ, որի նախագծային լայնությունը լինելու էր 31 մետր: Կամրջի նախագծման աշխատանքների համար նախատեսվում էր ծախսել 260 Հազ. ոււրլի<sup>1</sup>:

Կամրջի նախագծման աշխատանքները կատարվել է «Երբաղնախագծի» կողմից՝ ՀնԱՀ Գիտությունների ակադեմիայի Շինանյութերի և շինությունների ինստիտուտի մասնաճյուղում: Նախագծի հեղինակն է ճարտարապետ Վ.Փինալյանը, որին օգնել են՝ «Երբաղնախագծի» մասնագետներ Ա.Դուրզարյանը, Ա.Մազմանյանը և Մ.Գրիգորյանը:

Երբաղխորդի 1948թ. հուլիսի 20-ի թիվ 17/142 որոշմամբ Հաստատվում է կամրջի նախագծային աշխատանքը, ըստ որի՝ կամրջի բանուկ մասը կազմելու էր

26.4 մ., բարձրությունը 62 մ. և երկարությունը 250 մ.: Կամուրջը կառուցվելու էր բազալտից և բետոնից: Շինարարության արժեքը՝ 9760 Հազ. ոււրլի<sup>2</sup>:

ՀնԱՀ 1950թ. մարտի 13-ի թիվ 305 որոշմամբ Հաստատվում է կամրջի տեխնիկական նախագիծը և գլխավոր նախահաշիվը, ըստ որի նախատեսվում էր ծախսել 20137870 ոււրլի:

Ըստ տեխնիկական նախագծի, կամուրջն ունենալու էր հետևյալ ցուցանիշները. կամրջալին անցման ամբողջ երկարությունը կազմելու էր 2020մ., որից բուն կամուրջը՝ 270մ., լայն.՝ 26.2 մ., բարձր.՝ 60մ., ձախափնյա մուտքը՝ 1050մ., աջափնյա մուտքը՝ 700մ.: Կամուրջը լինելու էր երկաթբետոնյա, գետնային կամարածե թռիչքով, վերևի 103մ. երկարությամբ երթալինի մասով: Ձախափնյա մատուցներում կատարվելու էր 124 Հազ. մ<sup>3</sup>, իսկ աջափնյա մատուցներում՝ 29 Հազ. մ<sup>3</sup> հողային աշխատանքներ:

Նախագծային առաջադրանքի համաձայն կամրջի շինարարության համար անհրաժեշտ էր՝ անտառանյութ-գերան-5000մ<sup>3</sup>, ցեմենտ պորտլանդ-6800տ., ցեմենտ կրաքարային-800տ., երկաթյա ամրան կյոր, 8-16մ. - 400տ., երկաթյա ամրան կյոր, 20-30մ. - 800տ., տեսակավոր երկաթ - 250տ., պողպատե ճուղյակ (16-37մ.) - 50տ., պողպատե մետաղալար - 120տ.:

Կամրջի շինարարությունն իրականացնելու նպատակով, ՀնԱՀ նախարարների խորհրդի 1949թ. մայիսի 16-ի թիվ 513 որոշմամբ, հունիսի 1-ից կազմակերպվում է հատուկ շինարարական գրասենյակ: Կամրջի շինարարությունը պետք է ավարտվեր 1951թ. վերջին:

Կամրջի շինարարությունը սկսվեց 1949թ. կեսերից: Շինարարության ընթացքը մշտապես գտնվել է ՀնԱՀ նախարարների խորհրդի և Երբաղխորհրդի գործկոմի ուշադրության կենտրոնում: 1950թ. մայիսի 24-ի նիստում Երբաղխորհրդի գործկոմը, քննարկելով կամրջի շինարարության ընթացքը, գտնում է, որ բետոնապատման աշխատանքների որակը բավարար չէ և չեն պահպանվում այդ աշխատանքների տեխնիկական պայմանները: Ելնելով վերահիշյալից, հանձնարարվում է շինարարական պետ Ա.Ղամբարյանին թերությունների վերացման համար ձեռնարկել անհրաժեշտ մեթոդաչափեր: Երբաղխորհրդի գործկոմի 1951թ. հունիսի 26-ի թիվ 2/43 որոշմամբ, կամրջի շինարարությունն արագացնելու և ժամանակին չահագործելու նպատակով, խնդրվում է ՀնԱՀ նախարարների խորհրդին 1951թ. 1-ին կիսամյակում շինարարական աշխատանքների կազմակերպման համար հատկացնել լրացուցիչ 4 մլն. ոււրլի, 1447 տ. մետաղ, 2340տ. ցեմենտ, 2200 մ<sup>3</sup> անտառանյութ, ինչպես նաև կալանավոր բանվորների (կալանավորների ներգրավումը կամրջի շինարարության մեջ բացարձակում է աշխատուժի էժանություն ու անբավարարությունը-Դ.Ա.) թիվը հասցնել 800-ի<sup>3</sup>:

Արդյունքները չուտով զգացնել են տալիս: ՀնԱՀ նախարարների խորհրդի 1951թ. օգոստոսի 25-ի թիվ 830 որոշմամբ Զանգվի կամրջի շինարարական գրասենյակը, 1951թ. 1-ին կիսամյակում ձեռք բերած Հաջողությունների համար, պարգևատրվում է ՀնԱՀ նախարարների խորհրդի փոխանցյիլ Կարմիր դրոշով և 15000 ոււրլով:

Չնայած գործադրած բոլոր ջանքերին կամրջի չահագործման հանձնուժը 1951թ. ձախողվում է: Ծածր արտադրողականության պայմաններում բարձրանում է մեկ բանվորի հաշվով արտադրանքի ինքնարժեքը: Երբաղխորհրդի գործկոմի կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվում են ծրագրերի թերակատարման, հավելյալումների, խախտումների ու յուրացումների բազմաթիվ փաստեր, որոնց համար շինարարական պետ Ա.Ղամբարյանը և գլխավոր ինժեներ ինժեկյանը հեռացվում են աշխատանքից<sup>4</sup>:

Հարցը քննարկվում է ՀնԱՀ նախարարների խորհրդի նիստում և կամրջի չահագործման ժամկետը, 1952թ. հունիսի 3-ի թիվ 503 որոշմամբ, սահմանվում է 1952թ. տարեվերջը:

<sup>1</sup> Նույն տեղում, գ.222, թ.87-88:

<sup>2</sup> Նույն տեղում, ց.11, գ. 131, թ. 4-5:

<sup>3</sup> Նույն տեղում, ց.4, գ.2, թ.118-119:

<sup>4</sup> ՀԱԱ, Երեւանի մասնաճյուղ, ֆ.1, գ. 48, թ.16-17:

Սակայն կատարվում է անսպասելին: 1952թ. հուլիսի 4-ին տեղական ժամանակով ժամը 15<sup>00</sup>-ին, բնտնայցման աշխատանքների կատարման ժամանակ, փուլովում է կամրջակամարը, որի վրա աշխատում էին մարդիկ: Ձուկում են 47 հոգի, այդ թվում՝ 22 բանվոր եւ 25 կայանավոր, իսկ շատերն էլ ստանում են տարբեր ստիճանի մարմնական վնասվածքներ: Հայտնի են բոլոր զոհերի անձնական ավյակները<sup>1</sup>:

Կազմվում է կառավարական հանձնաժողով, Մոսկվայից հրավիրվում են հատուկ մասնագետներ վիժարի պատճառներն ու պատճառված նյութական վնասի չափերն ուսումնասիրելու նպատակով: Հանձնաժողովի գնահատմամբ վնասի չափը կազմել էր 985771 ուսույթի:<sup>2</sup>

Իսկ որո՞նք են կամրջակամարի փուլզման հիմնական պատճառները: Ըստ ԽՍՀՄ ճանապարհային խորհրդակցության նախարարության կամուրջորեստի նախագծավորողներուկտորական բյուրոյի պետ Ե.Ա.Սիդորովի եզրակացության, Ձանգվի կամրջի կարծր մետաղյա կամրջակամարի փուլզման անմիջական պատճառը մոնտաժային տարրերի հեղույսային միացումներում էլեկտրատեղացման, մոնտաժային տարրերի ելման շեղահեռակի երկրորդ անկյան, եռակցվող տարրերի երկրորդ երեսում եռակցման բացակայությունն է, ինչպես նաև շինարարական աշխատանքների նկատմամբ նորմալ կազմակերպված հեղինակային եւ տեխնիկական վերահսկողության բացակայությունը:<sup>3</sup> Նույն կարծիքին էր այդ նախարարության «Տրանսկամուրջնախագիծ» տրեստի ղլխավոր մասնագետ Աստախովը:<sup>4</sup>

Վիժարի հետեւանքների վերացումից հետո ՀեՍՀ նախարարների խորհրդի 1952թ. սեպտեմբերի 4-ի Բ-875 որոշմամբ վերսկսվում է կամրջի շինարարությունը եւ շահագործման հանձնման ժամկետ է սահմանվում 1953թ. վերջը: Սակայն կամրջի շինարարությունը ձգձգվում էր եւ երբախորհրդի 1955թ. մայիսի 21-ի 14/247 որոշմամբ կամրջի շահագործման հանձնման նոր ժամկետ է սահմանվում 1955թ. հոկտեմբերի 20-ը:<sup>5</sup>

Կամրջի շինարարության աշխատանքներն ավարտվեցին 1955թ. դեկտեմբերին: Այդ կապակցությամբ երբաղխորհուրդը ին 1955թ. դեկտեմբերի 22-ի թիվ 605 որոշմամբ, դիմելով ՀեՍՀ նախարարների խորհրդին, առաջարկեց կազմել Ձանգվի կամրջի շահագործման հանձնման եւ ընդունման կառավարական հանձնաժողով: Այն ստեղծվում է ՀեՍՀ նախարարների խորհրդի 1955թ. դեկտեմբերի 27-ի թիվ 781 կարգադրությամբ, որի կազմի մեջ ընդգրկվեցին՝ ՀեՍՀ Պետչինի նախագահ Ռ.Բ.Ազիզբեկյանը, երբաղխորհրդի գործկոմի նախագահ տեղակալ Ա.Պ.Օրսուդյանը, քաղաքային եւ դոլուրական շինարարության նախարարի տեղակալ Ս.Խ.Շահնազարյանը, շինանյութերի ու շինությունների ինստիտուտի ինժեներ Ա.Գ.Նազարովը եւ «Հայճարտնախագիծ» ինստիտուտի ղլխավոր ինժեներ Մ.Ս.Սահակյանը: Հանձնաժողովին հանձնարարվում էր մինչեւ 1956թ. հունվարի 15-ը ՀեՍՀ նախարարների խորհրդին ներկայացնել կամրջի շահագործման ընդունման պետական ակտը:<sup>6</sup>

Ձանգվի Մեծ կամրջի ղլխավոր թոճչքի երկարությունը 110մ. է՝ ծածկված կարծր արմատուրայից կառուցված երկու երկաթբետոնե կամարներով: Նմանատիպ կամրջաշինությունը ժամանակին սակավ կիրառելի էր ինչպես մեզ մոտ, այնպես էլ արտասահմանում: Կարծր արմատուրայի կիրառումն արդարացվում էր մետաղյա կամարակալների բացակայությամբ: 110մ. երկարությամբ կամարաձև թոճչքով երկաթբետոնե կամրջի կառուցումը կարծր արմատուրայի կիրառմամբ, ըստ մասնագետների (Սիդորով Ե.Ա., Աստախով Գ.Ա., Խլերնիկով Ե.Լ.), հանդիսանում էր խորհրդային կամրջաշինության մեծագույն նվաճումներից մեկը եւ խոշոր քայլ էր երկաթբետոնե կամրջաշինության բնագավառում նոր կոնստրուկտորական լուծումներ որոնելու ճանապարհին:<sup>7</sup>

<sup>1</sup> Նույն տեղում, ց.11, գ.189, թ.60-73:

<sup>2</sup> Նույն տեղում, թ.75-76:

<sup>3</sup> Նույն տեղում, թ.16-17:

<sup>4</sup> Նույն տեղում, թ.24:

<sup>5</sup> Նույն տեղում, ց.4, գ.146, թ.127:

<sup>6</sup> ՀԱԱ, ֆ.113, ց.61, գ.779, թ.1-7:

<sup>7</sup> ՀԱԱ, Երեւանի մասնաճյուղ, ֆ.1, ց.11, գ.189, թ.9:

Ձեռյած կամրջի խիստ անհրաժեշտութանը, ցավոք ժողովուրդը թանկ վճարեց այդ կառույցի համար՝ 47 կյանք:

## Գորվարդ Աբխուզովնյան

ՀԱԱ, Երեւանի քաղաքային մասնաճյուղի վարիչ

## Աճձակաւ ֆուկը

### ՔԱՐԻ ԱՐԴԾՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀՀ նախկին գիտատեխնիկական արխիվում պահպանվում են անվանի գիտնականների եւ ճարտարապետների անձնական ֆոնդեր, որոնց շարքում իր ուրույն տեղն ունի ճարտարապետ եւ Հասարակական գործիչ Դավիթ Գեւորգի Չիլիսեբ (Չիլյան): Դ.Չիլիսեի անձնական արխիվը (ցրտն վիճակում) 1990թ. Մոսկվայից, ճարտարապետ Էդմոնդ Տիգրանյանի խորհրդով եւ արխիվի տնօրենի անմիջական մասնակցությամբ տեղափոխվեց պետարխիվ: Տեղափոխելուց հետո այն համալրագվեց, ենթարկվեց գիտատեխնիկական մշակման, որի արդյունքում առանձնացվեց մշտական պահպանման 424 գործ:

Յոնդը պարունակում է ինչպես գիտատեղծագործական, այնպես էլ կենսագրական բնույթի նյութեր, յուսակարներ եւ այլն: Փաստաթղթերը ընդգրկում են 1893-1912թթ. եւ 1918-1972թթ.:

Դ.Չիլիսեի մասնագիտական գործունեությունը արտացոլող փաստաթղթերի մեծ մասը՝ շինարարական օբյեկտների գծագրերը, սխեմաները, աղյուսակները, յուսակարները վերաբերում են Մոսկվայում, Լենինականում, Թբիլիսիում, Դոնի Ռոստովում, Նովոսիբիրսկում եւ այլուր նրա նախագծած շենքերին ու շինություններին:

Արժեքավոր են անտիկ շրջանի հուշարձանների վերաբերյալ նրա գիտական հետազոտությունները:

Ֆոնդում առկա են նրա ապագա գրքի՝ «Ճարտարապետական արվեստի թեորիա»-ի վերաբերյալ նյութեր:

Դ-Ձիպիլեւ ծնվել է 1879 թ. սեպտեմբերի 22-ին, Դոնի Ռոստով քաղաքում: Ավարտելով տեղի ուսումնարանը՝ նա ընդունվում է Մանկա-Պետերբուրգի քաղաքացիական ինժեներների ինստիտուտը: Գործազույներին ակտիվ մասնակցելու պատճառով, 1905թ. նա Հեռացվում է ինստիտուտից:

Այն ժամանակ Պետերբուրգում լույս էին տեսնում բազմաթիվ երգիծական ամսագրեր: Ձիպիլեւի երգիծական նկարները տպագրվում էին «Ազատ ծիծաղ», «Ազատություն», «Մոլաշրիշ» և «Անշար» ամսագրերում «Փա-Սոլ» կեղծ անվամբ: Վերջինիս խմբագիրը Դ.Ձիպիլեւն էր: Այնուհետև ընդունվելով Ռիգայի պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետական ֆակուլտետը, այն գերազանցությամբ ավարտում է 1909թ.: ստանալով ինժեներ-ճարտարապետի կոչում: Ինստիտուտն ավարտելուց հետո Դ.Ձիպիլեւ վերադառնում է Պետերբուրգ և աշխատանքի է անցնում «Միլիտոց ու Գերասիմով» շինարարական գրասենյակում որպես ճարտարապետ ճարտարապետ:

1910թ. առողջության վատացման պատճառով նա տեղափոխվում է Թիֆլիս և գրադվում մասնավոր պրակտիկայով, որից հետո, աշխատանքի է անցնում Թիֆլիսի քաղաքային վարչություն շինարարական բաժնում՝ որպես ճարտարապետ և աշխատում է մինչև 1918թ.:

1917թ. գեկտեմբերին Դ.Ձիպիլեւ ընտրվում է քաղաքային ծառայության աշխատողների միություն առաջին նախագահ:

Քաղաքական պատճառանքով Դ.Ձիպիլեւ ստիպված թողնց այդ աշխատանքը: 1918-1921թթ. քաղաքացիական պատերազմի ընթացքում էր մասնավոր պրակտիկայով: Վրաստանի խորհրդայնացումից հետո, 1921թ. Վրաստանի ժողնտնտեսության բարձրագույն խորհրդի առաջարկով նա զբաղեցնում է Վրաստանի պետական կառույցների կոմիտեին կից վարչություն անդամի, նրա նախագահի տեղակալի և տեխնիկական տնօրենի պաշտոնը, որտեղ անմիջականորեն զեկավարում էր ճարտարապետական հաստիակագծման և շինանյութերի բաժինների աշխատանքը: Նրա ղեկավարությամբ վերականգնվեց Վրաստանի շինանյութերի արդյունաբերությունը: Ճարտարապետական հաստիակագծման բաժինը նրա ղեկավարությամբ կազմեց Գործի քաղաքի հաստիակագծման նախագիծը, Թբիլիսիի քաղաքաբամերձ Վակե ավանի տեղամասի հաստիակագիծը և բնակելի տների նախագիծը:

Հիշյալ կոմիտեի լուծարուից հետո, 1923-1924թթ. Դ.Ձիպիլեւ զբաղեցնում է «Հարավ-Արևելք» երկրամասային գրասենյակում լիազորի և գլխավոր ճարտարապետի պաշտոնը: 1924թ. նա հրավիրվում է աշխատելու «Ստանդարտ» բաժնետիրական ընկերության Անդրկովկասյան բաժանմունքի (Բ.Թրիլիսի) գրասենյակում՝ որպես վստահված անձ, որտեղ ղեկավարում է Հայաստանի, Վրաստանի, Աբգրբջանի շինարարության գծով շինարարական գրասենյակը և նախագծային արվեստանոցը:

1925թ. որպես գլխավոր ճարտարապետ՝ նա աշխատում է Թբիլիսիի քաղաքագիծային կոմունալ բաժնում:

1926թ. ՀնՍՀ կից երկրաշարժից հետո ժողկոմխորհին Լեհինականի վերականգնման հանրապետական կոմիտեի առաջարկով Դ.Ձիպիլեւ նշանակվում է այդ աշխատանքների ղեկավար, ինչպես նաև այդ գծով ստեղծված նախագծային արվեստանոցի գլխավոր ճարտարապետ: Որպես քաղաքի ճարտարապետ՝ նրա աշխատանքն էր՝ քաղաքի վերահաստիակագծումը, քաղաքի և շրջակայքի 10 գյուղերի քանդված տների վերականգնումը, ինչպես նաև այդ շրջանի հասարակական ու բնակելի շենքերի նախագծումը:

Հետաքրքիր են Լեհինականի և շրջակա գյուղերի վերականգնման ժամանակ նրա գործունեությունը արտացոլող փաստաթղթերը:

1927թ. Լեհինականի վերականգնման հանրապետական կոմիտեին ուղղված զեկուցագրերում ու բացատրագրերում Դ.Ձիպիլեւ նշում է երկրաշարժի հասցրած ավերածություններն ու վնասներն և այն միջոցները, որոնք անհրաժեշտ էին գրանց վերականգնելու համար: Ըստ նրա, կառուցվող շենքերը երկու հարկից ավելին չպետք է լինին, մինչդեռ հետագա տարիներին, խախտելով այդ կանոնները, կառուցվեցին բազմահարկ շենքեր:

Մեծ և անգնահատելի է Դ.Ձիպիլեւի դերը Արթիկ-տուֆի հետազոտության և արդյունաբերական արդյունահանման բնագավառում: Փոնդում ամենից ծավալայինը Արթիկ-տուֆին վերաբերվող նյութերն են:

Լեհինականի և շրջակայքի վերականգնողական աշխատանքների շրջանում Դ.Ձիպիլեւ ՀնՍՀ ժողկոմխորհի առջև բարձրացրեց Արթիկ-տուֆի պրոբլեմը, որի հանրավայրը, պաշարները և ֆիզիկա-մեխանիկական հատկությունները իր կողմից հետազոտվել էին դեռևս 1914թ.:

1926-1927թթ., հաստատելու համար տուֆ քարի բազմակողմ հատկություններն ու բարձր որակը, Հայաստանի կառավարության թույլտվությամբ, նա Լեհինականում կառուցում է փորձնական տուն: Դրական արդյունքի հասնելով՝ կիրառական հանրաբանության և կառուցվածքների համամիութենական ինստիտուտներում գիտահետազոտական աշխատանքներ անցկացնելու նպատակով Դ.Ձիպիլեւ 1927թ. գործուղվեց Մոսկվա: Այստեղ կտարած աշխատանքների վերլուծությունը նրան հիմք չտվեց բարձրացնել Արթիկ-տուֆ համամիութենական մասշտաբի ձեռնարկություն կառուցելու հարցը: Այն ընդունեց իՍՀՄ ժողտնտեսության Գերագույն խորհրդին կից շինարարության կոմիտեի կողմից: Արթիկ-տուֆի նշանակության ճանաչման ու գնահատումից հետո Հայաստանի կառավարությունը նրան իրավունք տվեց հետագա գործողությունների:

ԻՍՀՄ Աշխատանքի և պաշտպանության խորհրդին, իՍՀՄ շինարարության կոմիտեին, կառուցվածքների գիտահետազոտական և կիրառական հանրաբանության ինստիտուտներին և այլ մարմիններին ուղղված իր զեկուցագրերում, նա ուշադրություն էր հրավիրում Արթիկ-տուֆի արտակարգ շինարարական որակի վրա և առաջարկում միութենական մաստատով կազմակերպել քարի արդյունաբերություն: Կառուցվածքների ինստիտուտը միջոցեց իՍՀՄ ժողտնտեսության բարձրագույն խորհրդին՝ միջոցներ հատկացնել Արթիկ-տուֆի արտադրատեխնիկական և տնտեսական հետազոտությունների ու Լեհինական-Արթիկ երկավառու, ինչպես նաև Մոսկվայում փորձնական տներ կառուցելու համար:

Միաժամանակ, տուֆի պաշարների հզորությունը որոշելու համար, պայմանավորվածություն ձեռք բերվեց կազմակերպել երկրաբանական արշավախումբ և ներկայացնել վերջնական եզրակացություն հանրավայրի արդյունաբերական շահագործման վերաբերյալ: Դա կատարվեց 1928թ. նրա անմիջական մասնակցությամբ: Արդյունքում որոշվեց իՍՀՄ ժողտնտեսության բարձրագույն խորհրդին կից Դ.Ձիպիլեւի անմիջական մասնակցությամբ կազմակերպել միութենական մասշտաբի արդյունաբերական ձեռնարկություն: ԻՍՀՄ ժողտնտեսության բարձրագույն խորհրդին կից շինարարության կոմիտեն կազմակերպեց ամբողջ ձեռնարկության նախագծման գործը:

Արթիկ-տուֆին իր պրակտիկ կիրառումը գտավ նաև Մոսկվայի Կիրովի փողոցում թեթև արդյունաբերության ժողկոմատի «Գրբի տուն» շենքերի, ինչպես նաև բնակելի այլ շենքերի կառուցման ժամանակ: Դրանից հետո նրա խորհրդով, Արթիկ-տուֆը կիրառվեց իՍՀՄ կենտրոնական Միտնոգում տնտեսական վարչության հանգստյան տան և իՍՀՄ կենտրոնական Սև ծովյան առափնյա տիրույթներում շենքերի կառուցման ժամանակ:

Արթիկ-տուֆի ձեռնարկությունը հանրապետական ենթակայությանը հանձնելուց հետո Դ.Ձիպիլեւ գարձավ այդ ձեռնարկության լիազոր-ներկայացուցիչը իՍՀՄ ժողտնտեսության գերագույն խորհրդի շինարարության կոմիտեում:

Նրա նախաձեռնությամբ Արթիկի հանքավայրը հետազոտեցին խոշոր երկրաբանների՝ Պ.Լերդեյե, Բ.Ջալեկիլը և Վ.Պետրովը, որոնք բարձր գնահատեցին հանքավայրը: 1928-1929թթ. Վ.Միլանչին-Պիսարեի գլխավորությամբ կիրառական հանրաբանության ինստիտուտի արշավախումբն անցկացրեց հանքավայրի երկրաբանական հետախուզում և Հայաստանից այդ արդյունավետ շինարարի հսկայական պաշարներ:

Նորաստեղծ Արթիկ-տուֆ ձեռնարկությունում բարը սկզբում կորվում էր պողպատե ճապաններով, իսկ 1929թ. երբ սկսվեց նրա գնեղամաշյան արդյունահանումն, այդ աշխատանքները մեքենայացվեցին:

Արթիկ-տուֆի զանգվածային արդյունահանման Հետ կապված, Դ.Ձիլիեւը բարձրացրեց Լենինական-Արթիկ երկաթուղու կառուցման հարցը, որը հնարավորություն կտար կազմակերպելու տուֆ քարի ավելի լայն օգտագործումն ոչ միայն Հանրապետությունում այլև նրա սահմաններից դուրս:

Արթիկ-տուֆի պաշարների հետազոտման եւ արդյունաբերական շահավորման աշխատանքի կազմակերպման համար Դ.Ձիլիեւը պարզեցատրվեց ՀեՄՀ ժողովուրդի հիմնով:

Մոսկվայում շինարարության ու տեխնիկական քարի գծով Հանրապետության ինտիտուտի գիտական՝ «Հանքարանձակ հուժք» ամսագրում, 1930թ. լույս է տեսնում Դ.Ձիլիեւի «Արթիկյան տուֆի լավաները», իսկ 1932թ.՝ «Տուֆային լավաները եւ կոնստրուկցիաներ նրանցից» աշխատությունները:

Արթիկ-տուֆի 40-ամյակի տոնակատարություն ժամանակ Դ.Ձիլիեւը պարզեցատրվեց ՀեՄՀ գերագույն խորհրդի պատվոգրով:

1969թ. դեկտեմբերի 23-ին հեՄՀ Ծարտարապետների միությունը Մոսկվայում կազմակերպեց նրա մեծարումը:

Դ.Ձիլիեւը իր մահանազոտն կնքեց 90 տարեկան Հասակում՝ 1969թ.:

Նրա անունը լավ Հայտնի է ճարտարապետների այսպ անդրին, շինարարներին եւ շինանյութերի արդյունաբերության աշխատողներին, քանի որ Հայաստանում շինքարի արդյունաբերության սկզբնավորողն էր:

**Գառնիկ Մկրտչյան**  
ՀԱԱ գլխավոր արխիվագետ

**«ՆԱՄԱԿՆԵՐ՝ ՏԱՐԻՆԵՐԻ ՀԵՌՎԻՑ»  
(ԳՈՒՐԳԵՆ ՄԱՀԱՐՈՒ ԾՆՆԳՑԱՆ 100-ԱՄԾԱԿԻ ԱՌԹՎ)**

Այս տարի լրանում է բանաստեղծ, արձակագիր Գուրգեն Մահարու ծննդյան 100-ամյակը:

Հորեկյանական այս տարիքը, թերեւս առիթ էր եւս մեկ անգամ թերթելու Հայաստանի ազգային արխիվի անձնական արխիվային ֆոնդերում պահպանվող Գ.Մահարու նամակները եւ գրանցից մի քանիսը ներկայացնելու «Բանբեր»-ի ընթերցողների ուշադրությանը:

Հայ գրականության երկու խոշոր ներկայացուցիչների՝ Եղիշե Չարենցի ու Ակսել Բակունցի ժամանակակիցն էր Մահարին: Ապրել ու ստեղծագործել նման մեծերի կողքին՝ ոչ միայն չկորցնել ինքնությունը, այլև նոր շունչ ու նոր երանգ հաղորդել այդ շրջանի Հայ գրականությանը, կարող էր միայն առանձնահատուկ տաղանդով օժտված գրողը, որպիսին Գուրգեն Մահարին էր:

Նամակներից առաջինը «Մովսեսական Վրաստան» թերթի խմբագիր, լրագրող, թատերագետ Աշոտ Հալաբախյանին հասցեագրված 1953 թվի հոկտեմբերի 16-ի նամակն է, որ գրչակից ընկերը՝ Բակունցի նկատմամբ ջերմ ու նվիրված սիրտ արտահայտությունն է:

Ուշագրավ է, լրագրող, ծագումով վանեցի, Հարություն Զրաղացյանյանի եւ Գ. Մահարու նամակագրությունը վերջինս «Այլովոյ այգեստաններ» վեպի շուրջ:

Վյանքի նույն ճամփեքով Վանից Երեւան հասած այս մարդկանցզբած ամեն մի սողի մեջ անհուն կարոտ կա, անփարատ վիշտ, ափսոսանք ու ցավ, «կորուսյալ երկրի»՝ մորմուք, որն էլ Հենց հարազատացրել էր նրանց՝ իրենց ծագումով հպարտ,

Հայրենի Հողին ու Զրին սիրահարված տոհմիկ վանեցիներին, որ մինչեւ մահ Հավասարեմ մտացին իրենց սիրուն ...

Մի անդադարի ոգևորություն ու հպարտություն էր պատկ ըլորը իսկական վանեցիներին այն մտքից, որ վերջապես լույս աշխարհ պետի գա ամբողջական ու վաղուց սպասված մի վեպ, մի գիրք՝ սիրատուն ծննդավայրի՝ Վանի մասին:

Ինքը՝ Գ. Մահարին, իր վեպի մասին ասել է. «Յղել է մի քաղաք-բազմահարք բնակիչներով, որոնք սիրել են իրենց ծննդավայրի Հողն ու Զուրը, հնամենի վանքերն ու հուշարձանները: Ու մի օր ավերվել է այդ նախրյան կախարական ոտանը, իսկ նրա խաղաղասեր ժողովուրդը ցրվել է աշխարհով մեկ: Այս եւս եւ երգել, երգել ի խորց սրտի...»:

Տարիներն անցնում էին, վեպը հրատարակված տեսնելու ոգևորությունն ու հույսը չէր նվազում: Մակայն հրապարակվող վերջին նամակից, որ թվագրված է 2 հունվարի 1960թ., միայն 6 տարի անց՝ 1966-ին լույս տեսավ Գ. Մահարու ստեղծագործության գլուխգործոցը՝ «Այլովոյ Այգեստաններ» վեպը:

**Վարդիթեր Մանգասարյան**  
ՀԱԱ բաժնի վարիչ

N 1

[Ոչ ուշ քան 4 հուլիսի 1958թ.]  
[Երեւան]

Հարգելի ընկեր Գուրգեն Մահարի,  
Ձեզ գրում է Ձեր հայրենակիցներից մեկը, որը Ձեզ լավ է ճանաչում:  
Հալմանարք Երեւանում գուք ինձ էլ տեսած լինեք, բայց մենք անձամբ իրոր ծանոթ չենք:

«Գրական թերթ»-ի անցյալ տարվա վերջին համարում (31) 12 1957թ., N 49) տպված էր. ի թիվս ուրիշների, նաև Ձեր տված ինֆորմացիան թե ինչի վրա եք աշխատում: Ինձ շատ հուզեց Ձեր՝ Վանի կյանքից գրելիք «Ռանձայներ այրուց» վեպի մասին հաղորդումը: Այս առիթով ես պատրաստեցի իմ խոհերի եւ մտորումների մասին ընդարձակ նամակ, բայց ինչ-ինչ պատճառներով չկարողացա հանձնել Ձեզ: Իսկ երբ ի վիճակի եղա, գուք արդեն Երեւանից մեկնել էիք: մեկ ամսվա ընթացքում ընկ. Վաղարշակ Նորենցի եւ Ձեր ասնը բնակվող Ծահրիկյանի մոր միջոցով (Իհարկե հետախոսային կանչով միայն) հազիվ իմացա Ձեր՝ Մոսկվայի Հասցեն: Բացիկով ուզում եմ Ձեզ նեղություն պատճառել, իմանալու համար թե Ձեր հասցեն, որտեղ Դուք այժմ ապրում եք, որքան հուսալի ե, հարատևության իմաստով իհարկե, որպեսզի կարողանամ այդ նամակը ուղարկել Ձեզ: Նեղում եմ երկու տողով պատասխանեք:

Ցանկանում եմ Ձեզ առողջություն եւ լիակատար ապաքինում:  
Հարգանքներով՝ Հարություն Զրաղացյանյան:

ՀԱԱ, Ֆ.Մ- 117, ց. 1, գ. 19, թ. 1: Ինքնագիր:

N 2

4 հուլիսի 1958թ.  
[Մոսկվա]

Միևիկ Հարություն,  
Շնորհակալություն բացիկից համար:  
Իմ ներկա հասցեն (հիվանդանոց, ուր բուժվում եմ) հուսալի չէ, որովհետև ամեն օր կարող եմ գուրս գրել, որից հետո պետի գնամ Լիտվա, Վրլյույուս, իսկ սեպտեմբերին՝ Երեւան:

Ավիկի նպատակահարմար է, որ նամակդ պիտը պահես մուսանդարալում մինչեւ իմ վերադարձը: Պիտի ասեմ, որ անձանթ (եւ ծանոթ) վանեցիներից էլի նամակներ եմ ստացել այդ կապկցությունը, մի բան, որ ինձ անչափ ուրախացնում է եւ ոգևորում: Այս աշնան եւ ձմեռվա ընթացքում գիրքը պատրաստ պետեք է լինի, եթե առողջությունս ների: Պիտ գրվի այդ գիրքը, ես

պարտք եմ ոչ միայն մեռածներին, այլև կենդանի վանեցիներին, որոնց վերաբերմունքը չի կարող ինձ չողուցնել:  
 Ներքի ձեռագրիս, գրում եմ պառկած:  
 Ջերմորեն սեղմում եմ ձեռքդ:  
 Ջրաղացպանյաններից հիշում եմ Գուրգեն Ջրաղացպանյանին, Վանից, լավ ձայն ուներ եւ ասրում էր Կենտրոնական վարժարանի դեմ, «Կրակե ջրաղաց»-ի մաս:

Ինչեւէ : Ողջույն երեւանին:  
 Բարեւներով՝ Գ. Մահարի:

ՀԱԱ, ՖՄ- 117, ց. 1, գ. 19, թ. 3 : Ինքնագիր:

N 3

9 Հոկտեմբերի 1958թ.  
 [Երեւան]

Սիրելի Երվեր Մահարի.

Մոսկվայից Ձեզ գրիված երկտողին պատասխանել ինձ չլիճակվեց: Կարծում եմ, որ դա Ձեզ չի վերադրի, քանի որ ըստ Ձեր գրածի, ինձ առիթ չպիտի ներայանար ուղարկելու:

Հույսով եմ, որ այժմ ապաքինվել եք եւ ի վիճակի եք նվիրվելու ստեղծագործական աշխատանքներին:

Ձեր խոստումը, թե «Պիտի գրվի այս գիրքը, ես պարտք եմ ոչ միայն մեռածներին, այլև կենդանի վանեցիների եւ ...» լցնում է մեր սիրու վանեցիական Հպարտությունը, որ կա մի արվեստագետ, որ ոչ միայն Հասկանում է վանեցու կարտուր, այլև պարտքի գիտակցությունը ու ստեղծագործական ավյունով «կուժ մը ջուր» կուտա նրա պապակ սրտին:

Ընկեր Մահարի, շուտ-շուտ գրեք, շատ գրեք, լավը գրեք, լավագույնը գրեք, բոլոր վանեցի գրողներից, քանի որ ուրիշին չենք տեսնում այդ ուղղությամբ գրիչը ձեռքին:

Ամենալավ ցանկություններով՝ Հ. Ջրաղացպանյան:

ՀԱԱ, ՖՄ- 117, ց. 1, գ. 19, թ. 2: Ինքնագիր:

N 4

16 Հոկտեմբերի 1959թ.  
 Երեւան

Սիրելի Աշոտ

Ենթադրում եմ, որ Ակսելի 60-ամյակին պիտի արձագանքի «Սովետական Վրաստան»-ը, որի Համար եմ ուղարկում մի բանաստեղծություն նվիրված նրա սիրելի Հրեատակին: Հորեյանը նշանակված է սույն ամսի 24-ին: Հրավիրված են Հյուրեր Վրաստանից, Ազրբեջանից եւ Մոսկվայից (Կ. Ջելիսկի եւ Մ. Շահինյան): Բացի Երեւանից, Հանդիսավոր նիստեր պիտի ունենան Լենինականում, Գորիսում, Ղափանում, Կիրովականում եւ այլուր: «Մով. Հայաստան», «Վոմուերիտ», «Գրական թերթ», «Ազանդարդ», «Երեւան» թերթերը լույս են տեսնելու Բակունցյան էջերով: Երեւանում փողոց՝ Բակունցի անվան, Գորիսում Հուշարձան, դպրոց նրա անվան եւ այլն, եւ այլն: Ապրում եմ ամբողջ էությունս նրա Հիշողությամբ եւ հիշողություններով: Խեղճ, պայծառ ու վեհ Բակունց...

Ես... քեֆս լավ է, Հայս վատ, կամ ընդհակառակը: Մի քիչ ցավեր գիշերային, սակայն աշխատում եմ անձնատուր չլինել եւ մանավանդ աշխատում եմ... աշխատել:

Չափածոյիս Հատորակը լույս է տեսնում, նույնը եւ արձակը՝ Մոսկվայում, ուսուրբեր լեզվով: Աշխատում եմ վեպիս վրա, սակայն ինչ էլ անենք չենք վերագործի Բակունցին...

Մերոնք լավ են, բարեւում են: Ջերմ բարեւներ սիրելի ընտանիքիդ եւ Քեզ, սիրելի Աշոտ:

Ողջույն տղաներին եւ Թիֆլիսին:

ՀԱԱ, ՖՄ- 420, ց. 1, գ. 103, թթ. 3-4: Ինքնագիր:

**ՔՈ՝ Գ. Մահարի**

N 5

2 Հունվարի 1960թ.  
 Երեւան

Սիրելի Մահարի

Շնորհավոր 1960 թվականը:

Կցանկանամ քեզ առողջություն եւ ուժերի լարում (բայց ոչ ի վնաս առողջության) եզրափակիչ տարի գարձնելու Համար քո ավանդ խոստումներին: Այլևս չենք (կասեմ Հոգնակի՝ ընթերցողների անունից) ների քեզ, չենք Հանդուրժի այրելու մեր բեկոր Հոգիները «Այրվող այգեստաններ»-ի բացերի մեջ: Ուզում ենք տեսնել կենդանի Վանը, կանաչ Վանը, Վանը մրգահասին՝ թեկուզ սողաթիթներում ուշաթափվող մրգերով, կամ երբ «Մեծարեցին է շրջում (մեր շուրջը ու սեր է Հուշում Հողի շուշուն ...)», ուզում ենք շնչել Վանը մեր վառ օրերի հրացուցով ու լույսով՝ մահարիական ինքնատիպ արձակի լայնահուն պոեզիայով: Ձէ՞ որ ինչպես Լեմուելն է ասում, դու «արձակում էլ պոետ ես»: Եվ իրավացի ես դու. «Եթե պոեզիայից ձեռք ես քաշում, Հապա նա (պոեզիան) քեզանից ձեռք չի քաշում»: Ոչինչ, ես կասեի քո բանաստեղծական Հոգին ու շունչը արձակով, եթե ոչ այնչի, գեթ պակաս իրեն չի դրսևորի:

Տարիները, ճիշտ է, շուտ են թռչում, բայց թույլ չեն տա քեզ «էժան պրծնելու», պիտի միշտ անհանգստացնենք քեզ: Լիաճույս լինենք, որ 61 թվականի Համար արվելիք քո ինտերվյուի մեջ ոչ թե կկարգանք «Այրվող այգեստաններ» մասին (երբորդ ինտերվյույն արդեն բավական է), այլ այդ գործը նույն թվականին կունենանք մեր սեղանների վրա, իսկ քո նոր ինտերվյուները կուզենանք կարգալ նոր մտահղացումների մասին:

Հաջողություններ ցանկանք քեզ, իսկ մեզ՝ ընթերցողներին, մեր ակնկալիքների իրականացում:

Ջերմ բարեւներով՝ Հարություն Ջրաղացպանյան:

ՀԱԱ, ՖՄ- 117, ց. 1, գ. 19, թ. 7: Ինքնագիր:

**Բ ՈՎ Ա Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Ց ՈՒ Ն**

ՀՀ կառավարության որոշումը Հայաստանի ազգային արխիվ ստեղծելու եւ կանոնադրությունը Հաստատելու մասին ..... 3

**ՓԱԱՍՍԱԹՂԹԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ**

Գեներալ Խուրդյան	-	Նորահայտ վավերագրեր ՀԹԳՆանկեցություն չիմնադրելի (Քրիստափոր Միքայելյան, Սիմոն Ջավարյան, Թոստոմ) 1890-ական թվականների գործունեության մասին .....	15
Անուշավան Ջաքարյան	-	Փաստաթուղթ օսմանյան խորհրդարանի անդամներ Գ.Ջաքարի եւ Վ.Արիստակյանի եղերական սպանություն մասին .....	27
Ալբերտ Կիրյան	-	Պոլսում Հայկական պատվիրակության քարտուղար Հակոբ Քոչարյանի նամակները Բեռլինում Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ Հ.Օհանջանյանին՝ պատվիրակության Հայաստան գործունեության եւ տեղի ունեցած քաղաքական	

Վլադիմիր Ղազարյան	- անցուղարձերի մասին ..... - Հայաստանի Հանրապետության իշխանութ- յունը Լեռնային Ղարաբաղում եւ Ջանգելու- րում .....	32 38
Վլադիմիր Ղազարյան Համլետ Գեորգյան Սոնյա Միրզոյան	- Դաշնակցության կողմից Փետրվարյան ապս- տամբության ղեկավարման հարցի շուրջ (նո- րահայտ վավերագիր) .....	47
Արարատ Սարգսյան	- Միացյալ Հայաստանի պատվիրակության ներկայացուցիչ Միհրան Տամատյանի ղեկու- ցազերը Կիլիկիայի ներքաղաքական գրու- յան մասին .....	51
Մարտտ Սարգսյան	- Հայաստանի օգնության կոմիտեի հիմնադիր փաստաթղթերը .....	70
Մարինե Մարտիրոսյան Ռոբերտ Բաղդասարյան	- Հայ կինեմատոգրաֆիայի առաջին քայլերը (պեակինոյի ստեղծման 80-ամյակը) .....	81
Արմեն Բաղդասյան	- Էջեր գաղանձակությունից գործիչ Կարեն Միքայելյանի նամակագրությունից (1930- 1936թթ.) .....	102
Գագիկ Եթիմյան	- Լիբանանահայ գաղթօջախն ու փոխհարաբե- րությունները Խորհրդային Հայաստանի հետ. 1945-1985թթ. ....	113
Ամատունի Վերաբյան	- Կոմկուսի քաղաքականությունը գրականու- թյան եւ լեզվագիտության ասպարեզներում հետպատերազմյան տարիներին .....	146
	- Հանդիպումներ Խորհրդային պետության ղե- կավարների հետ .....	156

**ՀՈԴՎԱԾՆԵՐ**

Հովհաննես Ջատիկյան	- Կարինի նահանգի Քղիի գավառակը 19-րդ դարի երկրորդ կեսին .....	174
Արամ Խաչատրյան	- Ֆրանսիական Հյուպատոսությունների գոր- ծունեություններն Արեւմտյան Հայաստանում 1900-1908թթ. ....	180
Գեղամ Հովհաննիսյան	- Վերակազմյալ հնչակյան կուսակցությունը առաջին համաշխարհային պատերազմի տա- րիներին .....	186
Ավագ Հարությունյան	- 1919թ. մայիսի 28-ի Միացյալ Հայաստանի ակտը Հայ քաղաքական մտքի գնահատմամբ .....	194
Զավեն Գրիգորյան	- Յակով Զարոբյանի դերը հայոց մեծ եղեռնի 50-ամյակը Խորհրդային Հայաստանում նշե- լու եւ հայրենագրություն կազմակերպման գործում .....	202
Անատոլի Ավագյան	- Կատարողական վարույթը Խորհրդային Հա- յաստանում .....	206

**ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ**

Ալբերտ Կիրիմյան	- Արևիվային փաստաթղթերի պահպանվածու- թյան խնդիրները ՀՀ քրեական օրենսգրքում .....	214
Էմմա Հովսեփյան	- Խորհրդային ժամանակահատվածի վերաբե- րյալ սոցիալ-իրավական հարցումների բնույ- թի եւ դրանց կատարման համար ստեղծվող սեղեկատու-որոնողական համակարգի մասին .....	219

Սոս Մարուքյան	- Փաստաթղթեր անձակագմի վերաբերյալ. դրանց ընտրության եւ պահպանության ապահովման հիմնախնդիրներն ու լուծման ուղիները .....	224
Դորվարդ Աբիսողոմոսյան	- Հրազդանի մեծ կամուրջ .....	227

**ԱՆՁՆԱԿԱՆ ՖՈՆԴԵՐ**

Գաննիկ Մկրտչյան	- Քարի արդյունաբերության հիմնադիրը Հայաստանում .....	230
Վարդիթեր Մանգասարյան	- Նամակներ՝ տարիների հեռվից (Գուրգեն Մահարու ծննդյան 100-ամյակի առթիվ) .....	233

**Ի գիտություն հեղինակների եւ ընթերցողների**

«Բանբեր Հայաստանի արխիվների» գիտագործնական հանդեսն ընդգրկված է ԲՈՀ-ի կողմից հաստատված «Դոկտորական եւ թեկնածու-ական ատենախոսությունների արդյունքների հրատարակման համար ընդունելի ամսագրերի ցանկում»:

Հեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված աղբյուրները:  
Հեղինակները պատասխանատու են հոդվածներում բերվող փաստերի հավաստիության համար:  
Հոդվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող հապավում-ները:

Խմբագրության հասցեն՝ Երևան-33, Հրաչյա Քոչարի 5, հեռ. 225-355  
Հանդեսը գրանցված է ՀՀ արդարադատության նախարարությունում:  
Գրանցման վկայական N 01ՄՊ000164:  
Հիմնադիր՝ Հայ արևելագետների հասարակական կազմակերպություն:  
Ստորագրված է տպագրության 2003թ. օգոստոսի 15-ին:  
Չափեր 70x100<sup>1/16</sup>: Տպաքանակը՝ 300: Տարածվում է անվճար:

«Լույսաս» ՍՊԸ տպարան: Երևան, Վ.Վաղարշյան 12 «Ա»: